


ԴԱԿԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ, ՆԱՐԻՆԵ ՀԵԲԵԲՅԱՆ

# ՄԱՅՐԵՆԻ

3



ԳԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ, ՆԱՐԻՆԵ ՀԵՐԵՐՅԱՆ

# ՄԱՅՐԵՆԻ

3



Նկարիչ՝ Սոսաննա Այվազյան




ԷՌԻԹ ՊՐԻՆ  
ԽՈՒՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ, 2008

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության  
նախարարության կողմից

ՀՏԴ 373.167.1:809.198.(075)  
ԳՄԴ 81.2 Հ գ72  
Գ 697

Գ 697 Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն.  
Մայրենի 3: Հանրակրթական դպրոցի դասագիրք.-  
Եր.: Էդիթ Պրինտ, 2008.-160 էջ:




ԳՄԴ 81.2 Հ գ72

ISBN 978-9939-52-027-8

© Գյուրջինյան Դավիթ, Հեքեքյան Նարինե, 2008  
© Էդիթ Պրինտ, հրատարակչություն, Երևան 2008





## Իմ բարձրանում, իմ քաղցրանում



**Յ**ուրաքանչյուր մարդու համար աշխարհի ամենամեծ հրաշալիքը իր հայրենիքն է:

Իսկ ի՞նչ է հայրենիքը: Հայրենիքը մեր ծննդավայրն է, մեր հողն ու ջուրը, մեր լեզուն է, մեր հավատը, մեր երգը, մեր պատմությունը: Հայրենիքը մեր նախնիներն են ու այսօր մեր կողքին ապրող մարդիկ, հայրենիքը մեր ծնողներն են ու մեր տունը...

Փորձենք միասին բացել **հայրենիք** բառի գաղտնիքը և ճանաչենք մեր հայրենիքը: Հիշենք նրա անցյալը, ծանոթանանք մեր նախնիների սխրանքներին, ականջ դնենք հայոց երգին, ճանաչենք մեր բնությունը և անկեղծ գրուցենք մեր տան ու մեր ծնողների, մեր ընկերների ու մեր երազանքների մասին...





## ՀԱՅՐԵՆԻՔ

Նկարեցի մի սիրուն տուն,  
 Իսկ տան առաջ՝ այգի, պարտեզ:  
 Նկարեցի ձի, Չալանկ շուն,  
 Գառնե՛ր, ուլե՛ր, կանաչ սարե՛ր,  
 Ու սարերի գագաթներին՝  
 Ժպտուն դեմքով բազմաժ արև:  
 Նկարեցի հին օրորոց,  
 Մանգաղ, կացին ու մեծ սրոց,  
 Թոնիք, փարախ ու հավանոց:  
 Նկարեցի մի ճանապարհ,  
 Որ ձգվում է պապիս տևից,  
 Հասնում մինչև կապույտ Սևան  
 Ու Երևան է տանում ինձ:  
 Թղթի վրա քիչ տեղ մնաց.  
 Արարաուն էլ նկարեցի...  
 Ե՛վ հայրիկը, և՛ մայրիկը  
 Նկարս շատ հավանեցին:  
 Ես գունավոր մատիտներով  
 Պապիս գյուղը նկարեցի  
 Ու գեղեցիկ այդ նկարը  
 Ես «Հայրենիք» անվանեցի:



ԱՍՏՆՎԱԾՔ

Հայրենիքը արևից տաք, ոսկուց թանկ է:



## Բառերի գանձատուփ

1. Փարախը ոչխարների հանգստանալու, նրանց պահելու տեղն է, գոմբ: Իսկ ի՞նչ են ասում մեղունների բույնին:
2. Պապ, մայրիկ, հայրիկ .....: Շարունակի՛ր շարքը՝ գրելով ազգակցական կապ ցույց տվող բառեր:
3. Բառե՛ր գրիր, որոնք ունենան **-իկ** ածանցը (այն փաղաքշական կամ փոքրացուցիչ նշանակություն ունի):
4. Բանաստեղծությունից դու՛րս գրիր կենդանիներ նշանակող բառերը: Իրանք ինչպիսի՞ կենդանիներ են: Շարունակի՛ր:
5. Գրի՛ր **գագաթ** և **սար** բառերին հմաստով մոտ (հոմանիշ) բառեր:

Աիրեյի՛ Աիրունիկ, ինչպե՛ս օգնության կարիքն ունե՛ս: Բանաստեղծությունը շար հավանեցի, բայց երկու բառ կա, որ առագին անգամ ե՛ս լսում՝ **մանգաղ** և **սրոց** կրպաչարե՛ս:

Գիրե՛ս, սիրեյի՛ ինչուիկ, մանգաղը կոր և սուր բերանով, կարճ կոթով չեռքի գործիք է՝ խոր և հալածող խորհուրդներ հնչեցնող համար: **Մանգաղը**, ինչպես և **գերանդին**, սրում են **սրույով**: Պա սրելու փարն է:



## Հանելուկ

Հարյուր ատամ բերանին  
Աչք է գցում գերանին:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բանաստեղծության մեջ հիշատակված ի՞նչ անուններ կան: Իրանք գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ:
2. Ի՞նչ գույներ կգործածես, երբ այդ գյուղը նկարելու լինես: Ինչու՞:
3. Բանաստեղծն այս բանաստեղծությունն ինչու՞ է «Հայրենիք» անվանել: Բանաստեղծության համար նոր վերնագի՛ր ընտրիր:
4. Այս բառերից ընտրելով՝ շարունակի՛ր շարքերը. **գետ, տուն, լեռ, ծառ, բեռ, հարս, կետ, ձուկ, շուն, մուկ, թռռ, թուղթ:**
  - ա) գառ - գառներ, ....
  - բ) ուկ - ուկեր, ....



## Պատմությունների և հեքիաթների գամբյուղ

1. Նկարագրի՛ր քո գյուղը կամ քեզ ծանոթ հայկական մի գյուղ:
2. Պապիկիդ կամ տատիկիդ պատմած հեքիաթներից մեկը հիշի՛ր և վերապատմի՛ր:



Բանաստեղծության մեջ հոմանիշ բառերի մեկ զույգ գտիր:



## Իմաստունի օրատետրից

### ԹՈՆԻՐ

Թոնիրը գերնի մեզ կապից պարբարաված գլանաչև վառարան է: Նրա մեզ փրփուր լախաչ են թխում, ինչպես նաև ճաշ եփում կամ խորոված անում:

Անցյալում թոնիրը գրնվում էր հայկական տան մեզդեղում կամ անկյունաչին մասում: Ման աչա մասը կոչվում էր թոնրապուն կամ հապարուն: Այսրեղ հյուրեր էին ընդունում, նաև ֆում էին որովհեարև քափ էր լինում:

Տողովուրդն առանչնահարուկ վերաբերումնեփ ոներ թոնրի նկարմամբ, նրանով նույնիակ երգում էին, իսկ նորապակները մի փանի անգամ պրքրվում էին թոնրի շուրգը:

Այժմ հայկական գյուղերում թոնրի համար առանչին շինուքյուն են պարբարավում:



### Հանելուկ

Ես կարաս եմ՝  
 Ծորթս քաց,  
 Հուր պատերիս՝  
 Համեղ հաց:

### Բառախաղ

Թոնի՛ր, թոնի՛ր, տո՛նդ տոնի՛ր:  
 Տոնդ հացո՛վ տոնի՛ր, թոնի՛ր:



## Իմաստունի գրույցը

### ՀԱՆԵԼՈՒԿ

Իսամուսլիմ էմ, որ սիրում էս հանելուկներ լուծել: Միտածե՞լ էս թե որանեմ ինչու՞ են **հանելուկ** կոչվում: Իսանելուկը մի փանի փողով նկարագրում է սուսրկա կամ երևույթ՝ սոսանց անունը փայու, իսկ մենեմ այդ նկարագրութունից հանում ենեմ, գուշակում՝ սուսրկայի անունը: Պրս համար էլ հանելուկի մեզ պերեմ է անպայման նշվեն սուսրկայի կամ երևույթի ամենակարևոր հասրկանիղները:

Իսանելուկներ կան, որոնց հեղինակներին չգիրենեմ: Պրսանեմ կոչվում են ժողովրդական հանելուկներ: Իսանելուկներ էլ կան, որ գրել են գրողները: Պու էլ կարող էս հանելուկ հորինել, եթե ճիշտ նկարագրես սուսրկայի կամ երևույթի կարևոր հասրկանիղները:



## Անահիտ Պարսամյան

### ՍԻԶԱՆՈՏԻ ԵՐԱԶԸ



**Ճամփեգրիկ** ածած Սիզախոտը երազ տեսավ. իբր ինքը սովորական սիզախոտ չէր, այլ պալատական բույս: Եվ քանի որ պալատական էր, կարծես սիզախոտ էլ չէր, այլ ծաղիկ կամ դրա նման մի բան:

Նրան մեծարում էին «Ձերդ գերազանցութուն» արտահայտությամբ: Մյուս պալատականների կողքին նա տեսնում էր թագուհի Վարդին, թագավոր Թրաշուշանին: Այդ ամենը հաճելի էր, բայց Սիզախոտը ձանձրանում էր: Անկերջ գրուցում էին, զբոսնում, պարում, ուրախանում: Ո՛չ հոգս կար, ո՛չ մտածմունք:

Պալատի բյուրեղապակյա պատերից ներս չէին թափանցում քամու ազատ բույրն ու անձրևի խոնավ շունչը, արևի ճառագայթների կենդանի տաքությունը: Հապա սիրելի, փոքրիկ միջատներ, զատիկներ, մեղուներ, թիթեռներ... Հապա խատուտիկի հեզ գլխիկը, որ ամեն ինչի

**կողք  
հոգս  
վարդ**



**անձրև  
անվերջ  
կենդանի  
երջանիկ  
թագավոր  
արթնանալ**

մասին գիտեր: Հապա երկնքի կապու՛յտը, որն ինչ էլ լինի, անաղարտ է մնում իր հեռվում: Հապա խենթուլիկ, **շատախոս** առվա՛կը...

Եվ Սիզախոսը տխրեց: Նա կարոտեց փոշոտ, հին ու սիրելի ձանապարհին, որով այնքան մարդ է անցնում-դառնում, որի վրա այնքան **ոտնահետքեր** կան:

Կարոտեց սայլերին, որոնց անիվները չեն ծերանում, որովհետև միշտ շարժման մեջ են: Կարոտեց առավոտյան ցողին... ԻՆչ լավ է այնտեղ...

Եվ Սիզախոսն արթնացավ, գոհ ժպտաց՝ տեսնելով, որ պալատն ու մնացյալը երազ էին: ԻՆչ լավ էր, որ ինքը նորից քամու և անձրևի, մեղունների ու թիթեռների հետ է, առվակի կողքին...

Եվ այնպե՛ս երջանիկ զգաց իրեն...



**ԱՆՍԾ-ԱՍԵՉԱՍԾՔՆԵՐ**

Հարսգատ տներից լավը չկա:  
Լավ վարդն իր հողում կրուսնի:



**Արեղի՝ Գիրունիկ**

Շնկերներիցս մեկը հեփիաթը կարդայիս նկատել էր, որ **անցնում և գառնում** բառերի միջև ոչ թե արտրակետ, այլ գծիկ է դրված, բայց չէր հասկացել, թե ինչու: Ես մի րեղ կարդայեղ եմ, որ հայերենում այդպես գրվող բառեր կան: Պարմեցի նրան այդ մասին, հերոս բառարկերում՝ գրեցին՛ք **եղևեղ-մընեղ** («եղումուր անեղ, ներսուդուրս անեղ»), **ասեղ-խուեղ** («պրուցեղ»), **գնայ-գայ, գրեղ-կարդայ, երգեղ-պարեղ** բառերը: Չես կարող պարկերացնեղ՝ որքան ուրախ էի, որ օգրակար եղա նրան:

Ինչուիկ



## Քառերի գանձատուփ

1. Հեքիաթում գտի՛ր բուսնել, խոսել, զբոսնել, գվարձանալ, զարթնել բառերի հոմանիշները:
2. Հին, խոնավ, լավ, հաճելի, գոհ բառերի հակառակ իմաստն արտահայտող բառե՛ր (հականիշներ) գրի՛ր:
3. Բացատրի՛ր հեքիաթում կապույտ գրված բառերը. ուշադրությո՛ւն դարձրու, թե դրանք ինչպե՛ս են կազմվել:



Գիրե՛ս. Գիրունիկ,  
 հեքիաթը կարգալիս մի անծա-  
 նոթ բառ Կրեսա՝ **անաղարար**:  
 փորձեցի գուշակել, թե ի՞նչ  
 կարող է նշանակել: Կարծում  
 եմ, նշանակում է «մափուր»:  
 Եի՛շք է:

Նյո՛, ճիշդ ես գուշակել:  
 Անաղարար բառն իրոք  
 նշանակում է «մափուր»:  
 Ասկայն ուզում եմ մի բան  
 ավելացնել: Մափուր կարող է  
 լինել գրեթե ամեն ինչ՝ կոշիկը,  
 բաժակը, հագուստը, սենյակը,  
 շեփուկը, հոգին, երկինքը և այլն:



Իսկ **անաղարար** լինում են հոգին, լեզուն, Կգայմունիները,  
 երկինքը: Որ նշանակում է, որ **անաղարար** բառը կարող ենք  
 փոխարինել **մափուր** բառով, բայց **մափուր** բառի փոխարեն  
 միշտ չենք կարող **անաղարար** բառն օգտագործել:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Սիզախտը որտեղի՞ց հայտնվեց պալատում:
2. Ծաղիկների պալատում ուլքե՞ր էին թագավորն ու թագուհին:
3. Սիզախտին պալատում ինչպե՞ս էին վերաբերվում, և նա այնտեղ իրեն ինչպե՞ս էր զգում:
4. Սիզախտը պալատից դուրս ի՞նչ էր թողել: Նկարագրի՛ր սիզախտի հիշողությունները: Ու՛մ կամ ինչի՞ն էր կարոտել նա:
5. Սիզախտն իրեն ե՞րբ երջանիկ զգաց: Ի՞նչու՞:
6. Ի՞նչ ես կարծում, Սիզախտի տեսածը լավ էրա՞յն էր, թե՛ վատ:
7. Ո՞րն է հեքիաթի հիմնական միտքը:



## Իմաստունի գրույցը

### ՀԵՔԻԱԹ

Իրչու՞մ ես, թե ո՞վ է առաջին հեփաթը պարմեղ փեղ: Երևի այո: Ասկայն ոչ ոք չգիտի, թե ո՞վ է հորինել ու պարմել աշխարհի առաջին հեփաթը, որովհետև դա եղել է շա՞ր վաղուց: Վարդիկ հեփաթներ են հորինել, որովհետև դրանցում՝ անհավարարյին ու անհնարինը հնարավոր են դառնում: Իեփաթներում նրանք արքաահայրում են իրենց երազանքները և սպնիվ ցանկությունները: Իեփաթները միշտ բարի ու գեղեցիկ ամարս են ունենում: Իեփաթների հերոսներ են լինում ինչպես մարդիկ, այնպես էլ բույսերը, կենդանիները, երևակայական դևերը, հրեղներն ու վիշապները:

Իհն ժամանակներում մարդիկ հեփաթները բանավոր պարմելով փոխանցում էին իրար: Դրանք կոչվում են ժողովրդական հեփաթներ: Իսկ ավելի ուշ հեփաթներ սկսեցին գրել նաև գրողները:



### Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Հեքիաթի մեջ փոփոխություններ կատարիր. այնպե՛ս արա որ Վարդը, Թրաշուշանը, Սիգախոտը խոսեն:
2. Երագե՞լ ես ուրիշ գյուղում, քաղաքում կամ երկրում ապրել մասին: Պատմի՛ր, թե ինչպե՛ս ես պատկերացնում այդ վայրը:
3. Երբևէ առիթ ունեցե՞լ ես տնից, ընկերներից հեռու ապրելու եթե այո, պատմի՛ր, թե ի՞նչ ես զգացել, ինչի՞ մասին ես մտածել:
4. Փոքրիկ հեքիա՞թ հորինիր դաշտային ծաղիկների մասին:





ՀԱՅՐԵՆԻՔ

Լցվեցիր իմ մեջ  
 Մորս կաթի հետ,  
 Հորս գրույցի  
 Ու հեքիաթի հետ,  
 Մեր սարերի հետ,  
 Մեր դարերի հետ,  
 Մեր վերքերի հետ,  
 Մեր երգերի հետ,  
 Լցվեցիր այդպես,  
 Դարձար ինձ արյուն,  
 Սիրտ դարձար դու ինձ  
 Ջերմ ու բաբախուն:  
 Հիմա երկուսով  
 Մեկ ենք, մի մարմին  
 Եվ հին ենք, հին ենք,  
 Մասիսի պես հին:  
 Դու ինձ ես գրկում,  
 Ես քեզ եմ գրկում.  
 Դու ինձ ես փրկում,  
 Ես քեզ եմ փրկում:



Թե դու տխրում ես,  
 Տխրում եմ և ես,  
 Թե դու ճախրում ես,  
 Ճախրում եմ և ես:  
 Իսկ թե չլինես,  
 Չեմ լինի և ես.  
 Այլևս ի՞նչ մարդ,  
 Թե սիրտը հանես:

հեքիաթ  
 վերք  
 երգ  
 արյուն

ԱՍՈՒՅԹՆԵՐ

Ինչպես չի կարելի ապրել առանց հացի, այնպես էլ անհեղափոխ է ապրել առանց հայրենիքի:

Վիկտոր Հյուգո  
 (Ֆրանսիացի նշանավոր գրող)

Հայրենիքը սիրում են ոչ թե նրա համար, որ այն մեծ է, այլ նրա համար, որ քոնն է:

Իմ շավ բարեկամ  
 Հիրունիկ, ես գիտեմ, որ  
 ձախարեղ բառը նշանակում  
 է «թոշեղ», և ձախարում են  
 թոշունները: Իսկ հայրենիքն  
 ու մարզը կարո՞ղ են ձախարել:  
 Մարտիրոսակ չէ՞:



Աիրեյի՛ ինչուիկ, դու ճիշդ  
 ես բացատրում **ձախարեղ** բառը:  
 Բայց միայն այդքանը չէ:  
 Ասեմ, որ ձախարում են նաև  
 ինձնաթիռները, սափառնակնե-  
 րը: Ինչու՞ ենք այդպես ասում:  
 Քանի որ նրանք թոշունների  
 նման են. կարծես երկաթե հսկա



թոշուններ լինեն: Այսինքն՝ **ձախարել** նշանակում է նաև  
 «սափառնել, օրի մեզ խոչանակ»:

Ահա այդպես էլ, երբ շատ ուրախ ենք լինում, մեր  
 սիրտը կարծես ուզում է պոկվել տեղից, թոշեղ երկինք: Այդ  
 պարճատով էլ **ձախարել** բառը գործածվում է նաև  
 «ուրախանալ, ցնծալ» իմաստով:



### Բառերի գանձատուփ

1. Գրի՛ր **ջերմ**, **պես**, **փրկել** և **տխրել** բառերի հոմանիշները:
2. Գրի՛ր **տխրել** և **հանել** բառերի հականիշները:
3. **Թե** բառը բանաստեղծության մեջ ի՞նչ իմաստով է գործածվել:
4. **Սիրտ** և **ջերմ** արմատներով բարդ կամ ածանցավոր բառե՛ր կազմիր: Դրանցից երկուսը գործածի՛ր նախադասությունների մեջ:
5. Ինչպիսի՞ն կարող են լինել՝ ա) **սարերը**, բ) **երգերը**, գ) **սիրտը**:
6. **Ինչպե՞ս** հարցին պատասխանող ի՞նչ բառեր կգործածես **գրկել** բառի հետ:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. ա) Բանաստեղծության բառերով լրացրո՛ւ աղյուսակը:

անձ ցույց տվող բառեր	իր ցույց տվող բառեր

բ) Յուրաքանչյուր շարքից երկուական բա՛ռ ընտրիր և գոր-  
 ծածի՛ր նախադասությունների մեջ:

2. Զո բառերով պատմի՛ր բանաստեղծությունը:

3. Բանաստեղծի համար հայրենիքն ի՞նչ է: Իսկ քե՞զ համար:

4. Հնարավո՞ր է ապրել առանց հայրենիքի:



### Պատմությունների զամբյուղ

1. Հայրենիքի ազատության համար պայքարած հերոսներից մեկի մասին տեղեկություններ հավաքիր և պատմի՛ր:

2. Մասիսի մասին որևէ զրույց գտիր, կարդա՛ և պատմի՛ր:



Ճախրել բառը երկու իմաստներով գործածի՛ր նախադասությունների մեջ:



Լիպարիտ Սարգսյան

## ՔՈՏՈՒՆԸ

Ճուտը ասաց ճնճղուկ մորը.

- Ձյուն է գալու, **ցրտեց** օրը:

Ուրիշների նման ինչու՞

**Տաք** աշխարհ չենք մենք էլ թռչում:

- Ինչպե՞ս ասեմ,- տխրեց մայրը,-

**Լայն** ու **մեծ** է այս աշխարհը,

Բայց սովոր է միշտ մեր ցեղը

Ապրել միայն ծնված տեղը:

Տանել ձմռան բուքն ու ձյունը,

Բայց չլքել իր հին բույներ:

Դու փոքր ես դեռ, կմեծանաս,

Ասածներս կհասկանաս:

Երբ քո տանն ես ցուրտը տանում,

Տունն ավելի է **քաղցրանում**:



բույն  
քաղցրանալ

ԱՍՏՆԱՍՏԵՐ

Տեղի որ գնաս, տանդ  
գինը նոր կիմանաս:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ճուտը ո՞ր թռչուններին նկատի ունի, երբ մայր ձնձղուկին հարցնում է.

*Ուրիշների նման ինչու՞*

*Տաք աշխարհ չենք մենք էլ թռչում:*

2. Ի՞նչ չվող թռչուններ գիտես:

3. Բանաստեղծությունը միայն ձնձղուկի և իր ձագի՞ մասին է: Նորից կարդա՛ և բացատրի՛ր:

4. Ի՞նչ ես կարծում, բանաստեղծության վերնագիրը ձի՞շտ է ընտրված: Կարծիքդ հիմնավորի՛ր:

5. Դերերի՞ բաժանիր բանաստեղծությունը: Քանի՞ հոգով պիտի կարդաք:

6. ա) *Տուն, տան, տանը, տնից, տնով* շարքի օրինակով գրի՛ր *ուն* բառի շարքը:

բ) Ծարքերից մեկի բառերով նախադասություննե՛ր կազմիր:

7. ա) *Քաջություն, քաջության, քաջությունից, քաջությամբ* ձևերի նմանությամբ կազմի՛ր *խաղաղություն* բառի շարքը:

բ) Ծարքերից մեկի բոլոր բառերով նախադասություննե՛ր կազմիր:

8. ա) Ուշադիր դիտի՛ր նկարը: Գրի՛ր նկարում պատկերված առարկաների անունները (առնվազն 5 բառ):

բ) Համառոտ նկարագրի՛ր այս նկարը:



Մարտիրոս Մարյան  
Հայաստան



Փորձի՛ր բացատրել հետևյալ տողերը.

Երբ քո տանն են ցուրտը տանում,  
Տունն ավելի է քաղցրանում:



### Պատմությունների զամբյուղ

1. Քո ընտանիքը ծնոանը կամ ամուսնը որևէ տեղ տեղափոխվու՞մ է: Եթե այո, պատմի՛ր այդ մասին:
2. Գրավոր շարադրի՛ր, թե ի՞նչ են քեզ համար քո տունը, քո գյուղը կամ քաղաքը, քո երկիրը:



### Տատիկի խորհուրդները

Իսայրենի երկիրը մեր բոլորի ընդհանուր փունն է: Աիրի՛ր նրա ամեն մի անկյունը: Մաժու՛ր պահիր փո շրգապար: Մի կեղտոտի՛ր փողոց ու աչգի, դաշտ ու անտառ:

Եթե ընկերներով կամ հարսպարներով լինե՞վ բնության գրկում, մաժու՛ր պահե՞վ այդ րեղը, չեղնից հեռո աղբ մի՛ թողե՞վ: Եթե կրակ ե՞վ վառե՞լ, մինչև հեռանալը հանգրե՞վ այն հանկարծ հրդեհ չընկվի:

Նղբը գցի՛ր աղբարկղի մե՞զ: Եթե չկա, ապա մի՛ նետիր մինչև մուրակա աղբարկղին հասնելը:

Խանելի է, չէ՞, մաժուր ապրելը:



### Դադարի պահ

Իրար մոտ գրի՛ր նույն գույնն ունեցող բառերը: Այդ բոլորը միասին ինչպե՞ս կանվանես:







## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բանաստեղծության մեջ մայրիկն ինչպե՞ս է բնութագրվում:
2. Հայրենիքն ու մայրիկը ինչի՞ հետ են համեմատվում:
3. Ի՞նչ պետք է անես, որ հայրենիքդ ու մայրիկդ հպարտանան քեզանով:
4. Երեխան ինչպե՞ս պիտի հատուցի իր համար հայրենիքի և մայրիկի արածները:
5. Ուշադրություն՝ դարձրու տողերի վերջին մասերին. ի՞նչ նկատեցիր:



## Պատմությունների զամբյուղ

1. Մայրիկդ քո ո՞ր չարածձիությունն է ներել: Կպատմե՞ս:
2. Փոքրիկ շարադրանք գրիր այնպիսի մարդու մասին, որով հպարտանում են մեր հայրենիքի մարդիկ:



Նորից կարդա՛ բանաստեղծության վերջին հատվածը և բացատրի՛ր **անպարտ** բառը:



## Իմաստունի գրույցը

### ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Պու արդեն սովորել ես թե ի՞նչ են հեփիսթը, հանելուկը: Իսկ ուրված եմ, որ գիտես նաև, թե ի՞նչ են «հայրենիք», «Բո փունը», «հայրենիքն ու մայրիկը» արեղծագործությունները: Եղի՛ր ես, **բանասարեղծություն**:

Բանասարեղծությունները հափուկ չևով գրված արեղծագործություններ են, որոնք նախընտրված են լինում՝ հայրենի երկրին, քնությանը, մարդկանց, արարահայրում են հեղինակի մտքերը, հույզերը:

Բանասարեղծությունները չևով տարբերվում են մյուս արեղծագործություններից, դրանք գրված են կարճ տողերով, տողերի վերջում դրված բառերն էլ շար նման են հնչում: Այդ պարճառով էլ բանասարեղծություններից հաճախ երգեր են ծնվում:



## ՀԱՅՐԵՆԻՔՆ ՈՒ ՄԱՅՐԻԿԸ

Ինչպես մայր հողն է կյանք տալիս ծաղկին,  
Արևն է ժպտում, որ նա միշտ ծաղկի,  
Այնպես ինձ սնել  
Ու կյանք են տվել  
Իմ հայրենիքը,  
Անուշ մայրիկը:

Առատ են արել սերն ու բարիքը,  
Որ անվիշտ ապրի իրենց բալիկը,  
Ինձ սիրով սնել  
Ու կյանք են տվել  
Իմ հայրենիքը,  
Անուշ մայրիկը:

Աճած մեր կյանքի արևի հրով,  
Ես նրանց կտամ իմ կյանքը սիրով,  
Որ անպարտ մնան,  
Որ հպարտ մնան  
Իմ հայրենիքը,  
Անուշ մայրիկը:

արև  
այդպես  
ծաղկել  
հպարտ



### Բառերի գանձատուփ

1. Հուր նշանակում է «կրակ»: Ո՞վ է **հրշեջը**, ի՞նչ է **հրացանը**:

2. Մայր արմատով ուրիշ բառե՛ր կազմիր:

Նմուշ՝ մայրական, տիրամայր:

3. **Կյանքը տալ** նշանակում է «մի բանի կամ մեկի համար ոչինչ չխնայել, ամեն ինչ զոհել, նրան նվիրվել»: Իսկ ի՞նչ է նշանակում **կյանք տալ** բառակապակցությունը. ընտրի՛ր ձիշտ պատասխանը.

ա) ապրել

բ) ծնել, լույս աշխարհ բերել

գ) չարչարվել:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բանաստեղծության մեջ մայրիկն ինչպե՞ս է բնութագրվում:
2. Հայրենիքն ու մայրիկը ինչի՞ հետ են համեմատվում:
3. Ի՞նչ պետք է անես, որ հայրենիքդ ու մայրիկդ հպարտանան քեզանով:
4. Երեխան ինչպե՞ս պիտի հատուցի իր համար հայրենիքի և մայրիկի արածները:
5. Ուշադրություն՝ դարձրու տողերի վերջին մասերին. ի՞նչ նկատեցիր:



## Պատմությունների զամբյուղ

1. Մայրիկդ քո ո՞ր չարածձիությունն է ներել: Կպատմե՞ս:
2. Փոքրիկ շարադրանք գրիր այնպիսի մարդու մասին, որով հպարտանում են մեր հայրենիքի մարդիկ:



Նորից կարդա՛ բանաստեղծության վերջին հատվածը և բացատրի՛ր **անպարտ** բառը:



## Իմաստունի գրույցը

### ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Պու արդեն սովորել ես, թե ի՞նչ են հեփիսթը, հանելուկը: համոզված եմ, որ գիտես նաև, թե ի՞նչ են «հայրենիք», «Բո փունը», «հայրենիփն ու մայրիկը» արվեստագործությունները: Եիջր ես, **բանաստեղծություն**:

Բանաստեղծությունները հափուկ չլույ գրված արվեստագործություններ են, որոնք նվիրված են լինում հայրենի երկրին, բնությանը, մարդկանց, արտահայտում են հեղինակի մտքերը, հույզերը:

Բանաստեղծությունները չլույ փարբերվում են մյուս արվեստագործություններից, դրանք գրված են կարճ փողերով, փողերի վերջում դրված բառերն էլ շար նման են հնչում: Նշյ պարծառով էլ բանաստեղծություններից հաճախ երգեր են ծնվում:



# ՆԱՏՆԵՐ

Հայրս ցորեն ցանեց,  
Եվ երբ ծլեց արտը,  
Նայեց ու հիացավ:

Եվ երբ եկավ ժամը,  
Արտը հասկակալեց.  
Նայեց ու հիացավ:

Նա իր հողոտ բռում  
Ցորեն հասկը սեղմեց,  
Եվ ... մեծ հրաշք եղավ:

**մարգարիտ  
հիանալ  
հանկարծ**

Նրա բռում հանկարծ  
Հատիկները բոլոր  
Մարգարիտներ դարձան:

Եվ Արարչի նման  
Հայրս նայեց նորից,  
Նայեց ու հիացավ:

Հետո շռայլ բռով  
Մարգարիտներն անթիվ  
Ցրեց երկինքն ի վեր:

Եվ երկնքում անծիր  
Ծողջողացին բազում  
Ցորեն-ցորեն աստղեր:



ԱՍՏՆԵՐ

Հոր բարությունը լեռան պես բարձր է, մոր սերը՝ ծովի պես խոր:

(Ճապոնական)



## Բառերի գանձատուփ

1. Գրի՛ր **շողշողալ, հանկարծ, նորից, անթիվ, ցրել** բառերի հոմանիշները, դրանք գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ:
2. **Հայր** արմատով ուրիշ բառե՛ր կազմիր:
3. Բանաստեղծությունը կրկին կարդալուց հետո փորձի՛ր ինքնուրույն բացատրել **հասկակալել** և **անծիր** բառերի իմաստը:

Արե՛լի՝ ինչուիկ

Պու երևի ծանոթ ես «Մանուկների Աստվածաշնչին»: համոզված եմ, որ հիշում ես աշխարհի արարման պարամբությունը, թե ինչպե՛ս Աստված արեղծեց աշխարհը և մարդկանց: **Արարել** նշանակում է արեղծել, իսկ **Արարիչը** (այսինքն՝ արեղծողը) Աստված է:

Իմնա արդեն պարզ է, չէ՞, թե բանաստեղծն ու՛մ հետ է համեմարում իր հորը:

Բո այնիվ բարեկամ **Գիրունիկ**



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բո բառերով պատմի՛ր բանաստեղծությունը:
2. Ըստ բանաստեղծի երևակայության՝ աստղերն ինչպե՞ս են առաջացել:
3. Նորից կարդա՛ բանաստեղծությունը և նոր վերնագի՛ր առաջարկիր: Ինչու՞ ես այդպես մտածում:
4. Եվ **Արարչի նման հայրս նայեց նորից, նայեց ու հիացավ** նախադասության մեջ բանաստեղծը հորն ու՛մ հետ է համեմատում:
5. Ի՞նչ թանկարժեք քարերի անուններ գիտես: Նկարագրի՛ր այդ քարերից մեկը կամ տեղեկություննե՛ր հաղորդիր դրա մասին:
6. **Մարգարիտ, հիանալ, երկինք** բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:



## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Նկարագրի՛ր քո հայրիկին:
2. Մի անկեղծ նամակ գրիր հայրիկիդ և նրան հաղորդի՛ր այն, ինչը մինչև հիմա բարձրաձայն չես ասել:
3. Կարդա՛ «Մանուկների Աստվածաշունչը» և պատմի՛ր Հիսուսի հրաշքներից մեկը:
4. «Ինչպես առաջացան աստղերը» վերնագրով փոքրիկ հեքիաթ հորինիր:
5. «Եթե կախարդական փայտիկ ունենայի» խորագրով գրի՛ր քո երեք ամենա-ամենա ցանկությունները:



Բանաստեղծության մեջ հոմանիշ բառեր կան: Գտի՛ր դրանք և գրի՛ր կողք կողքի:



Էդմոնդո դե Ամիչիս

## ՀՈՐ ՆԱՄԱԿԸ

### Սիրելի՛ Էնրիկո

Քո եղբոր ուսուցչուհու ներկայությամբ դու **անբարեկիրթ** խոսեցիր մորդ հետ: Դա այլևս երբեք չպետք է կրկնվի: Քո կոպիտ խոսքերը խոցեցին իմ սիրտը: Ես **մտաբերեցի**, թե ինչպես մի քանի տարի առաջ մայրիկդ ամբողջ գիշեր ևստեց մահճակալիդ մոտ՝ ականջ դնելով քո շնչառությանը: Հիմա ես հիշեցի դա, և ինձ համար ծանր էր քեզ նայելը, Էնրի՛կո: Ինչպե՛ս վիրավորեցիր քո մորը, որը քեզ մի ժամվա տանջանքից ազատելու համար մի ամբողջ տարվա երջանկությունը կտա, որը կգոհի իրեն՝ քո կյանքը փրկելու համար:

**որդի  
զգույշ  
սրբել  
եղբայր**

Մտածի՛ր այդ մասին, Էնրի՛կո: Լա՛վ հիշիր այդ:  
Օ՛, զգու՛յշ եղիր, Էնրի՛կո: Մոր հանդեպ ունեցած սե-  
րը մարդկային բոլոր զգացմունքներից ամենասուրբն է:

**ամբողջ  
համբույր  
անշնորհակալ  
ապերախտություն**

Վա՛յ նրան, ով կոտնահարի այն:

Թող այլևս ոչ մի կոպիտ խոսք դուրս  
չգա քո բերանից այն մարդու հանդեպ, ով  
կյանք է տվել քեզ: Իսկ եթե  
դուրս գա, ապա թող ոչ

թե հորիցդ ունեցած վախը, այլ սեփական  
սրտիդ թելադրանքը քեզ նետի նրա  
գիրկն ու ստիպի **աղաչել**, որ ներման  
համբույրը քո ձակատից սրբի  
**ապերախտության** դրոշմը:

Ես սիրում եմ քեզ, որդի՛ս:  
Իմ կյանքում ամեն ինչից թանկը  
դու ես, բայց չեմ **հանդուրժի**,  
որ մորդ հանդեպ անշնորհակալ  
լինես:

Քո հայր



**ԱՍՍՅՎԱՄԲ**

Ճշմարիտ խոսքը հաճախ դեղի պես դառն է, բայց բուժիչ է:

(չինական)



**Բառերի գանձատուփ**

1. Գրի՛ր հատկանիշ ցույց տվող մի բանի բառ, որոնցով կրնու՞թա-  
գրեիր մայրիկի սերը քո նկատմամբ:

2. Նամակում գտի՛ր տրված բառերի հոմանիշները (դրանք  
կապույտ են գրված).

*անքաղաքավարի, թույլ տալ, երախտամոռություն, խնդրել,  
խորհել, մաքրել:*

3. Ապերախտություն բառի հականիշն է երախտագիտությունը:  
Գրի՛ր այն բառերը, որոնք իմաստով հակառակ են **ապերախտ,  
անշնորհակալ, անբարեկիրթ** բառերին:

4. Նամակից 4-5 «տհաճ» բա՛ն դուրս գրիր: 5 «հաճելի» բառ էլ  
ի՛նքդ ավելացրու:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ո՞րն է նամակի հիմնական միտքը, հայրն ի՞նչ է խրատում որդուն:

2. Գտի՛ր այն նախադասությունը, որի մեջ նամակի հեղինակը խոսում է մոր նկատմամբ ունեցած սիրո մասին: Ի՞նչ բառով է բնութագրում այդ զգացմունքը:

3. Ու՞մ կամ ինչի՞ հետ կհամեմատես մայրիկիդ:

4. Նամակի ո՞ր հատվածը ամենից շատ հուզեց քեզ:



## Իմաստունի զրույցը

### ՆԱՄԱԿ

Վրասպարարը չէր փուն երբևէ՝ փակ ծրար բերել՝ է: Ծրարի մեզ ծալված թուղթ է լինում, որի վրա ինչ-որ բան է գրված: Ուս նամակ է:

Մարդիկ փարբեր առիթներով հաճախ նամակներ են գրում սպգականներին, բարեկամներին ու ընկերներին, նրանց պարմում իրենց հազոդությունների կամ անհազոդության, ուրախության ու տխրության մասին: Երբեմն նամակներով հայրնում են այն, ինչ չեն կարողանում կամ չեն ուզում բարչրաչայն ասել: Այդ պարծառով էլ նամակները պերփ է կարդան միայն նրանք, ում հասցեագրված են:

հիշիր. ուրիշի նամակները չի կարելի կարդալ, եթե նույնիսկ բաց դրված են: Նամակը կարելի է կարդալ, եթե նրա րերը թույլ է րայիս, կամ եթե այն րպագրված է որևէ գրվում:

### Հանելուկ

Ես մի թուղթ եմ, ունեմ չորս ծայր,  
Շատ եմ սիրում կանոն ու կարգ,  
Թեև թուղթ եմ, բայց գաղտնապա  
Ի՞նչ է գրված, չես իմանա:  
Թեև անթև ու անփետուր,  
Թոչում, հասնում եմ ամենուր:



## Պատմությունների զամբյուղ

1. Պատահե՞լ է, որ կոպիտ խոսքով վիրավորես մայրիկիդ՝ Ներողություն խնդրե՞լ ես: Ինչպե՞ս ես ներում խնդրել նրանից:

2. Մայրիկիդ երբևէ հաճե՞լի անակնկալ մատուցե՞լ ես: Պատմի՛ր:





Ի՞նչ գույն ունեն տարվա եղանակները: Չմեռը փափուկ ձյան սպիտակն է առնում իր վրա, գարունը զուգվում է տերևների ու խոտերի զմրուխտ կանաչով, ամառը ցորենի դեղինն է հագնում, իսկ աշունը... Ներկարար աշունն իր կախարդական վրձնով շուրջը ներկում է պես-պես գույներով՝ դեղին, կանաչ, կարմիր...





### Բառերի գանձատուփ

1. Գրի՛ր կապույտ գրված բառերի հականիշները:
2. *Տանել ձմռան բուքն ու ձյունը տողի մեջ տանել բառն ի՞նչ է նշանակում:*
3. *Լքել* նշանակում է «մեկին թողնել հեռանալ, որևէ տեղից հեռանալ»: Լքում են ի՞նչը:
4. Թվարկի՛ր կենդանիների և նրանց ձագերի անուններ: Նմուշ՝ առյուծ - կորյուն:



### Իմաստունի գրույցը

#### ԱՌԱԾ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔ

Պարահեղ է, որ մեծերը փրոզդեղ եղբորդ կամ փեղ հեղ խոսեցիս, չեղ իրարեցիս սսեն. «Մասը (անգամ) չափի՛ր, մեկ (անգամ) կորի՛ր» կամ «ինչ պանես, ախ կենչես»: Այսպիսի իմաստուն արարահայրությունները կոչվում են առածներ և ասացվածքներ:


Արանք շար կարճ, բայց խոր իմաստ ունեցող իրարական արարահայրություններ են, որոնք մեզ սովորեցնում են լինել ավելի, բարի, աշխարասեր, ծնողասեր, ընկերասեր և խելացի: Օրինակ՝ *Մասը չափի՛ր, մեկ կորի՛ր* ասացվածքը իրարում է որևէ գործ անելուց առաջ լավ մտածել:

Այս արարահայրությունները արեղծել է ժողովուրդը: Ավորի՛ր և փ խոսվում՝ րեղին օգրագործի՛ր ժողովրդական իմաստությունները: Պրանք ասելիքը ավելի գեղեցիկ ու պարկերավոր կրարչեն:



### Դադարի պահ

Կծիկներից դուրս եկող թելերին հետևելով՝ կարդա՛ առածները:





## ԵՍ ԱՇՈՒՆՆ ԵՄ ՍԻՐՈՒՄ



օրորվել  
նախշուն  
առատ  
բերք

Ես աշունն եմ սիրում  
Դեղնահեր ու սիրուն,  
Երբ տերևն անտառում  
Քամու հետ է պարում,  
Երբ ծառերը այգում,  
Բեռներից ազատված,  
Հողմահար օրորվում,  
Սվսվում են կամաց:

Ես աշունն եմ սիրում  
Բերքառատ ու նախշուն  
Երբ գյուղի դաշտերում  
Առատ բերք են դիզում,  
Երբ առուն հորդացած  
Գլզլում է, հոսում  
Եվ ճամփին հնարած  
Նոր երգերն է ասում...



### Բառերի գանձատուփ

1. Բանաստեղծությունից դու՛րս գրիր այն բառերը, որոնք նշանակում են «դեղին մազեր ունեցող», «բերքով առատ»:

2. Մի բառով ինչպե՞ս կասես՝

ա) «սև մազեր ունեցող», «գանգուր մազեր ունեցող», «շատ մազեր ունեցող»,

բ) «ծյունով առատ», «ջրով առատ»:

3. Դաշտ, անտառ, այգի բառերի կողքին հատկանիշ ցույց տված երկուական բա՛ռ գրիր:

Նմուշ՝ տերև - դեղին տերև, չոր տերև:

4. Բանաստեղծության մեջ գտի՛ր գեղեցիկ, վարարել և բռնալ բառերի հոմանիշները:

5. Լրացրո՛ւ պակասող բառերը: Դրանք ընտրի՛ր տրվածներից. **խիչալ, բռնալ, ծոծոալ:**

Նմուշ՝ **Քամին սվսվում է:**

**ա)** Առուն և գետակը .....: **բ)** Տերևները .....: **գ)** Ձյունը .....

6. **Հավաքել և դիզել** բառերը հոմանիշ են, բայց **դիզել** նշանակում է «իրար վրա հավաքել, կուտակել»:

Բաց թողնված տեղերում գրի՛ր **հավաքել** կամ **դիզել** բառերը և ամբողջացրո՛ւ տրված նախադասությունները:

**ա)** Մեղուն ծաղկափոշի է .....

**բ)** Այգեպանը ծառերի չորացած ծյուղերը կտրել ու .....

**գ)** Տարիների ընթացքում նա մեծ հարստություն էր .....

**դ)** Անձրևից հետո անտառում կարելի է շատ սունկ.....:

**ե)** Արամը սիրում է դրոշմանիշներ .....



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բանաստեղծության ո՞ր տողերը քեզ դուր եկան: Ինչու՞:

2. Աշնանը քեզ ամենից շատ ի՞նչն է դուր գալիս:

3. Համեմատի՛ր աշունն ու գարունը և մի քանի տարբերություն նշիր:

4. Դու տարվա ո՞ր եղանակն ես սիրում և ինչու՞:

5. Աշուն - աշնան զույգի օրինակով կազմի՛ր գարուն, ամառ,

մեռ. դուռ, թռո, լեռ, ծուկ, մուկ, նուռ բառերի համապատասխանները: Դրանցից երկուսը գործածի՛ր նախադասությունների մեջ:



### Դադարի պահ

Գտի՛ր շղթայի մեջ թաքնված 4 բառերը և կիմանաս, թե Ինչուիկն է սիրում:

Ձ դ ա ս ա լ ո ղ ա տ ու ս եր կ և ի լ ի ի դ ե ղ ձ ի ք ա լ

4. Բանաստեղծության մեջ գտի՛ր գեղեցիկ, վարարել և քչքչալ բառերի հոմանիշները:

5. Լրացրո՛ւ պակասող բառերը: Դրանք ընտրի՛ր տրվածներից. **խշխշալ, քչքչալ, ծոծոալ:**

Նմուշ՝ **Քամին սվսվում է:**

**ա)** Առուն և գետակը .....: **բ)** Տերևները .....: **գ)** Ձյունը .....

6. **Հավաքել և դիզել** բառերը հոմանիշ են, բայց **դիզել** նշանակում է «հրար վրա հավաքել, կուտակել»:

Բաց թողնված տեղերում գրի՛ր **հավաքել** կամ **դիզել** բառերը և ամբողջացրո՛ւ տրված նախադասությունները:

**ա)** Մեղուն ծաղկափոշի է .....

**բ)** Այգեպանը ծառերի չորացած ձյուղերը կտրել ու ..... էր այգու հեռավոր անկյունում:

**գ)** Տարիների ընթացքում նա մեծ հարստություն էր .....

**դ)** Անձրևից հետո անտառում կարելի է շատ սունկ.....:

**ե)** Արամը սիրում է դրոշմանիշներ .....

### **Հարցերի և առաջադրանքների արկղիկ**

1. Բանաստեղծության ո՞ր տողերը քեզ դուր եկան: Ինչու?:

2. Աշնանը քեզ ամենից շատ ի՞նչն է դուր գալիս:

3. Համեմատի՛ր աշունն ու գարունը և մի քանի տարբերություն նշիր:

4. Դու տարվա ո՞ր եղանակն ես սիրում և ինչու?:

5. **Աշուն** - **աշնան** զույգի օրինակով կազմի՛ր **գարուն, ամառ, ձմեռ, դուռ, թոռ, լեռ, ձուկ, մուկ, նուռ** բառերի համապատասխան ձևերը: Դրանցից երկուսը գործածի՛ր նախադասությունների մեջ:

### **Դադարի պահ**

Գտի՛ր շղթայի մեջ թաքնված 4 բառերը և կիմանաս, թե Ինչուիկն ի՞նչ է սիրում:

**Տղապալոբառուսերկ և իլիսիդեղծիբալ**



## Պատմությունների գամբյուղ

1. «Աշունը մեր բակում» կամ «Աշունը մեր գյուղում» վերնագրով փոքրիկ շարադրություն գրիր:
2. Աշունը պատկերող որևէ նկար գտիր և նկարագրի՛ր այն:
3. Փորձի՛ր աշնան մասին մի հանելուկ կամ բանաստեղծություն հորինել:



Ինչպե՞ս կբացատրես տերևն անտառում քամու հետ է պարում արտահայտությունը:



## Հանելուկ

Օրն է կարճանում,  
Ծառն է մերկանում,  
Անձրևէ մաղում,  
Քամին է խաղում:  
Այդ ե՞րբ է լինում:

Արարատի հայացքի դիմաց է փռված Հայաստանի բերք ու բարիքի հարուստ շրջանը՝ Արարատյան դաշտը, որ աշնանը գունագեղ գորգի է նմանվում:



## ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇ

Հայաստան ասում՝ լեռներ են հիշում,  
Գագաթներ՝ կորած ձյուններում հավերժ,  
Ձորեր՝ **ընկղմված** ամպի մշուշում,  
Ժայռից ժայռ թռչող գետեր **գահավեժ**:

Բայց դու՛, դու այսպես խոհուն ու խոնարհ,  
Ծշուռնջով խոսող դա՛շտ Արարատյան,  
**Հմայքիդ** սովոր իմ հոգու համար  
Ամենից շատ դու՛, դու՛ ես Հայաստան:

Դու՛ հին ու նորով բացված աշխարհին,  
Դու՛ խոր ու խորունկ փակված իմ հոգում,  
Ու՛ր էլ որ գևամ, իմ ծանապարհին  
Քո մի բուռ հո՛ղն եմ ոտքիս տակ զգում:

Քեզնով աշխա՛րհն է դառնում հայրենիք,  
Քեզնով աշխարհում կանգնած եմ հաստա՛տ,  
Իմ տուն, իմ որդի՛, իմ երգերի գի՛րք,  
Դու իմ մա՛յր լեզու՝ Արարատյան դա՛շտ:

**խոնարհ  
աշխարհ  
ծանապարհ**



### Բառերի գանձառուսի

1. Կարդա՛ բառերի բացատրությունը և սովորի՛ր.  
**ընկղմվել** - սուզվել, թաղվել, խոր տեղում տեղավորվել  
**գահավեժ** - բարձր տեղից ցած ընկնող, թափվող  
**հմայք** - գրավչություն
2. Արտասանի՛ր **խոնարհ**, **աշխարհ**, **ծանապարհ** բառերը և ասա՛, թե ի՛նչ ընդհանուր բան են տեսնում դրանց մեջ:



Ես գիրեմ, որ խոնարհ նշանակում է «համեար, հնազանդ, հեց, հանգիստ», իսկ խոհուն՝ «շուրջ, միաձող, խորհող»:

Պաշտն ինչպե՞ս կարող է խոնարհ ու խոհուն լինել:



Ճիշտ էս, բարեկամս, արանձ մարդուն բնութագրող բառեր են: Ասկայն գրողները հաճախ նման բառերով նկարագրում են բնության երևույթները, ծառերն ու ծաղիկները, սարերն ու չորերը... Պրա-

նից անկենդան բնությունն ասես կենդանանում է, խոսքն ավելի աշխույժ է դառնում: Վորչի՞ր բացատրել, թե ինչու են ասում, օրինակ, ժիր առվակ կամ շաքարախոս գեղակ: Եթե չո դասագրքի նյութերը և ուրիշ գրքեր այսուհետև ավելի ուշադիր կարդաս, ապա աշրպիսի օրինակների շար կհանդիպես:




### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Մարդիկ սովորաբար ի՞նչ են պատկերացնում, երբ Հայաստան են ասում: Իսկ բանաստեղծության հեղինակ՞ը:
2. Դու՞ ինչ ես պատկերացնում Հայաստան ասելիս:
3. Բանաստեղծը ի՞նչ բառեր ու արտահայտություններ է օգտագործել Արարատյան դաշտը նկարագրելու համար:
4. Ի՞նչ գույներ կօգտագործես, եթե դաշտ նկարելու լինես: Փորձի՞ր նկարել:



### Դադարի պահ

Արարատ լեռը նաև Մասիս են կոչում: Այն ունի երկու գագաթ, որոնց միջև եղած հեռավորությունը 10 կմ է:



Փոքր Մասիս (Սիս)

Մեծ Մասիս





## Իմաստունի օրատեսարից

### ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏ

Արարարյան դաշտը շրջապարված է Արագածի, Արայի, Արարարի լեռնագագաթներով: Հեղամա և հայկական պար լեռնաշղթաներով: Այն նման է եռանկյունի սկուրեղի, որը լցված է հողի բարիքներով: Այստեղ առաքորեն աճում են հայկական ծիրանը, խաղող, դեղձ և ուրիշ շատ մրգեր, բանջարանոցային բույսեր: Պարսեական չէ, որ Արարարյան դաշտը **հայասրանի զբոսարանն** են անվանում:

Արարարյան դաշտում են հիմնադրվել հին հայասրանի մայրափառափներ Արմավիրը, Երվանդաշարը, Վաղարշապատը, Արբաշարը, Պլինը: Այստեղ են գրնվում հայասրանի այժմյան մայրափառափը՝ Երևանը, հոգևոր կենտրոն է զմիածինը:

Աշնանը հայոց այգիներում հասունանում է քաղցրահամ խաղողը: Այն մեր հոգու զվարթության և կենսախնդության խորհրդանիշն է: Խաղողը հայկական զարդաքանդակների, խաչքարերի ամենասիրելի զարդանախշերից է:



Հայկ խաչատրյան

### ՎԱՋ-ԽԱՂՈՂԵՆԻ

Ասում են՝ վազից առաջ խաղողենին ճյուղատարած ծառ է եղել, որն ուներ ձիգ ու սլացիկ բուն: Այսօրվա նման էին ողկույզները՝ հյութեղ, քաղցրահամ:

Խաղողը շատ դուր եկավ մարդկանց, և նրանք սկսեցին մտածել այն մասին, թե ի՞նչ անեն, որ այդ հրաշալի պտուղը ճաշակեն տարին բոլոր: Պատրաստեցին մի մեծ տաշտ և խաղող լցրին մեջը, որ ձմռանն ու գարնանն էլ ուտեն: Բայց դեռ ձմեռը վրա չհասած, հենց որ այգում խաղողը վերջացավ, գնացին տեսան՝ խաղողը տաշտի մեջ ձմռափել, ջուր է դարձել: Մարդիկ ընկան տաշտի

վրա և սրտների ուզածի  
 չափ խաղողահյութ խմե-  
 ցին: Խմեցին, խենթացան,  
 սկսեցին կոտրատել խա-  
 ղողենու ձյուղերը, կապոտել  
 այս ու այն տեղից:

Այդ ժամանակվանից էլ  
 բոլոր վագերը ծուռումուռ են  
 մնացել:



### Հանելուկ

Հոլունքներ են սև կամ ծերմակ,  
 Քաղցրանում են արևի տակ:  
 Ուլունքներն այդ մանրակորիզ  
 Ունեն թփից կախված մի վիզ:



### Բառերի գանձատուփ

1. **Խաղողահյութ** բառին կազմությամբ նման բառեր գրիր (ինչի՞ հյութ):
2. Դու՛րս գրիր հատկանիշ ցույց տվող բառերը: Դրանք գործածի՛ր ուրիշ բառերի հետ:
3. **Կոտրատել** նշանակում է «տարբեր տեղերից մի քանի անգամ կոտրել»: Նույն ձևով էլ **կապոտել** նշանակում է «կապել տարբեր տեղերից, տարբեր ձևերով»: Գրի՛ր սրանց նման ուրիշ բառեր, որոնք ցույց տան մի քանի անգամ կատարվող գործողություն:



### Իմաստունի գրույցը

#### ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Խաղողի վապի մասին այս պարմությունը **ափանդություն** է կոչվում: Աշապիսի պրույցների միզոցով մարդիկ փորձել են քայարել, թե հնում ինչպե՛ս են առազապել ծովերն ու գետերը, լեռներն ու չորերը, ինչու՞ ծառերն ու ծաղիկները հենց այդ գույնն ու այդ շեն ունեն, ինչու՞ են փաղափներին ու գյուղերին, բերդերին ու վանփերին այդ անունները փվել:

Ափանդությունները գեղեցիկ, բաշյ ոչ իրական պարմություններ են:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ըստ այս գրույցի խաղողը սկզբում ի՞նչ է եղել: Ծառն ինչպե՞ս ծուռումուռ վազ դարձավ:
2. Խաղողահյութն ի՞նչ էր դարձել: Հավատո՞ւմ ես այս պատմությանը:
3. Նկարի՞ր խաղողենին՝ ծառ եղած ժամանակ: Քո բառերով գրի՞ր նկարիդ նկարագրությունը:
4. Ինչի՞ խորհրդանիշ է խաղողը:
5. Խաղողից ի՞նչ են պատրաստում:



## Պատմությունների զամբյուղ

1. Խաղողի մասին ուրիշ ի՞նչ գրույց կամ պատմություն գիտես: Հետաքրքրվի՞ր, ապա պատմի՞ր ընկերներիդ:
2. Պարզի՞ր, թե ծմռանը խաղողի վազն ի՞նչ են անում:



## Իմաստունի օրատետրից

### ԽԱՂՈՂ

Խաչապարանը խաղողի մշակության և գինեգործության հնագույն կենտրոններից է: Ապացույցը կարմիր բլուրում և էրեբունիում հայրնաբերված գինու մատաններն են, կարասները, խաղողի ածխապած սերմերը:

Խաղողենին կարող է սպրեչ 300 փարի: շուսասեր է, գերադասում է փուխը, ավազուր հողերը:

Խաղողը պարունակում է մեծ ֆանակությամբ շափարներ, փարբեր վիթամիններ և այլ օգրակար նյութեր: Ունի բուժիչ հարկություններ, այն օգրագործում են սրտի, թոփերի, լյարդի և այլ հիվանդությունների բուժման նպարակով:

Խաղողից պրանում են գինի, կոնյակ, հյութ, պարբասրում են զոշաք, չորացնելով՝ չամիչ: Խաղողի փերևով փաթաթում են հայերիս սիրած ճաշափեսակներից մեկը՝ փոլման:



## Հանելուկ

Գարնան օրերին  
Արցունք է մաղում,  
Աշնանը քաղցր  
Ոլունք է կախում:

Նռնենին Հայաստանում մշակվում է հնագույն ժամանակներից: Նուրը առատության խորհրդանիշ է:



## ՆՌՆԵՆԻ

Սիրանուշ Բուլաթյան

Այգում մեծ տոնահանդես էր: Կազմակերպված մրցույթին ծառերը եկել էին իրենց պտուղներով, ծաղիկներով ու սաղարթով:

Նռնենին եկել էր՝ հագած իր բոսորագույն ծաղիկներով զգեստը, բայց, ա՛յ քեզ ժլատություն, իր հետ բերել էր միայն մեկ նուռ: Մինչ հավաքվածները, Նռնենուն նայելով, նախատական հայացքներ էին փոխանակում և փսփսում, Նռնենու միակ նուռը ճաքեց, և շուրջը բազմաթիվ փայլվիլուն, հյութառատ հատիկներ շաղ-

**հայացք  
ընդհանուր  
հաղթել  
խորհրդանիշ**

վեցին: Ընդհանուր հիացմունք տիրեց, և հաղթեց Նռնենին:

Այդ հանդեսից հետո նուռը դարձավ հաղթանակի և առատության խորհրդանիշ:



## Հանելուկներ

Կլոր բույն է,  
Բերանը՝ փակ,  
Կեղևը՝ դեղ,  
Միջուկն համեղ:

Կարմիր քսակ,  
Չունի դուռ,  
Մեջը ուլունք  
Կա մի բուռ:





Արեգի՝ Գիրունիկ, ծիշյուն աասած՝ դեռ «Ակախախորի հե-  
փաթը» կարդալիս զարմանում էր, երբ տեսնում էր, որ **սկզբախոր**  
բառը մեծաբառ է գրվել: Մտածեցի՝ երևի պարսիական սխալ է:  
Բայց հիմա էլ նոնենին է աշրպեա գրվել: Մարտրինակ չէ՞:

Ոչ, սիրելի՛ բարեկամ: հեփաթներում և ստակներում, երբ  
ծառերը, ծաղիկները, կենդանիները մարդկանց պես հերոսներ  
են դառնում, գրողները նրանց անունները հաճախ մեծաբառ  
են գրում:

Մնացած դեպքերում՝ դրանք բոլորն էլ փոփոխաբառ են  
գրվում, եթե, իհարկե, նախադասության առաջին բառը չեն:



### Բառերի գանձատուփ

1. Բոսորագոյն «մուգ կարմիր» բառի նման **գոյն** արմատով ուրիշ բառե՛ր գրիր:
2. Փայլիլուն և նախատական «հանդիմանական» բառերի **-ուն** և **-ական** ածանցներով ուրիշ բառե՛ր գրիր:
3. Պտուղների և ծաղիկների անուննե՛ր գրիր:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Պատմի՛ր հեքիաթը՝ պատասխանելով հետևյալ հարցերին.
  - ա) Այգում ի՞նչ էր կազմակերպվել:
  - բ) Մասնակիցներն ինչպե՞ս էին ներկայացել:
  - գ) Նոնենին ինչպե՞ս եկավ և ի՞նչ բերեց:
  - դ) Նոնենուն ինչպե՞ս դիմավորեցին, ի՞նչ եղավ հետո:
  - ե) Նոնենին ինչի՞ խորհրդանիշ դարձավ:
2. ա) Տրված օրինակներով տեսրիդ մեջ գրի՛ր **բարդի** և **ոսկի** բառերի համապատասխան ձևերը.

նոնենի	նոնենու	նոնենուն	նոնենուց	նոնենիով
այգի	այգու	այգուն	այգուց	այգով

- բ) Շարքերից մեկի բոլոր բառերը գործածի՛ր նախադասութ-  
յունների մեջ:



## Հեքիաթների գամբյուղ

1. Մի հեքիաթ գրիր այն ծառի մասին, որին ծառահանդեսի ժամանակ դու հաղթող կձանաչեիր:
2. Նոնենու մասին հեքիաթը քո ուզած ձևով փոփոխի՛ր և պատմի՛ր:

## Իմաստունի օրատեսրից



### ՆՈՒՌ

Նուռը սննդաբար է: Նրանից սրանում են հյութ, դոշաք, գինի:

Նուռը նաև բուժիչ հատկություններ ունի: Օրինակ՝ նուան կեղևի եփուկը (եռացնելով արայված հեղուկը) օգտագործում են արամոֆսի խանգարումների և շնորհի բորբոքման ժամանակ:

Նոնենին մինչև 5 մեքր բարչրությամբ փոփրկ ծառ է: Ծաղկում է մայիս-օգոստոսին, իսկ պտուղները հասունանում են սեպտեմբեր-հոկտեմբերին: Նոնենին զերմաատեր և յուսաատեր է, ստանց վնասվելու դիմանում է 20-22 աստիճան սառնամանիքներին:

Մեր երկրում նոնենին աճում է հիմնականում շոռու, Արաբուզի և Այունիփի մարզերում:



## Գուրգեն Գաբրիելյան

### ՆՈՒՌ

Ի՞նչ անենք, թե ուշ եմ ծաղկում  
 Ծաղիկներով լցված այգում,  
 Ես դարձել եմ քանդակ ու գիր  
 Ու տարածվել երկրեերկիր:  
 Արևահամ, արևաբույր,  
 Ճաքած նուան քաղցր ծիծաղ,  
 Ինձ պես մի՞թե շատերը կան,  
 Ե՛ս եմ միրգը մեր հայկական:



Իսկ դու գիտե՞ս՝ տարին ծոցում  
 Քանի օր է հասունացնում.  
 Մեկը մյուսից սիրուն ու նոր  
 Երեք հարյուր վաթսունհինգ օր:  
 Այսքան հատիկ կարմիր գույնի  
 Միայն հասած նուռը ունի:  
 Եթե սիրոս բացես լրիվ,  
 Ես կլինեմ ցաքուցրիվ:  
 Հետո կասես. «Վա՛յ, կարմի՛ր նուռ,  
 Այսքան հատիկ ո՞նց էր մի բուռ»:



**Ճաղկել  
 Երկրենրկիր  
 միրգ**



Ահրեղի՝ Գիտունիկ, վերջին երկու փողերի բառերը լավ էլ հանդիպել են՝ նուռ - բուռ:

Իմ լավ բարեկամ, դրանով պարահարսը չեն իրար մոտ գրվել: Քանապետեղծությունը հաճելի ընթերցվող, երգային է լինում, երբ բառերի և հնչյունների այդպիսի ընդհանրություններ կան: Եթե ուշադիր լինես, էլի կգրնես, ասենք՝ **լրիվ - ցափուցրիվ**: Նորից կարդա՛ բանաստեղծությունը և նման վույգեր ինձի գրիր:




### **Բառերի գանձատուփ**

1. Բացատրի՛ր **արևահամ** և **արևաբույր** բառերը: Ինչե՞րը կարող են արևահամ և արևաբույր լինել:
2. Բանաստեղծությունից դու՛րս գրիր գործողություն ցույց տվող բառերը:
3. **Երկրենրկիր** բառին կազմությամբ նման բառե՛ր գրիր՝ օգտագործելով **տուն, դուռ, սար, աշխարհ** բառերը:
4. Բանաստեղծությունից դու՛րս գրիր հարցում արտահայտող բառերը: Յուրաքանչյուրով մեկական նախադասություն՝ն կազմիր:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բանաստեղծության մեջ նունենու մասին ի՞նչ տեղեկություններ կան:
2. Ինչպե՞ս ես հասկանում ես դարձել են քանդակ ու գիր տողը:
3. Ուրիշ ո՞ր մի բան կհամարեիր հայկական: Ինչու՞:
4. Ի՞նչ գիտես նունենու և նրա պտղի մասին:
5. Նունն օգտակար ի՞նչ հատկություններ ունի: Տեղեկություններ հավաքիր և պատմի՛ր այդ մասին:
6. Նունն ի՞նչ կերակրատեսակների մեջ են օգտագործում: Նոյց ի՞նչ են պատրաստում: Հետաքրքրվի՛ր և պատմի՛ր:
7. Նռան պատկերով կամ նունաձև հուշանվերներ տեսե՛լ ես: Նկարագրի՛ր:
8. Ուշադիր դիտի՛ր նկարը: Գրի՛ր նկարին վերաբերող 3-5 բառ, որոնք առարկայի հատկանիշ են ցույց տալիս:



Մարտիրոս Մարյան, **Պտուղները հասունացել են:**





## Լեզուն գեներ է, գիտելիքը՝ ուժ

Հայրենիքի նկատմամբ չի կարող անկեղծ սեր լինել, եթե չկա ջերմ ու քնքուշ սեր մայրենի լեզվի նկատմամբ:





ՀԱՅՈՅ ԼԵՋՈՒ

Դու հևաբառ,  
Մերոպատառ,  
Աղբյուրի պես  
Զինչ ու կայտառ:  
Դու մոր նման  
Միշտ տուն կանչող,  
Թե՛ մեղմանուչ,  
Թե՛ շառաչող:  
Դու դարերի  
Արհավիրքում  
Թուր ես դարձել  
Դավթի ձեռքում,  
Դարձել վահան  
Պողպատակուռ,  
Փշրել անթիվ  
Նիզակ ու սուր:



Ու տնկելով  
Ելնող շիվեր՝  
Քայլել ես դու  
Դարերն ի վեր:  
Որքան քայլել,  
Այնքան փայլել,  
Այնքան դարձել  
Կուռ ու անբիծ,  
Եվ, ինչ լավ է,  
Հասել ես ինձ:

աղբյուր  
արհավիրք  
պողպատ  
անբիծ  
դառնակ  
դարձել

ԿՍՈՒՅԹՆԵՐ

Իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է հայոց լեզվին տիրապետելը:

(Վիկտոր Համբարձումյան, աշխարհահռչակ աստղագետ)

Ճոխ է հայոց լեզուն, և առատորեն կվարձատրվի նա, ով կուսումնասիրի այն:

(Զորջ Բայրոն, անգլիացի նշանավոր քանաստեղծ)



## Բառերի զանձատուփ

1. **Ջինջ**, **կայտառ**, **փայլել**, **անթիվ** և **փշրել** բառերի մեկական հոմանիշ ասա:
2. **Թուր** բառի հոմանիշը գտի՛ր բանաստեղծության մեջ:
3. Հայերեն «մեղմ ու բարի» 5 բա՛ռ գրիր, դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:
4. **Փայլել** և **քայլել** բառերը մեկ տառով են տարբերվում: Այդպիսի բառերի 5 զույգ գրիր:
5. **Տուն** արմատով բառե՛ր կազմիր:

տուն արմատը բառի սկզբում	տուն արմատը բառի վերջում
<b>զանձատուն</b>	<b>տնային</b>



Աիրելի՛ Գիրունիկ, ի՞նչ վախան է, որ փոփրապատ է գրվել:

մի՛ վարմապիր, սիրելի՛ բարեկամ: Ուս այդպիսի փասնյակ օրինակներ գիրքս, թե ինչպես սովորական մի բառ կարող է մարդու անուն դառնալ: Այսպես գոհար (թանկարժեք փար) և Գոհար մանուշակ (ծաղիկ) և մանուշակ կորյուն (սառյուծի կամ վագրի չագ) և կորյուն շանթ (կաշձակ) և Շանթ... Այդպես վախան բառն ունենւմ: Ուս ուզվիկի (ի դեպ, Ուզվիկ անուն էլ ունենւմ) չեոփի մեարադյա հարմարանւմ է թշնամու սրի հարմարանւմից պաշարանւմելու համար: փորշի՛ր այդպիսի անունների մի ցանկ պարտաարել:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Հատկանիշ արտահայտող ինչպիսի՞ բառերով է բնութագրվում հայոց լեզուն:
2. Ո՞վ է բանաստեղծության մեջ հիշատակված Դավիթը: Պատմի՛ր նրա մասին:
3. Կարդա՛ բանաստեղծության «մարտական» տողերը:
4. Հայոց լեզվի մասին ուրիշ բանաստեղծություն՝ ընտրիր և անգի՛ր սովորիր:



## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Լեզվի մասին առածնե՛ր հավաքիր: Դրանցից մեկը վերնագի՛ր դարձրու և մի պատմություն՝ հորինիր:
2. Պատմի՛ր կարդացածդ հեքիաթներից մեկը, որտեղ քաջ հերոսը իր թրի ուժով հաղթում է չարին:



## Իմաստունի օրատետրից

### ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ

Խայոց լեզուն աշխարհի հնագույն լեզուներից մեկն է: Այն 4 հազար տարվա պարմություն ունի:

Խայերեն գրաբերը արեղծել է մեարայ մաշտոցը 405 թվականին:

Խայոց լեզուն հայասրանի հանրապետության պետական լեզուն է: Խայասրանի յուրափանջուր բնակիչ պարտավոր է տիրապետել խայոց լեզվին:

Պարուցում ուսուցանվող լեզուն գրական խայերենն է:

Առօրյա կյանքում մարդիկ խոսում են գրականից որոշ չափով տարբեր խոսակցական խայերենով կամ բարբառով:

Բարբառները խայոց լեզվի տարբերակներն են, որոնք խոսվում են հայասրանի տարբեր վայրերում: Օրինակ՝ ունենք Արարատյան բարբառ, Ծիրակի բարբառ, Ղարաբաղի բարբառ և այլն:



## ՈՎ ՈՒՄ Է ՆՄԱՆ

(փոխադրությունը՝ Յուրի Սահակյանի)



Մի օր գազանները հավաքվեցին մեծ բացատում ու խոսք բացվեց, թե ով ում է նման:

- Ես ներքևակի եմ նման,- ասաց Վագրաձին,- տեսնու՛մ եք՝ ինչպիսի՛ շերտեր եմ:
- Ես էլ եմ ներքևակի նման, զոլավոր եմ

ես էլ,- ասաց Վագրը,- միայն թե քո զույգերը սպիտակ են, իսկ իմը՝ դեղին ու սև:

- Ես բլրի եմ նման,- ասաց Փիղը,- թե իջեցնեմ կնճիթս, շատ հարմար կլինի իմ վրայից ներքև սահել: Ահա՛, նայե՛ք...

Փիղն իջեցրեց կնճիթն ու խնդրեց, որ Կապիկը ներքև սահի, ինչպես բլրի վրայից:

- Հրաշալի՛ է,- ասաց Կապիկը,- ինձ շատ դուր եկավ: Կարելի՞ է մեկ անգամ էլ:

- Որքան ուզես,- պատասխանեց Փիղը:

- Ես էլ եմ բլրի նման,- ասաց Գետաձին,- եթե ձևկի իջնեմ, իմ վրայից էլ կարելի է գլորվել... ինչպես բլրից: Որովհետև ես մեծ եմ: Կապի՛կ, արի գլորվի՛ր իմ վրայից:

Կապիկը ճարպկորեն բարձրացավ, գլորվեց ներքև, ծոծրակը քորեց ու ասաց.

- Վատ չէ, միայն թե Փղի վրայից ավելի հարմար է, որովհետև նա Գետաձիուց ավելի բարձր է:

- Իսկ ես լուսացույցի եմ նման,- ասաց Ընձուղտը,- նաև վերամբարձ կռունկի: Տեսե՛ք՝ իՆչ երկար վիզ ունեմ:

- Զարմացրեց,- ասաց Խոզուկը,- ես էլ նման եմ ասեղների բարձիկի: Ծառ օգտակար բան է: Գրեթե բոլորի տանն էլ ասեղի համար նման բարձիկներ կան:

- Իսկ ես ոչևչի նման չեմ,- լաց եղավ Նապաստակը:



- Համաձայն չեմ քեզ հետ,- արտահայտվեց Ընծուղոր,- դու նման ես ձևագևի: Ա՛յ, եթե մեջքիդ ցատկի քույրիկդ, իսկ նրա վրա էլ՝ իր ձագուկը, կատացվի մի շա՛տ ուրախ Ձևեմարդ:

**վագր  
կնճիթ  
անգամ  
ծոծրակ  
ընծուղոր  
բարձիկ  
ձագուկ  
շագանակագույն**

- Դու որտեղի՞ց գիտես Ձևեմարդու մա- սին,- գարմացավ Գետածին,- մեզ մոտ՝ Աֆ- րիկայում, երբեք ձյուն չի լինում:

- Գրքերից գիտեմ,- պատասխանեց Ըն- ծուղոր,- կարդալ է պետք:

- Իսկ ե՞ս ում եմ նման,- հարցրեց Ոչխարը Գետածին:

Գետածին մի փոքր մտածեց և ասաց.

- Դու նման ես փոքրիկ, սպիտակ ամ- պի: Ինչպես Վինի Թուխը... Միայն թե նա շագանակագույն ամպիկ էր, իսկ դու՝ ձերմակ:

- Վինի Թու՛խ,- հարցրեց Ոչխարը,- ո՞վ է այդ Վինի Թուխը:

- Քոթոթ է,- պատասխանեց Ընծուղոր,- ասացի, չէ՞, պետք է գրքեր կարդալ: Ծատ կարդաս, շատ բան կիմանաս:

**ԱՍՈՒՅԹ**

Տգետ են լինում միայն նրանք, ովքեր վճռում են այդպիսին մնալ:

(Պլատոն, ինն ժամանակների հույն իմաստասեր)

**Հանելուկներ**

Հրաշք դաշտ է,  
Ցանված դաշտ է՝  
երեկ, այսօր, դարեր առաջ,  
Բայց ամեն պահ մեզ է տալիս  
Բարիքներն իր ամբարած:



Ինչ սխալ տեսնեմ, ջնջում եմ, մաքրում,  
Ծատ սխալ լինի, շուտ եմ նիհարում:



## Բառերի գանձատուփ


1. Քո բառերով բացատրի՛ր **բացատ** և **բլուր** բառերը: Դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:

2. Հեքիաթում գտի՛ր այն բառը, որը կենդանու մարմնի մաս է անվանում: Բացատրի՛ր, թե այն ի՛նչ է նշանակում:

3. Անկողնու մաս նշանակող ո՞ր բառը կա հեքիաթում: Գտի՛ր այն և շարունակի՛ր՝ թվարկելով անկողնուն վերաբերող մյուս բառերը:

4. Հեքիաթից դու՛րս գրիր գույն նշանակող բառերը:

5. Հեքիաթից դու՛րս գրիր այն նախադասությունները, որտեղ գործածվել են նկարում պատկերված առարկաների անունները:



6. Ի՛նչ է պատկերված նկարում: Գտածդ բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:



7. Յուրաքանչյուր շարքից ընտրի՛ր և դեմ դիմաց գրի՛ր կենդանու և նրա ձագի անունները.

առյուծ	ոչխար	կով	այծ	ծի	արջ
գառ	քոթոթ	կորյուն	քուռակ	ուլ	հորթ

8. Յուրաքանչյուր շարքից ընտրի՛ր և դեմ դիմաց գրի՛ր կենդանիների և նրանց խմբերի անունները.

ծիեր	ոչխարներ	գայլեր	կովեր	թռչուններ
երամ	ոմակ	նախիր	երամակ	հոտ

9. ա) Յուրաքանչյուր շարքից ընտրի՛ր և դեմ դիմաց գրի՛ր կենդանու անունը և նրա ձայնը նշանակող բառը.

ծի կով ոչխար առյուծ արջ այծ  
բառաչ վրնջյուն մոնչյուն մոթմոթոց մկկոց մայուն

բ) Պարզ նախադասություննե՛ր կազմի՛ր՝ երկրորդ շարքից երկու բառ ընտրելով:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Աշխարհի ո՞ր մասում են տեղի ունենում հեքիաթի գործողությունները: Պատասխանդ հիմնավորի՛ր հեքիաթի համապատասխան նախադասության միջոցով:

2. Հեքիաթում ո՞ր կենդանին է սպիտակ ամպի նմանեցվում: Իսկ դու ինչի՞ կնմանեցնես:

3. Երկու ուրիշ կենդանի՛ ընտրի՛ր և ասա՛, թե նրանցից յուրաքանչյուրին ինչի՞ ես նմանեցնում:

4. ա) Հեքիաթի հերոսներին երկու խմբի՛ բաժանի՛ր՝ լրացնելով աղյուսակը:

վայրի կենդանիներ	ընտանի կենդանիներ

բ) Աղյուսակի մեջ նոր անուննե՛ր ավելացրու:

5. Ո՞ր կենդանիներին ենք գազաններ անվանում:

6. Ո՞րն է հեքիաթի ամենաընթերցասեր կենդանին:

7. Ի՞նչ ես կարծում, մարդու կյանքում ի՞նչ նշանակություն ունի գիրքը:



### Դադարի պահ

Ընտանի կենդանիներից ի՞նչ օգուտ ենք ստանում: Թվարկի՛ր:







## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Ի՞նչ գիտես Վինի թուխի մասին: Պատմի՛ր:
2. Ի՞նչ ես կարծում, ո՞րն է ամենախելացի կենդանին: Պատմի՛ր նրա մասին:



Քո կարծիքով հեքիաթում կենդանիների անուններն ինչու՞ են մեծատառ գրվել:



Ալեքսանդր Ծատուրյան

## ԿԱՐԴԱՄ՝

Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ,  
 Կարդա՛, գրի՛ր տարին բոլոր,  
 Կարդացողի խելքն է կտրուկ,  
 Միտքը պայծառ ու լուսավոր:

Գիրք կարդալով՝ դու գրքերում  
 Ծատ նորանոր բան կիմանաս,  
 Ծատ շատերից շատ բաներում  
 Մտքով հեռու կսլանաս:

Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ,  
 Կարդա՛, գրի՛ր տարին բոլոր,  
 Կարդացողի խելքն է կտրուկ,  
 Միտքը պայծառ ու լուսավոր:

տարին բոլոր - ամբողջ տարին  
 խելքն է կտրուկ - միտքը սուր է, խելացի է



Կարդալ  
 լուսավոր

## ԱՌՄԾ-ԱՍՄՅՎԱԾՔՆԵՐ

Գիտունի հետ բա՛ր բաշխիր. անգետի հետ փչավ մի՞ ոտիդ:  
 Ով կարդա, մարդ կդառնա:  
 Ծատ կարդացողը հասկացող կլինի:

## Հանելուկներ



Ուր գնում է՝ մաքրություն,  
Փոշու հատիկ չի թողնում,  
Աղմկում է, ուստոստում,  
Մի անկյունում լուռ ննջում:

Տերև է՝ ծառ չէ,  
Խոսում է՝ մարդ չէ,  
Կարված է՝ շոր չէ:

Սարին բազմեց պապն սպիտակ,  
Դաշտերն առավ մորուքի տակ  
Եվ պահպանեց ծիլ ու ցողուն,  
Մինչև զարթնեց կյանքը հողում:



## Բառերի գանձատուփ

1. Հստ բանաստեղծության՝ միտքը լինում է պայծառ ու լուսավոր:  
Ուրիշ ինչե՞րը կարող են լինել՝ ա) պայծառ, բ) լուսավոր:
2. Կտրուկ «արագ», «վճռական» բառը կապի՞ր շարժում, պատասխանել բառերի հետ և դրանցով նախադասություններ կազմիր:
3. Սուր և նորանոր բառերը գործածի՞ր նախադասությունների մեջ:



Աիրելի՛ գիրունիկ, գիրելի, որ պաննում են ավեր-մեժենալով, հեծյալները՝ չիով, բաշյ մրժո մլ...

Աիրելի՛ բարեկամ, այո՛, մրժով էլ կարելի է պաննալ:  
Եվ իմացիր, որ դա թե՛ ավելի արագ է լինում, և թե՛ ավելի  
հեռու կարող ես գնալ: Երևակայության միզոցով ուղածը  
ժամանակ ուղածը րեղում կարող ես լինել: Կարչի՞ր և  
կհամոզվես:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. ա) Միտք - մտքի օրինակին հետևելով՝ կազմի՞ր գիրք, սիրտ, երկիր, խնդիր, միրգ, ուսուցիչ, երկինք բառերի համապատասխան ձևերը:  
բ) Կազմածդ ձևերից երկուսը գործածի՞ր նախադասությունների մեջ:

2. Թվարկի՛ր կարդացածդ գրքերը:
3. Գրքերից ի՞նչ նոր և հետաքրքիր բաներ ես իմացել:
4. Ինչպիսի՞ն է լինում կարդացած մարդը:



### Պատմությունների զամբյուղ

1. «Իմ առաջին գիրքը» վերնագրով փոքրիկ շարադրություն՝ գրիր:
2. Ընկերներով երևակայական ծանապարհորդության՝ մեկնեք՝ ընտրելով տրված վայրերից մեկը՝ **ա)** Աֆրիկա, **բ)** Հնդկաստան, **գ)** Արևմտյան Հայաստան:
3. Ընկերներով երևակայական ծանապարհորդության՝ մեկնեք՝ ընտրելով հետևյալ ժամանակաշրջաններից մեկը՝ **ա)** մեզանից հազարավոր տարիներ առաջ, **բ)** 5-րդ դար, **գ)** 22-րդ դար:




### Իմաստունի խորհուրդները

Մաշրեւի լեզուն մոր նման թանկ է ու փառքը: Արի՛ր ու լավ սովորիր այն: Ծա՛ր կարգա, ուրանավորներ՝ անգիր սովորիր: Աղիասարի մա՛փու՛ր պահել ինչ լեզուն: Կոպիւր ու Կրօնի բառեր մի՛ գործածիր, նույնիսկ եթե լսում ես դրանք: Իրի՛ր, որ ինչ շարժերից հնչած ամեն մի «դիւ՛մ» բառ «ցա՛վ» է ինչ մաշրեւի լեզվի համար, ինչպես ամեն մի վար արարձ՝ մաշրիկիդ համար:



### Դադարի պահ

Բառերի արկղիկից դեմ դիմաց դու՛րս գրիր միևնույն գույնն ունեցող բառերը: Բառերի զույգերն ի՞նչ սկզբունքով են կազմվել:



### Հանելուկ

Մեզ տանում է տիեզերք,  
Օվկիանոսներ ու ծովեր,  
Մեր առջև նա է բացում  
Հազար ու մի գաղտնիքներ:  
Ասե՛ք, ո՞վ է, դե ասե՛ք,  
Բարի կախարհն այդ զորեղ:





### ՅԶՎԵՄ ՈՒ ՎՅԳՐԸ

Մի աղվես բռնեց վագրը մի անգամ:  
 Աղվեսը ասաց. «Լսի՛ր, բարեկա՛մ,  
 Աստված ինձ կարգեց գազանների տեր,  
 Իսկ դու փորձում ես հիմա ինձ ուտե՛լ:  
 Աստծու զայրույթից աշխարհ շուռ կգա,  
 Էլ չես ազատվի, երկինքը վկա»:  
 Վագրը երկյուղից գույն տվեց-առավ,  
 Սիրտը կրծքի տակ մի կում ջուր դարձավ:



- Չե՛ս հավատում, հա՛, դե արի՛, եղբա՛յր,  
 Այս ձորից դուրս գանք ու մտնենք անտառ,  
 Կտեսնես՝ ինչպես գազաններն ամեն  
 Ինձնից սարսափած հեռու կփախչեն:
- Շատ լավ,- որոշեց վագրը երկյուղից  
 Ու աղվեսի հետ դուրս ելավ ձորից:  
 Գայլ, արջ ու հովազ, երբ վագրին տեսան,  
 Գլուխներն առած՝ սարերը փախան:
- Մխալվե՛լ եմ ես, ների՛ր ծառայիդ,-  
 Ասաց ու փախավ վագրը միամիտ:

Սա հին առակ է, բայց միտք ունի խոր.  
 Ուժի հետ մեկտեղ խելք է հարկավոր:



փորձել  
 զայրույթ  
 կործք  
 վագր  
 եղբայր



## Քառերի գանձատուփ

1. Շարքերից ընտրի՛ր և կողք կողքի՛ գրիր հոմանիշ բառերը.

նշանակել

սարսափել

զայրույթ

մեկտեղ

միասին

կարգել

վախենալ

բարկություն

2. Գտի՛ր բարեկամ, շատ, հեռու և միամիտ բառերի հակա-նիշները և գործածի՛ր նախադասությունների մեջ:

3. Առակի վերջին չորս տողում գտի՛ր տեղ բառի հականիշը:

4. Առակի միևնույն տողում գործողություն ցույց տվող հականիշ բառերի զույգ կա: Ուշադի՛ր կարդա և գտի՛ր դրանք:

5. Էլ չես ազատվի, երկինքը վկա նախադասության մեջ ի՞նչ է նշանակում էլ բառը. ա) նույնպես, բ) այլևս:

6. Ի՞նչ է նշանակում երկյուղ բառը: Ընտրի՛ր ձիշտ պատասխանը.

ա) կասկած, բ) զարմանք, գ) վախ:

7. Ի՞նչ է նշանակում գույն տալ-գույն առնել բառակապակցու-թյունը: Ընտրի՛ր ձիշտ պատասխանը.

ա) գունավոր մատիտներ փոխանակել, բ) գունատվել, տիրթնել, գ) տեսակ-տեսակ գույներով զարդարվել



## Իմաստունի գրույցը

### ԱՌԱԿ

Աղվեսի և վագրի մասին պարմող այս արեղծագործությունը գույե փեյ հիշեցրեց իմացածդ հեգիաթներից մեկը, որի հերոսներն էլ կենդանիներն են: Այդ կենդանիները խոսում ու գործում են մարդկանց նման: Քայց սա հեգիաթ չէ, այլ առակ:

Առակի հերոսներ են լինում կենդանիները, բույսերը, բնության երևույթները, սակայն բոլորն էլ հանդես են գալիս մարդկանց փոխա-րեն: Այսպեղ աղվեսի և վագրի փոխարեն մենք մարդկանց ենք պար-կերացնում:

Առակներում՝ գովաբանվում են բարությունը, ասկությունը, արգա-րությունը, համեարությունը, աշխարասիրությունը, ծաղրվում են չարու-թյունը, պարծենկությունը, ծուլությունը, սպերախարությունը:

Առակները խրատում ու դասարխարակում են ընթերցողներին:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Քո բառերով պատմի՛ր առակը:
2. Ինչպիսի՞ն է վագրը: Ասածդ հիմնավորի՛ր:
3. Ինչպիսի՞ն է աղվեսը: Ասածդ հիմնավորի՛ր:
4. Աղվեսն ի՞նչ բառերով է դիմում վագրին:
5. Աղվեսը վագրին ո՞ր տարալ:
6. Առակի մեջ ի՞նչ գազաններ են հիշատակվում: Նրանք ու՞ր փախան:
7. Քո կարծիքով խեղճն է կարևոր, թե՞ ուժը:
8. ա) Կարդա՛ կենդանիների նկարագրությունները:



Վագրը պատկանում է կատուների ընտանիքին: Գիշատիչ է: Վագրի մորթը կարմրավուն է և ծածկված է բծերով: Վագրը բաշ չունի: Նա որսի է դուրս գալիս գիշերը: Վագրը որսի վրա գաղտնի հարձակվում է թաքստոցից:

Առյուծը կատվազգի գիշատիչ է: Առյուծի մորթը դեղնավուն է և միագույն: Առյուծը փարթամ բաշ ունի: Նա գիշերային կյանք է վարում: Առյուծը գաղտնի չի հարձակվում իր որսի վրա:



բ) Նշի՛ր երկու հատկանիշ, որ երկուսն էլ ունեն:

Նմուշ՝ Վագրը և առյուծը կատվազգի են:

գ) Նշի՛ր երկու հատկանիշ, որոնցով առյուծն ու վագրը տարբերվում են:

Նմուշ՝ Վագրի մորթը ծածկված է բծերով, իսկ առյուծի մորթը միագույն է:

9. Առակում կետադրական ի՞նչ նշաններ են գործածվել:

10. Փախչել – փախան, տեսնել – տեսան. նույն ձևով գրի՛ր այս բառերի համապատասխան ձևերը.

ա) թռչել, կաչել

բ) մտնել, իջնել:

11. Տրված շարքերից մեկական բա՛ռ ընտրիր և գործածի՛ր նախադասությունների մեջ.

ա) դառնալ, գալ, տալ

բ) փախչել, մտնել, տեսնել:



### Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Աղվեսի մասին ի՞նչ հեքիաթ կամ առակ ես կարդացել: Դրանցից մեկը համառոտ ներկայացրու՝ գրավոր:

2. Աղվես կամ վագր տեսե՞լ ես: Որտե՞ղ: Պատմի՛ր այդ մասին:



1. Աղվեսի խոսքի մեջ մի արտահայտություն կա, որ երդում է: Ո՞րն է դա:

2. Փորձի՛ր կռահել, թե ի՞նչ է նշանակում հետևյալ արտահայտությունը: Միրտը կրծքի տակ մի կում ջուր դարձավ:



### Դադարի պահ

Գուշակի՛ր, թե ո՞ր կենդանու մասին է:

Թռչել չի կարող: Չորս ոտք ունի: Ուրիշ կենդանիներ չի ուտում: Մեծ կենդանի է:





# Արձաթեւ թիթեռնիկների ժամանակը



- Ուր գնացին ծաղիկները:
- Սու՛ս. քնած են հողի տակ,  
Տար ծածկված ողջ ձմեռը  
Չյուն-ծածկոցով սպիտակ:

- Վա՛յ, մայրի՛կ ջան, տե՛ս,  
Բակն ու դուռը լի  
Ինչքա՛ն սպիտակ  
Թիթեռ է գալիս...  
Էսքան շատ թիթեռ  
Չեմ տեսել ես դեռ:

Հովհ. Թումանյան

## Հանելուկ

Չմռանն ամենուր են,  
Ձեր սիրելի հյուրն են,  
Մեծի համար պաղ են,  
Մանուկներին խաղ են:







## ՓԱԹԻԼՆԵՐԸ

Ճերմակ, թեթև ու անհամար  
 Ձյան փաթիլներն իջնում են վար,  
 Իջնում, ծածկում դաշտ ու բլուր,  
 Իրար փարված՝ քնում են լուռ,  
 Քնում են լուռ ու երազում,  
 Գարնան գալուս են սպասում,  
 Որ արևի շողին փարվեն,  
 Հալվեն, փոխվեն զուլալ ցողի,  
 Ծալքերի տակ մտնեն հողի  
 Ու մայր հողից դուրս գան նորից.  
 Մեկը՝ դարձած մի ձևձաղիկ,  
 Մեկը՝ կապույտ մի մանուշակ,  
 Մեկը՝ ձերմակ-ձերմակ ծաղիկ,  
 Մեկը՝ նարգիզ, մեկը՝ շուշան:  
 Սակայն հիմա իջնում են վար,  
 Որ ցուրտ քամուց հողը պահեն,  
 Իսկ երբ բացվի գարունը վառ,  
 Ծաղիկ դառնան ու ծիծաղեն:



իջնել  
 ծածկել



### Բառերի գանձատուփ

1. **Չուլալ բառի մեկ հոմանիշ գրիր և գործածի՛ր նախադասության մեջ:**
2. Բանաստեղծության մեջ գտի՛ր **փաթաթվել** և **գրկել** բառերի հոմանիշը:
3. Գրի՛ր **թեթև, վար, իջնել, բացվել, ծիծաղել** բառերի հականիշները: Դրանցից երկուսը գործածի՛ր նախադասությունների մեջ:
4. Հատկանիշ ցույց տվող ինչպիսի՞ բառերով են բնութագրվում փաթիլները և քամին: Դու ի՞նչ բառեր կավելացնես:
5. Բանաստեղծությունից դու՛րս գրիր ծաղիկների անունները: Մի քանիսն էլ ի՛նքդ ավելացրու:



### Արեղի՝ Գիրունիկ

Այսօր շա՛ր հեղափոփիր բան կարդացի մանկական հանրագիտարանում: Գրված էր, որ փաթիլները սառցե նորբ աարդիլներ են և ամեն անգամ անկրկնեյի վարդանախշեր են ունենում: Խամուլվելու համար մի գիրնական 2500 փաթիլ է լուսանկարել: Պարկերայնու մ՛ ես, նրանք բոլորն էլ իրարից փարբեր են: Կարծես հրաշք լինի, չէ՞:

### Հանելուկ

Ծնվում են ջրից,  
Ճերմակ թև առնում,  
Քո շնչից անգամ  
Նորից ջուր դառնում:

Քո ընկեր ինչուիկ



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ի՞նչ ձև ունի ձյան փաթիլը: Եթե կարող ես, նկարի՛ր:
2. Քո բառերով պատմի՛ր բանաստեղծությունը՝ պատասխանելով հետևյալ հարցերին.
  - ա) Երկնքից իջնող փաթիլներն ի՞նչ են անում:
  - բ) Ձյունը մինչև ե՞րբ է ծածկում հողը:
  - գ) Ինչի՞ մասին էին երազում փաթիլները:
  - դ) Հալված ձյունն ի՞նչ է անում:
3. Բնության մեջ ձյունը է՞լ ինչի համար է կարևոր: Փորձի՛ր տեղեկություններ հավաքել:
4. Ձմեռային ի՞նչ խաղեր գիտես և ո՞րն ես ամենից շատ սիրում:
5. Ձմռանը մարդիկ ի՞նչ են հագնում: Ձմեռային հագուստի մի բանի տեսա՛կ նշիր:
6. Ձմռանը ի՞նչն է լավ և ի՞նչն է վատ:



### Պատմությունների զամբյուղ

1. «Փաթիլի երազը» վերնագրով շարադրություն գրիր:
2. Նկարագրի՛ր բանաստեղծության մեջ հիշատակված ծաղիկներից մեկը:



Ինչպե՞ս կրացատրես Ծալքերի տակ մտնեն հողի ու մայր հողից դուրս գան նորից նախադասությունը: Ձյունն ինչպե՞ս կարող է ծաղիկ դառնալ:

### Հանելուկներ

Կլոր է, սիսեռ չէ,  
Թոչում է, թիթեռ չէ,  
Ջրի մեջ ջուր է նա,  
Սառույցին քույր է նա:

Իրար գրկած  
Բազմեցին,  
Ճերմակ վերմակ  
Կապեցին:



Վասիլի Բիրյուկով

### ԻՆՉ ԳՈՒՅՆ ՈՒՆԻ ՁՅՈՒՆԸ

Արջն ու գայլը վիճում էին, թե ի՞նչ գույն ունի ձյունը:

- Սպիտակ է, սպիտակ է,- տասն անգամ կրկնեց գայլը:
- Ո՛չ, գորշ է, գորշ է,- պնդեց արջը:
- Սպիտակ է: Ի՛նչ է, ձյուն չե՛մ տեսել,- զայրացավ գայլը:-

Որքա՞ն ճանապարհներ եմ անցել ձյան միջով:

Սակայն արջն իրենն էր պնդում:

- Գորշ է: Ես միշտ էլ այդպես եմ տեսել ձյունը: Նույնիսկ գորշ-սևավուն: Իսկ գարնանը բոլորովին սև է:

Երկար վիճեցին: Քիչ էր մնում գործը կռվի հասներ: Գայլն սկսեց ատամները կրճտացնել, իսկ արջը՝ թաթերը տրորել:

Հանկարծ թփերի միջից հայտնվեց պոչատ նապաստակը: Տեսավ գազաններին և մեխվեց տեղում:

- Հե՛յ, նապաստա՛կ,- կանչեց արջը:- Ապա արի՛ այստեղ:

- Ե՞ս...

- Հա՛, դու: Մենք վիճում ենք, թե ձյունն ի՞նչ գույնի է:

**արջ**  
**որջ**  
**ձյուն**  
**գորշ**  
**հանկարծ**  
**կրճտացնել**  
**միանգամից**



Նապաստակը զարմացած նայեց գայլին:

- Իսկ դուք ի՞նչ կարծիքի եք:

- Ես ասում եմ՝ գորշ-սևավուն,- ասաց արջը:- Երբ որջից դուրս եմ գալիս, միշտ էլ այդ գույնի է լինում:

- Ո՛չ,- ասաց գայլը,- սպիտակ է: Դու ամբողջ

ձմեռն քնած ես

ձյան տակ: Դե, ինչպիսի՞ն է, ասա՛, նապաստա՛կ:

Պոչատը նայեց արջի հսկա թաթերին, նայեց գայլի ժանիքներին, միանգամից վրա տվեց.

- Ձյունը սպիտակագորշասևավուն է: Եվ թաթնվեց թփերի մեջ:



### Հանելուկներ

Քամին փչեց՝ կփախչի,  
Ճյուղը ջարդվեց՝ կթռչի,  
Ականջները միշտ ցցուն,  
Ոչ ոք նրան չի հասնի...



Ապրում է նա անտառում,  
Քարանձավում, որջերում,  
Սիրում է մեղր ու մրգեր,  
Մուշ-մուշ քնում ողջ ձմեռ:

### Սուտասելուկ

Մի օր կանաչ բացատում  
Նապաստակն էր թռչկոտում:  
Եղջուրները իր սրեց  
Ու ինձ վրա հարձակվեց:  
Ես ուշաթափ ցած ընկա,  
Մոնչոցից կատաղի,  
Չե՞ք հավատում, հարցրեք  
Որսորդներին մեր թաղի:



## Բառերի գանձատուփ

1. Սևալուծ նշանակում է «սևին մոտ, ոչ լրիվ սև»: Գտի՛ր այս բառի արմատը և ածանցը: Նույն ածանցով ուրիշ բառե՛ր կազմիր:
2. Արջին և նապաստակին ուրիշ ի՞նչ բառերով են անվանում:
3. Ի՞նչ է կոչվում արջի բույնը: Այդ բառը գործածի՛ր նախադասության մեջ:
4. Շարունակի՛ր՝ լրացնելով համապատասխան բառերը.  
ա) արջի թաթ, բ) ձիու ..., գ) արծվի ..., դ) կատվի ..., ե) ոչխարի .....



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Արջն ինչու՞ էր պնդում, որ ձյունը սև է:
2. Ինչպե՞ս են գնահատում նապաստակի պատասխանը:
3. Վեճի մեջ ո՞ր կողմն էր ճշմարիտ:
4. Հեքիաթը կարդացե՛ք դերերով:
5. Հեքիաթին նոր վերնագի՛ր առաջարկիր:
6. ա) Արտագրի՛ր և լրացրու՛ բաց թողնված տառերը:

Արտաքինով շատ նման է շանը: Բայց այն վայրի կեն\_անի է՝ խելացի և համար\_ակ, նաև զգուշավոր գիշատիչ: Ատամները սուր են, թաթերը՝ ուժեղ, մորթին՝ մոխրագույն: Ապրում է որ\_երում: Մնվում է եղնիկներով, եղ\_երուններով, նապաստակներով և կրծողներով: Հաճախ հար\_ակվում է շների, մանր և խոշոր ընտանի կեն\_անիների վրա:

բ) Ո՞ր կենդանու մասին է խոսքը:



## Դադարի պահ

Կարդա՛: Ի՞նչ նկատեցիր:

կապույտ, 26, զից, սև, կարմիր, կանաչ, շագանակագույն, առնաօղակ, 59



## Պատմությունների և հեքիաթների գամբյուղ

1. Ի՞նչ առակ կամ հեքիաթ ես կարդացել, որի հերոսները արջը, գայլը կամ նապաստակն են: Պատմի՛ր դրանցից մեկը:
2. Ի՞նչ մոլոտֆիլմ ես դիտել, որի հերոսներն են գայլը և նապաստակը: Համառոտ պատմի՛ր որևէ դրվագ:



### ԵՂԵՎՆԻՆ

Լանսեն Սիբայեյան

Խոր անտառից մեզ հյուր եկավ  
Սիրուն մի ծառ, գարուն մի ծառ,  
Կանաչ թիկնոց առած ուսին,  
Եկավ ուրախ մեր հանդեսին:

Մայրիկն ասաց. «Ջարդեր չունես,  
Ես քեզ զարդեր կտամ պես-պես»:  
Հայրիկն ասաց. «Դու չտխրես,  
Կարմիր աստղիկ կտամ ես քեզ»:

Տատիկն ասաց. «Ծառ ես բոբիկ,  
Քեզ տամ բամբակ, կապի՛ր ոտքիդ»:  
Պապիկն ասաց. «Բացե՛ք հանդես,  
Ձմեռ պապի դառնամ ես ձեզ»:

Ես էլ ասի. «Սիրուն իմ ծառ,  
Անթիվ զարդեր ունեմ պայծառ,  
Արի սիրուն քեզ զարդարեմ,  
Ծրջան մտած՝ շուրջդ պարեմ»:



եղևի  
զարդ  
բամբակ  
պես-պես



## Իմաստունի օրատետրից

### ԱՄԱՆՈՐ

Մի անտրը հայերը նշում են հին ժամանակներից սկսած: Ակպում նշել են գարնանը՝ մարտի 21-ին, այսօ՞ր օգոստոսին, երբ հայոց երկրում արևափառ ամառ էր, և առաջ բերվ էր հասունանում:

Քրիստոնեյա մյուս ապօրի պես մենք էլ այժմ Գրիգորյան Եկեղեցու համարում հունվարի 1-ը: Այդ օրը մարտիկ ամփոփում են անցած փարին, երազանքներով և բարի մաղթանքներով դիմավորում են նոր սկսվող փարին, աշխատում վերադարձնել պարտքերը, հաշտվել բոլոր նրանց հետ, ում հետ վիճել են, շնորհավորել բարեկամներին և ընկերներին:

Մարտնուրի Գրիգորյան Եկեղեցու ժամանակ ձոխ սեղաններ են բացվում, մարտիկ միմյանց գեղեցիկ նվերներ են մարտույում, երգում են, ուրախ հանդեսներ կազմակերպում:



Անվախ կանգնել է Նա ծմուռն առաջ, Չի ցրտահարվում Մարտինն իր կանաչ:



### Բառերի գանձատուփ

1. ա) Գրի՛ր նկարում պատկերված առարկաների անունները: Նրանք ի՞նչ ածանց ունեն:



բ) Գրածդ բառերից երկուսը գործածի՛ր նախադասությունների մեջ:  
2. Գրի՛ր գալ, տխրել, տալ, բացել բառերի հակառակները:  
3. Վերընթերցի՛ր բանաստեղծության առաջին տունը: Եղևնին ի՞նչ հագուստ ուներ հագին: Այդ բառը գործածի՛ր նախադասության մեջ:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Եղևնին որտեղի՞ց և ե՞րբ էր հյուր գնացել այդ տուն:  
2. Ինչպիսի՞ն էր եղևնին, երբ հյուր գնաց: Նկարագրի՛ր:  
3. Թվարկի՛ր, թե ընտանիքի անդամներն ի՞նչ առաջարկեցին եղևնուն: Ասա՛, թե դու՛ ինչ կտայիր:

4. Զարդարվելուց հետո եղևին ի՞նչ դարձավ: Փորձի՛ր նկարագրել և նկարել:

5. ա) **Շուրջը** նշանակում է «քո շուրջը»: Մեկ բառով ինչպե՞ս կասես՝ **իմ շուրջը, քո գարդերը, իմ տեսիլը, քո գրիչը, քո գիրքը:**

բ) Այդպիսի մի բառ էլ բանաստեղծության մեջ ի՞նքդ գտիր և բացատրի՛ր:

6. ա) Արտագրի՛ր բանաստեղծական հատվածը՝ լրացնելով բաց թողնված տառերը.

Անտառից եկած կանաչ եղ...նին  
Հիշում է կանաչ իր ըն...երներին:  
Երկինքն է հիշում իր գլխի վեր...  
Եվ իր մայր անտառն ասեղնատեր...:  
Հովերն է հիշում նա գարնանային,  
Որ իրեն այնպես օր...րում էին...

(Հ.Սահյան)

բ) Փորձի՛ր գուշակել, թե ի՞նչ է զգում և ինչի՛ մասին է մտածում եղևին, որին կտրել ու բերել են անտառից:

7. Նոր տարվա առթիվ շնորհավորական մի բացի՛կ գրիր քո հարազատներից մեկին, ուսուցչիդ կամ ընկերոջդ:

### Դադարի պահ

Գտի՛ր, թե Չմեռ պապի բերած տուփերից յուրաքանչյուրի մեջ ի՞նչ նվեր կա:







## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Նոր տարվա գիշերվա մասին մի հեքիաթ հորինիր:
2. Տրված նկարների վերաբերյալ մի պատմություն՝ հորինիր և գրի՛ր տեսրիդ մեջ: Վերնագրի՛ր գրածդ:






## Իմաստունի օրատետրից

### ՀԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Մոնականորեն պարզարված եղևնու կարպրին սփռարար սաքղ է շողշողում: Այն հիշեցնում է քեթեհեմի սաքղը: Այդ հրաշք սաքղը մուր 2000 փարի առազ փայլարակեց երկնքում և մարդկանց ցույց րվեց քեթեհեմ փաղափում հիսուսի ծնված րեղը:

Նոր րարին դիմափորեղուց հեղրո՝ հունվարի 6-ին, մենք նշում ենք հիսուս քրիստոսի Աուրք Ծնունդը:



Արեղի՝ ինչուիկ  
Շնորհակալում են  
քեց Ամանորի և Աուրք  
Ծնունդան րունի առթիվ:  
Կանկանում են, որ առողգ  
ու երգանիկ լինես զառնաս  
ավելի ընթերցասեր  
և ուղիմ, հոգարար ու  
քարի, և կարարվեն ք  
երայանքները:  
Քո քարեկամ  
Արունիկ



## Իմաստունի խորհուրդները

Աարեմուրի օրերին եղևնին երեխաների ու մեծերի ցանկալի հյուրն է: Աույն-գույն խաղալիքներով պարզարված այս գեղեցիկ ծաղը ոչ միայն րոնական րեպք է րալիս րանը, այլ նաև անրատի քույրով լցնում այն: Մրածե՞լ ես, թե որքան ժամանակ: Ընդա-մենը մի քանի օր:

Իսկ անրատում եղևնին կարող է շար երկար սաքեղ՝ 300, երքեմն՝ 500 րարի, և ավելի շար օգուր րալ: Եղևնին միշր կանաչ է, ծածկված է սաեղների նման սուր րերևներով: Եղևնու անրատում ամառ թե չմեռ օղը մափուր է ու առողգարար:

Արեմն եկե՛ք ոչ թե կիրենք, այլ րնկենք եղևնիներ, իսկ Ամանորին միայն արեեսրական րոնաժառեր օգրազործենք:

Գործն է անմահ, լա՛վ ինացեք,  
 Որ խոսվում է դարեդար,  
 Երևե՛կ նրան, որ իր գործով  
 Կապրի անվերջ, անդադար:

Հովհ. Թումանյան





## ՅՈՒՔ ՓԱՅԼՈՒՆ ԱՍՏՂԵՐԸ

(հնդկական ժողովրդական հեքիաթ)

Փամանակով մի երկրում երաշտ եղավ, և գետերը ցամաքեցին: **Նոյնիսկ** ջրհորներում ջուր չմնաց: Ծառ ու ծաղիկ չորացան, հարյուրավոր կենդանիներ սառկեցին:

Այդ երկրի մայրաքաղաքում մի **ջահել** աղջիկ էր ապրում անունը Աշա: Նրա մայրը **հանկարծակի** հիվանդացավ և **շարունակ** ջուր էր ուզում: Աշան գնաց ջուր **ձարելու**: Երկար **փևտրեց** խեղճ աղջիկը, բայց այդպես էլ ոչ մի կաթիլ ջուր չգտավ: Եվ հուսահատ ու տխուր որոշեց տուն վերադառնալ:

Երկար քայլելուց հոգնեց, նստեց հանգստանալու, և ինքն էլ չիմացավ, թե ինչպե՛ս խոր քուն մտավ: Երբ արթնացավ, շատ զարմացավ՝ կողքին մի կուժ լիքը սառը ջուր տեսնելով: Նա վեր թռավ և ուրախությունից սկսեց պարել: Ապա փորձեց մի կում խմել, բայց հիշեց մորը և երկու ձեռքով կուժն ամուր պահած՝ տուն վազեց:

Վազելիս չնկատեց ճանապարհի մեջտեղում պառկած շանը և տրորեց պոչը: Ծունը ցավից կաղկանձեց, բայց աղջկա ձեռքին ջրով լի կուժը տեսնելով՝ մոռացավ ցավը ու մի քիչ ջուր խնդրեց: Աշան գլխի ընկավ, որ շունը շատ ծարավ է, և մի կում ջուր տվեց նրան: Կուժը տեղնուտեղը արծաթ դարձավ:

Աշան շատ ուրախացավ ու գրկելով արծաթե կուժը՝ վազեց տուն: Նա մոտեցավ մոր մահճակալին ու նրան մեկնեց ջրով լի կուժը: Բայց մայրը հրաժարվեց առաջինը խմելուց:



**աղբյուր  
կենդանի  
կաղկանձել  
բարձրանալ  
հարյուրավոր  
հանկարծակի**

- Աղջի՛կս, - ասաց նա Աշային, - նախ դո՛ւ խմիր. գիտեմ, որ շատ ծարավ ես:

Ասելուն պես արծաթե կուժը ոսկի դարձավ:

Աշան հենց ուզեց մի կուժ խմել, դռան հետևից լսվեց մուրացկանի ձայնը: Աղջիկը գնաց ու իմացավ, որ մուրացկանը ջուր է խնդրում: Եվ կուժը տարավ նրան: Անմիջապես յոթ աղամանդներ հայտնվեցին կժի մեջ, ու սառը ջուրն սկսեց աղբյուրի պես հորդել: Երջանիկ մուրացկանը խմե՛ց-խմե՛ց, մինչև կշտացավ:

Իսկ յոթ աղամանդները, որ շողշողում էին ջրի մեջ, երկինք բարձրացան ու դարձան յոթ փայլուն աստղեր:

**ԱՍՍՅՎԱԾՔՆԵՐ**

Թռչելու համար հավթին թև է պետք. մարդուն՝ բարեկամ:

Մենակ մարդը անթև թռչուն է:



**Բառերի գանձատուփ**

1. Հեթիաթի առաջին նախադասության մեջ **ժամանակով բառն** ի՞նչ է նշանակում:
2. Երբ **արթնացավ, շատ զարմացավ՝ կողքին մի կուժ լիքը սառը ջուր տեսնելով** նախադասության մեջ կարմիր գրվածների փոխարեն մեկ բա՛ռ գործածիր:
3. Նա **մոտեցավ մոր մահձակային ու նրան մեկնեց ջրով լի կուժը** նախադասության մեջ ի՞նչ է նշանակում **մեկնել** բառը: Ուրիշ ի՞նչ մեկնել գիտես. մեկ նախադասությու՛ն կազմիր:
4. Գրի՛ր տեքստում կապույտ գրված բառերի հոմանիշները:
5. Երբ շունը **ցավ է զգում կամ քաղցած է, կաղկանձում է** (խղճալի ձայն է հանում):

Յուրաքանչյուր կենդանու անվան դիմաց գրի՛ր նրա արձակած ձայնի անունը.

առյուծ	շուն	գորտ	այծ	գալլ
ոռնոց	կոկոռց	մոնչյուն	վնգատոց	մկկոց



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Հեքիաթը պատմի՞ր քո բառերով:
2. Ըստ հեքիաթի ավարտի՞ր դեպքերի նկարագրությունը:

ա) Մի երկրում անձրևներ չեկան. երաշտ եղավ, և գետերը ցամաքեցին:

բ) Ծառ ու ծաղիկ չորացան, հարյուրավոր կենդանիներ սատկեցին, մարդիկ ծարավի մատնվեցին:

գ) ..... և այլն:

3. Ո՞րն է հեքիաթի հիմնական միտքը:
4. Այս հեքիաթը սովորածդ ո՞ր բանաստեղծությունը հիշեցրեց քեզ:



## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Հեքիաթը քո բառերով պատմի՞ր և միջնամասում որոշ փոփոխություններ արա:

2. Մի պատմություն կամ հեքիաթ հորինիր սափորի կամ կծի մասին:



## Իմաստունի խորհուրդները

Խարզի՞ր մեծերին, շահի՞ր նրանց խորհուրդները:

Մի՞ մոռացիր «խնդրում՝ եմ», «չնորհակալություն» և «ներողություն, ների՞ր» բառերը:

Աիրալի՞ր եղիր մեծերի և փոքրերի հետ: Քո արարքներով կամ կոպիտ խոսքով մի՞ վիրավորիր մարդկանց:

Մանր թե փողոցում, դպրոցում թե այլ վայրում բարչրաչաչն մի՞ խոսիր, մի՞ աղմկիր, մի՞ խանգարիր մարդկանց հանգիստը կամ աշխատանքը:

Եղի՞ր այնիմ ու ճշգրտիտ:



## Դադարի պահ

Կարդա՛ և առանձին-առանձին գրի՞ր ասացվածքները:

ԼԱՎՍԿԻՉԲԸԳՈՐԾԻ ԿԵՍՆԷԳՈՐԾԻ ԿԵՐՉՆԷԳՈՎՍԼԻ



## Ուժի ակունքը

Ծաղիկը ծաղկին՝  
Մի ծաղկեփունջ է,  
Քար դեռ քարին՝  
Ծեկը ու կամուրջ է:



Կեչին կեչու հետ  
Անտառ է կեչու,  
Առուն առվի հետ  
Գետ է կարկաչուն:

Տառը տառի հետ  
Իմաստ ու բառ է,  
Իսկ ուար ուսին՝  
Ուժն անսպառ է:



### ԱՌԱՐ-ԱՍԱԾ-ՎԱՐՔԱՆԵՐ

Մի ձեռքը ծափ չի տա:  
Գյուղ կանգնի. գերան կկոտրի:  
Միասնությունը ուժ է:  
Ուս ուսի որ տանք. սարեր շուր կտանք:

Ծաղկեփունջ  
անսպառ



### Բառերի գանձատուփ

1. Ակունքը այն աղբյուրն է, որտեղից սկիզբ է առնում ջուրը: Ի՞նչ ես հասկանում **ուժի ակունք** ասելով:

2. **Սպառվել** նշանակում է «վերջանալ»: Ի՞նչ է նշանակում **անսպառ**:

3. Բանաստեղծության մեջ ինչպիսի՞ն է գետը: Իսկ ի՞նչն է լինում՝

ա) **շառաչուն**, բ) **ժպտուն**, գ) **փայլուն**, դ) **դիմացկուն**:

- Կեչու անտառը կոչում են **կեչուտ**: Ինչպե՞ս կլինի՝  
ա) կաղնու անտառ, բ) ծիրանի այգի:
- Տառերը վերադասավորի՛ր և նոր բա՛ռ ստացիր:  
Նմուշ՝ փեսա - ափսե:  
ա) գեր, բ) սարդ, գ) կանթ, դ) հույս:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

- Ծաղիկը ծաղկին՝ մի ծաղկեփունջ է: Իսկ ի՞նչ է դառնում՝  
ա) գիրքը գրքի հետ, բ) բառը բառի հետ, գ) ծառը ծառի հետ,  
դ) թռչունը թռչունի հետ:
- Բանաստեղծությունից ի՞նչ հասկացար, ի՞նչն է ուժի աղբյուրը:
- Միասին ի՞նչ կարող են անել բարի մարդիկ:
- Մարդը ե՞րբ է իրեն ուժեղ զգում:
- Հարցերին պատասխանելով՝ նախադասություններ՝ կազմիր:

Ի՞նչ են անում	Ի՞նչ է անում
զինվորները	զորքը
աշակերտները	դասարանը
մարդիկ	ժողովուրդը
ծառերը	անտառը

Նմուշ՝ Թռչունները թռչում են: Երամը թռչում է:



### Պատմությունների զամբյուղ

- Պատահե՞լ է, որ ընկերներով որոշել եք մի գործ անել, բայց վիճաբանության պատճառով չի ստացվել: Պատմի՛ր այդ մասին:
- Պատմի՛ր մի դեպք, երբ օգնել ես ընտանիքիդ անդամներից մեկին կամ ընկերոջդ:



### Դադարի պահ

Գտի՛ր դանդաղ, հանգցնել, նեղ, վնաս, փոքր բառերի հականիշները: Դրանց երրորդ տառերը գրելով՝ կիմանաս գազանների արքայի անունը:





## ՄԱՅՐԻՆ



Մի պարտեզում աճում էր մայրին: Տարեցտարի նա հզորանում, դառնում էր ավելի խրոխտ ու շքեղ: Նրա փարթամ սաղարթը տիրաբար ծածանվում էր մնացած ծառերի գլխավերևում թանձր ստվեր նետելով նրանց վրա: Բայց որքան շատ էր նա պերճանում ու հասակ առնում, այնքան ավելի գոռոզ ու մեծամիտ էր դառնում: Բարձրից արհամարհանքով նայելով բոլորին՝ մայրին մի օր հրամայաբար ճչաց.

- Աչքիցս կորցրե՛ք այս թշվառ ընկուզենուն: Եվ ծառը տեղնուտեղը արմատախիլ արվեց:

- Ազատե՛ք ինձ այս անտանելի թզենու հարևանությունից: Դրա անդուր տեսքից ձանձրույթ է իջնում վրաս,- մեկ ուրիշ անգամ հրամայեց քմահաճ մայրին:

Եվ թզենին արժանացավ ընկուզենու բախտին:

Ինքնահավան գեղեցկուհին հպարտորեն տարուբերում էր ձյուղերը ու չէր հանդարտվում:

- Ծուրջս մաքրե՛ք այս ծեր խնձորենիներից:


Եվ ծառերը վառելափայտ դարձան: Այսպես անհաշտ մայրին հրամայեց մեկը մյուսի ետևից հատել բոլոր ծառերը և դարձավ պարտեզի լիիրավ տեր ու տնօրենը: Պարտեզի գեղեցկությունից միայն կոճղեր էին մնացել:

*խրոխտ  
փարթամ  
սաղարթ  
հարևան  
ընկուզենի  
տարեցտարի  
արհամարհանք*

Բայց ահա մի անգամ փոթորիկ եղավ: Գոռոզ մայրին ամբողջ ուժով կանգնեց քամու դիմաց՝ հզոր արմատներով կառչած մնալով հողին: Սակայն սանձազերծ քամին, իր առջև ուրիշ ծառերի չհանդիպելով, անարգել նետվեց միայնակ մնացած գեղուհու վրա, անխնա ճյուղակուտոր արեց և կռացրեց նրան:

Չկարողանալով դիմագրավել կատաղի տարերքի հարձակումներին՝ մայրին վերջապես ուժասպառ ճնշաց և տապալվեց:

իջնել  
բախտ  
տնօրեն  
ամբողջ  
տարերք  
հարձակում  
վերջապես



Հավատարիմ ընկերը գին չունի:



### Բառերի գանձատուփ

1. Հեքիաթից դու՛րս գրիր ծառերի անունները:
2. Հեքիաթի ծառերի անունների հետ հատկանիշ ցույց տվող ի՞նչ բառեր են գործածվել:  
Նմուշ՝ գոռոզ մայրի:
3. Ինչպիսի՞ն կարող է լինել քամին: *Քամի* բառի հետ հատկանիշ ցույց տվող բառե՛ր գործածիր:
4. Փոթորիկ բառը նշանակում է «ուժեղ քամի»: Այդ բառը գործածի՛ր նախադասության մեջ:
5. ա) Հեքիաթից դու՛րս գրիր այն բառերը, որոնք ծառի որևէ մաս են նշանակում:  
բ) Մի ծա՛ռ նկարիր և նկարածիդ վրա ցու՛յց տուր այդ մասերը:
6. Հեքիաթից դու՛րս գրիր այն բառերը, որոնց կազմում գեղեցիկ բաղադրիչը կա:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Հստ հեքիաթի շարունակի՛ր դեպքերի նկարագրությունը:  
ա) *Մի պարտեզում մայրի էր աճում:*

բ) Ծառը տարեցտարի ավելի ու ավելի էր գեղեցկանում, շքեղանում:

գ) ..... և այլն:

3. Ի՞նչ ես կարծում, հեքիաթը ծառերի՞ մասին էր:
4. Ո՞րն է հեքիաթի հիմնական միտքը:
5. Հեքիաթը մասերի՞ բաժանիր և վերնագրի՞ր:
6. Լրացրո՛ւ աղյուսակը:

առարկա ցույց տվող բառ	գործողություն ցույց տվող բառ
մայրի	ամել

7. Համեմատի՛ր տերևները: Մեկական նմանություն և տարբերություն նշիր:



### Պատմությունների և հեքիաթների գամբյուղ

1. Որևէ ծառի մասին հետաքրքրական տեղեկություն՝ պատրաստիր և ներկայացրո՛ւ ընկերներիդ:
2. Հեքիաթը շարադրի՞ր գրավոր և գործողություններին նոր ծա՛ն ավելացրու:



Հեքիաթից դո՛ւրս գրիր այն բառերը, որոնց կազմում ծառի որևէ մաս նշանակող բառամաս կա:



### Դադարի պահ

Դեմ դիմաց գրի՛ր միևնույն գույնն ունեցող բառերը: Բառերի գույգերն ի՞նչ սկզբունքով են կազմվել:

կեռասենի

թուզ

թթենի

ընկույզ

թզենի

ընկուզենի

բալենի

կեռաս

թուծ

թալ



### ԿԱՐԱԿԸ, ԽԵՑԳԵՏԻՆԸ ԵՎ ԳԱՅԼԱԾՈՒԿԸ



Ինչքան կուզեն՝ իրենց տանջեն,  
Երբ ընկերներն համերաշխ չեն,  
Օգուտ չունեն բռնած գործից.  
Ա՛յ, մի առակ կյանքի փորձից:

Մի կարապ, մի խեցգետին, մի գայլածուկ  
Բարձած սայլը տեղից քաշել ուզեցին  
Եվ երեքով եկան սայլին լծվեցին:  
Ինչ են անում, ինչ չեն անում,  
Սայլը տեղից չի էլ շարժվում.  
Շատ թեթև է բեռը թվում,  
Բայց կարապը վեր է թևում,



Խեցգետինը քաշում է հետ,  
Գայլածուկն էլ հո դեպի գետ.  
Ո՛վ է արդար, ո՛վ մեղավոր,  
Մենք չդատենք: Բանն այն է, որ  
Մինչև այսօր  
Թե՛ սայլ, թե՛ բեռ  
Նույն տեղն են դեռ:

*սայլին լծվել – սայլը քաշելու համար լուծը՝ փայտե հատուկ հարմարանքը, վզին ամրացնել*

#### Մ Ռ Մ Մ

Մի՛ լինիր ուրազի պես,  
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ.  
Այլ եղիր սղոցի պես.  
Մին դեպի քեզ, մին դեպի մեզ:

**խեցգետին**  
**փորձ**  
**բարձել**  
**արդար**  
**օգուտ**



## Բառերի գանձատուփ

1. Բաց թողնված տեղերում լրացրո՛ւ նախադասության մտքին համապատասխանող բառը (*անհաշտ, անօգուտ, անշարժ*):

ա) Եթե մարդիկ բռնած գործից օգուտ չունեն, ուրեմն այդ գործն .....

բ) Եթե սայլը տեղից չի շարժվում, ուրեմն սայլն .....

գ) Եթե մարդիկ համերաշխ չեն, ուրեմն .....

2. Ձկների և թռչունների անուններ՝ թվարկիր: Դրանցից երկուսը գործածի՛ր նախադասությունների մեջ:



Երբ մարդիկ եռանդով սկսում են մի գործ անել, ասում են «լծվել են գործի»: Իսկ ի՞նչ են ասում, երբ գործը առաջ չի գնում, տեղից չի շարժվում: Պատասխանը գտի՛ր առակում:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Շարունակի՛ր և պատմի՛ր առակի բովանդակությունը՝ ամբողջացնելով նախադասությունները:

ա) Մի օր կարապը, խեցգետինը և գայլաձուկը (ի՞նչ արեցին)...

բ) Նրանք երեքով (ի՞նչ արեցին) .....

գ) Կարապը (ի՞նչ էր անում).....

դ) Խեցգետինը .....

ե) Գայլաձուկը .....

զ) Սայլը.....

2. Ինչու՞ կարապը, խեցգետինը և գայլաձուկը չկարողացան սայլը շարժել:

3. Ի՞նչ ես կարծում, եթե նրանցից մեկը փորձեր սայլը մենակ շարժել, կկարողանա՞ր: Ասելիքդ հիմնավորի՛ր:

4. Գտի՛ր առակի այն հատվածը, որն արտահայտում է հիմնական միտքը՝ խրատը: Ի՞նչ է սովորեցնում առակը:



## Պատմությունների և հեքիաթների գամբյուղ

1. Մի հեքիաթ հորինիր և հերոսին ընտրի՛ր առակից:

2. Ուշադիր դիտիր նկարները և պատմիր նկարներում պատկերվածը: Ասա՛, թե ի՞նչ է լինում՝

ա) երբ գործ անելիս համաձայնություն չկա,

բ) երբ գործի մեջ համաձայնություն կա:





## ՃԱՄՓՈՐԴՆԵՐԸ



Երկու ձամփորդ գնում էին: Նրանցից մեկը ձանապարհին մի կացին գտավ, իսկ մյուսը բացական էր: «Տե՛ս է, թե մենք ի՞նչ գտանք»: Առաջինը պատասխանեց. «Ճիշտ չես ասում, ոչ թե մենք գտանք, այլ ե՛ս գտա»: Ծատ չանցած՝ նրանք հանդիպեցին կորած կացնի տերերին, որոնք ընկան նրանց հետևից: Նա, որի ձեռքին էր կացինը, մյուսին ասաց. «Հիմա մեր վերջը կտան»: Մյուսը պատասխանեց. «Ճիշտ չես ասում, ոչ թե մեր, այլ բո՛ւ վերջը. չէ՞ որ երբ կացինը

գտար, ինձ մասնակից չդարձրիր»:

Առակս ցուցանե, որ ով իր ուրախությունը չի կիսում բարեկամների հետ, դժբախտության մեջ մենակ կմնա:



## Բառերի գանձատուփ

1. Երեք բա՛ռ գրիր, որտեղ **ր**-ից հետո **ի** է գրվում: Դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:
2. **Ձանապարհ** բառին մեկ հոմանի՛շ գրիր:
3. Գրի՛ր **ձիշտ**, **գտնել**, **ուրախություն** և **դժբախտություն** բառերի հականիշները: Հականիշների մի զույգը գործածի՛ր միևնույն նախադասության մեջ:
4. **Բարեկամ** բառն ի՞նչ է նշանակում: Առակի մեջ այն ուրիշ ի՞նչ բառով կփոխարինես:
5. Երեք բա՛ռ գրիր, որոնք **-որդ** վերջածանց ունենան: Դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Առակի հիմնական միտքը ո՞ր նախադասության մեջ է ամփոփված:

2. Ճամփորդներից ո՞վ էր ծիշտ:

3. Ի՞նչ ես կորցրել, որի համար ափսոսել ես:

4. Ի՞նչ ես կարծում, որևէ իր գտնելիս ի՞նչ պիտի անել:

5. ա) Գրի՛ր **քույր**, **տեր**, **կին**, **աներ** բառերի համապատասխան ձևերը՝ հետևելով օրինակին՝ **ընկեր - ընկերոջ**:

բ) Կազմածդ ձևերից երկուսը գործածի՛ր նախադասությունների մեջ:



## Պատմությունների զամբյուղ

1. Նկարագրի՛ր ընկերոջդ:

2. Լավ ընկերն ինչպիսի՞ն պիտի լինի: Կարծիքդ ներկայացրո՛ւ՝ գրավոր:



Փորձի՛ր բացատրել **վերջը տալ** բառակապակցությունը: Նորից կարդա՛ առակի համապատասխան նախադասությունը:



Վարդան Այգեկցի

## ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Առյուծը քնած էր: Հանկարծ մի մուկ բարձրացավ նրա մարմնի վրա: Առյուծն իսկույն զարթնեց և բռնեց մկանը: Մուկն սկսեց աղաչել առյուծին, որ իրեն բաց թողնի:

- Հզո՛ր առյուծ, բա՛ց թող ինձ, խնդրում եմ, մի օր այնպես կպատահի, որ ես էլ քեզ կօգնեմ:

- Մի սրա՛ն նայիր. դու ինչո՞վ կարող ես օգնել ինձ,- ասաց առյուծը:

Բայց բանի որ առյուծի տրամադրությունը շատ էր բարձր, բաց թողեց մկանը:

**առյուծ**  
**բարձրանալ**  
**զարթնել**  
**օգնել**  
**փորձել**  
**կրծել**



Մի օր այնպես պատահեց, որ առյուծն ընկավ ցանցի մեջ: Նա սկսեց մռնչալ, փորձում էր ցանցը կտրատել, բայց չէր կարողանում:

Մուկը հեռվից լսեց առյուծի մռնչյունը, մոտեցավ առյուծին, հետո կանչեց ուրիշ մկների: Հավաքվեցին մկները և սկսեցին ցանցը կրծել:



Այդպես առյուծն ազատվեց:



### Բառերի գանձատուփ

1. Գրի՛ր **իսկույն, զարթնել, ազատվել** բառերի հոմանիշները:
2. Առակի սկզբնամասում հոմանիշ բառերի մեկ զույգ գտիր:
3. Առակի առաջին երեք նախադասությունների մեջ հականիշ բառերի մեկ զույգ գտիր:
4. Ծարունակի՛ր շարքը՝ առյուծը մռնչում է, կատուն ....., հորթը ....., գառը ....., այծը ....., շունը ....., գայլը ....., արջը .....
5. **Կտրել** (մեկ անգամ) – կտրտել, կտրատել (կտրել մի քանի անգամ, տարբեր տեղերից): Կազմի՛ր հետևյալ բառերի համապատասխան զույգերը.

ա) թռչել, բ) ցատկել, գ) պատռել, դ) ծանկոտել:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Քո բառերով պատմի՛ր առակի բովանդակությունը:
2. Ինչի՞ մասին է առակը:
3. Մուկն ինչպե՞ս է դիմում առյուծին:
4. Առյուծը գազանների արքան է, իսկ արծի՞վը:
5. Առակում ինչպիսի՞ն է մուկը:



## Պատմությունների և հեքիաթների զամբյուղ

1. Առյուծի կամ մկան մասին ի՞նչ հեքիաթ կամ առակ ես կարդացել: Պատմի՛ր դրանցից մեկը:
2. Որևէ մեկին օգնե՞լ ես, ինչպե՞ս: Պատմի՛ր այդ մասին:
3. Քեզ օգնե՞լ են, երբ դրա կարիքն ես ունեցել: Պատմի՛ր:



Յուրի Սահակյան

## ՀԻՎԱՆԴ ԴԴՄԻ, ԿԱՂԱՄԲԻ ԵՎ ԲԺՇԿԻ ՄԱՍԻՆ

Դդումն ասաց.

- Լավ չեմ, Կաղամբ:

Ապրող չեմ ես, շա՛տ եմ հիվանդ:

Տես, մարմինս ո՞նց է դողում,

Ո՞նց է քրտինքն ինձ ողողում...

Կաղամբն էլ թե՛ գիտե՛մ, գիտե՛մ:

Ես բժիշկ եմ կանչել արդեն:

Իսկ մինչև որ ես գա հասնի,

Հոգամ պիտի ես քո մասին:

Դուռ-պատուհան պիտի խցկեմ,

Քեզ փաթաթեմ պիտի, ծածկեմ...

Մի լավ ապուր եփեմ հոնի,

Խմես, ջերմությունդ թողնի...

Ու Կաղամբը հանվեց մեկ-մեկ,

Ծակ ու ձեղքեր խցկեց մեկ-մեկ...

Հանում էր իր շորերն անթիվ,

Որ ընկերոջն իր փաթաթի:

Ծածկում էր ու հետն էլ հարցնում.

- Հը՛, Դդու՛մ ջան, հո չի՞ փչում...

Հը՛, Դդու՛մ ջան, հո չե՞ս մրսում...



դդում

հոգալ

ծեղք

խցկել



Ու մի գլուխ հանվում էր նա:  
 Ընկերոջն իր ծածկում էր նա.  
 - Ծոտո՛վ, շոտո՛վ կապաքինվի՛,  
 Հիվանդը իմ կլավանա՛...

Իսկ երբ բժիշկը վերջապես  
 Դուռը բացեց ու խուժեց ներս,  
 Մի կույտ տերև տեսավ միայն.  
 Ո՛չ մի կաղամբ, ո՛չ մի հիվանդ...  
 Կանչեց.

- Ու՛ր ես, հիվանդ Դդում...

Կանչեց.

- Ու՛ր ես, ընկե՛ր Կաղամբ:

Եկել եմ, որ հիվանդ բուժեմ.  
 Ոչ թե պահմտոցի խաղամ...  
 Ձայն չտվին, ու ձայն չեղավ,  
 Բժիշկը լուռ տնից ելավ,  
 Դուռը ծածկեց,  
 Բայլեց հեռու՝  
 Կասկածն ու վիշտը աչքերում:

### Հանելուկ

Արմատը հողում,  
 Գլուխը դրսում.  
 Հազար շոր հագած՝  
 Դողում է, մրսում:



### Բառերի գանձատուփ

1. Բառե՛ր գրիր, որոնց կազմում կրկնվող բաղաձայն լինի:  
 Նմուշ՝ դդում, աննման:
2. Գրի՛ր հիվանդ, գալ, ծածկել, հանվել և վիշտ բառերի հակա-  
 նիշները:

3. Գրի՛ր շոր, ապաքինվել, անթիվ, լուռ և վիշտ բառերի հոմանիշները:

4. Լրացրո՛ւ աղյուսակը: Յուրաքանչյուր սյունակում 5 բա՛ն գրիր:

միրգ	բանջարեղեն

5. -եղեն ածանցով առնվազն երեք բա՛ն գրիր:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Կաղամբն ու դդումն իրար ինչո՞վ են նման և ինչո՞վ՝ տարբեր:
2. Կաղամբն ինչպե՞ս էր ուզում բուժել դդումին:
3. Կաղամբը հոնի ապուրն ինչու՞ պիտի եփեր:
4. Բժիշկը եկավ ու ի՞նչ տեսավ:
5. Բժշկին ինչու՞ թվաց, թե իր հետ պահմտոցի են խաղում:
6. Կաղամբին և դդումին վերջում ի՞նչ պատահեց:



### Պատմությունների զամբյուղ

1. Կաղամբի և դդումի օգտակար ի՞նչ հատկություններ գիտես: Տեղեկություններ հավաքիր և պատմի՛ր դասընկերներիդ:
2. Կաղամբից և դդումից մայրիկդ կամ տատիկդ ի՞նչ են պատրաստում:
3. Ի՞նչ խաղեր ես սիրում խաղալ: Նկարագրի՛ր դրանցից մեկը:



Արեգի՛ Գիրունիկ, բանասարտեղծության մեզ գրված է՝ բժիշկը խուժեց ներս: Խաականում եմ, որ բժիշկը ներս է մտել: Ինչու՞ հետաքրքիր է բանասարտեղծն ինչու՞ հենց այդպես էլ չի ասել:

Իհարկե դու ճիշտ ես, խուժեց նշանակում է «ներս մտնել», ասիլայն ոչ թե դրսից հանգիստ ներս մտնել, այլ արագ թափով, վապեղով ներս մտնել: Իսկ երբ թափուն, զգուշ, աննկարելիորեն են ներս մտնում, ասում են սողակել:





## ՈՐՍՈՐԴԻ ՄԻՐՏԸ

Ջահել ժամանակս մի անգամ անվանի որսորդների հետ եկա այս կողմերը: Իրենք դարան մտան, ինձ ուղարկեցին որսը բշելու: Հենց այս կողմերով գնալիս ձյունը փոփ եկավ և գնաց դեպի ձորը: Այդ ձայնի վրա թփերի միջից մի կխտար դուրս պրծավ ու իմ շփոցից կանգնեց, հետ նայեց: Ես կրակեցի: Երբ կրակեցի, տեսա, որ ներքին ծնոտը կախ ընկավ: Այդպես ծնոտը կախված փախավ, կորավ:

**որսորդ  
կխտար  
ձագ  
մղկտալ  
առաջ  
փախչել  
խեղձ**

Հաջորդ տարվա ամառնամուտին կացինը գոտիկս խրեցի, հրացանը վիզս գցեցի, եկա, որ ընկած գերաններից տաշտ շինեմ:

Ձորում ընկած մի հաճարի ծառ կար: Կռացա և հենց կացնով խփեցի, թփերի միջից մի շատ նիհար կխտար դուրս պրծավ՝ հորթը հետևից: Կխտարի ներքին ծնոտը կախ ընկած էր: Ճանաչեցի իմ զոհին: ✓

Նայում եմ նրա ձագին, սիրոս մղկտում է. նի-  
հա՛ր, բարա՛կ: Հասկացա, որ իմ արածն  
է: Հասկացա, որ խեղձ մայրը ծնոտ  
չունի, որ արածի, կաթն անի ու  
իր հորթին կշտացնի... Ու այս  
կանաչ, այս առատ բնության  
մեջ երկուսն էլ ցամաքել-չորացել են...

Ասես դիտմամբ, ինձ տանջելու  
համար երկուսն էլ առաջս  
կանգնել ու չեն փախչում: Մայրը  
խեղձ-խեղձ նայում է ինձ, ու  
թվում է, թե ճանաչել է: Այնպես  
է թվում, թե սիրուն աչքերը  
արցունքով լցրած՝ նախա-  
տում է ինձ, թե՛ «Անխիղձ,



անասովա՛ծ մարդ, քեզ ի՞նչ էի արել, որ իմ անմեղ ձագուկին էս օրը գցեցիր...»:

Նայում եմ, նայում, ու սիրտս լցվում է:

Հետո ձայն տվեցի, որ հեռանան առաջիցս ու ինձ չտանջեն իրենց տեսքով:

Այդ օրվանից մինչև այսօր գնդակ արձակած չկամ ո՛չ մայր կխտարի, ո՛չ էլ որևէ կենդանու ձագի վրա...

**արցունք  
այսօր  
արձակել**



### Իմաստունի գրույցը

#### ՊԱՏՄՎԱԾՔ

Պա կարդացիր մի հուպիչ պարամոթյուն որսորդի կյանքից: Ան նման չէ՛ ֆո շաժ ու կարդացած հեփիաթներին: Ինչու՞: Որովհետև հեփիաթներում պարավում է անիրական, անհավարարի դեպքերի մասին, կենդանիներն ու բույսերն էլ խոսում են մարդկանց նման: Իսկ այս արեղծագործության մեզ հեղինակը պարմում, նկարագրում է կյանքի մի դեպք, որ իրականում պարահեղ է որսորդի հեղ:

Կենդանիներն այստեղ մարդկանց նման չեն խոսում, այլ իրենց պահում են այնպես, ինչպես կյանքում է լինում: Այսպիսի արեղծագործությունները պարմվածք են կոչվում, որովհետև դրանց հեղինակները իրական դեպքեր են պարմում մարդկանց և կենդանիների կյանքից:



### Քառերի գանձատուփ

1. Դարան մտնել նշանակում է «թաքնվել՝ հակառակորդի վրա հարձակվելու համար»: Իսկ ի՞նչ են նշանակում **ա) փուլ գալ**, **բ) կախ ընկնել**, **գ) միտք անել**, **դ) սիրտը լցվել**, **ե) ձայն տալ**:
2. Գտի՛ր ջահել, անվանի, տանջել, սիրուն բառերի հոմանիշները:
3. Գտի՛ր ջահել, հաջորդ, բարակ, սիրուն, անմեղ բառերի հականիշները:
4. Տրված բառերից ո՞րը հոմանիշ չէ նախատել բառին. հանդիմանել, կշտամբել, մղկտալ:
5. Պատմվածքում ի՞նչ բառերով են բնութագրվում **ա) մարդը**, **բ) ձագուկը**, **գ) բնությունը**, **դ) մայր կխտարը**:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Տարվա ո՞ր եղանակին որսորդը վիրավորեց կխտարին:
2. Որսորդը ե՞րբ գնաց գերաններից տաշտ շինելու:
3. Մայր կխտարի աչքերում ի՞նչ կարդաց որսորդը:
4. Պատմվածքում ծառի մի տեսակի անուն կա: Ո՞րն է դա:



## Պատմությունների գամբյուղ

1. Կարդա՛ Վախթանգ Անանյանի որսորդական պատմվածքներից մեկը և պատմի՛ր:
2. Կենդանիների կյանքից զարմանալի ի՞նչ դեպքեր կարող ես պատմել ընկերներիդ: Հետաքրքրվի՛ր մեծերից:



## Իմաստունի խորհուրդները

Կենդանաբանական աշգում եղե՞լ ես (դրան ժողովուրդը ասում է **գապանանոց**): Պես մի աշգի է, որտեղ ապրում են փարբեր կենդանիներ: Այդ կենդանիներն իրենց փարփով պարմայնում և ուրախացնում են մարդկանց: Ասկայն պեթո՛վ է իմանաս, որ նրանք միայն դրա համար չեն բերվել գապանանոց: Այդ կենդանիների մեզ կան աշնայիսի գապաններ, թռչուններ, չկներ, օշեր ու մողեսներ, որոնք բնության մեզ փարբեր պարծառներով փշանում են: Պրա համար էլ մարդիկ հոգ են փանում նրանց մափին, ինձամ ում են ու պահպանում:

Գապանանոցի «բնակիչներին» չի կարելի ծաղրել, վախեցնել կամ վայրայնել, պեթո՛վ չէ՛ նաև կերակրել, ինչով պարտախի:



## Դադարի պահ

Դեմ դիմաց գրի՛ր նույն ածանցն ունեցող բառերը: Դրանք ընտրի՛ր ըստ գույների:

ավագուտ

գնդակ

գնորդ

բնություն

անմեղ

զգուշություն

անխիղճ

բախուտ

որսորդ

գետակ



## ԷՍ ՄԻ ԲՈՒՌ ԷԼ ԹՈՉՈՒՆՆԵՐԻՆ

Մենք մի փոքրիկ պատշգամբ ունենք, որ, ինչպես ասում են, մեզ բավարարում է: Մանավանդ ինձ ու իմ թոռնիկ Սոնային, որ երկուսը դեռ չի բոլորել: Գրկում եմ թոռնիկիս, նայում եմք հեռու-մոտիկ աշխարհին: Հատկապես թռչուններին: Օրվա բոլոր ժամերին մեր բաժին երկնքում աղավիհներ կան: Սոնայի բաժին ձաշը ձեռքներիս՝ դուրս ենք գալիս պատշգամբ: Տե՛ս, ավտոն գալիս է, որ ինքն ուտի, շո՛ւտ... Տե՛ս, այն շենքի պատուհանից երեխա է նայում, կանչի՛ր, թող ինքն էլ գա: Էս մի պատառը կե՛ր երկնքի համար: Էս մի պատառը կեր ա՛յ էն սարի համար: Էս մի պատառը կեր արևի համար...

**չարածծի  
անպայման  
սրբել  
անձրև**

Երբ սկսել էր հերթական պատառը ծամել, աղավիհները մոտեցան, ասես թևիկներով կպան Սոնայի թշիկներին ու սլացան խաղաղ, երանելի... Հրձվանքի ճիչից Սոնայի պատառն ընկավ բերանից: Վերցրի, դրեցի ձաղին: «Սա էլ թռչունների համար», - ասացի ես:

Մյուս օրը Սոնան իսկույն նկատեց, որ թռչունները ձաշակել են մեր դրած պատառը: Ուրախացավ: Հարցրեց. «Կերե՞լ են»: Ասացի. «Այո՛, կերել են ու քեզ շնորհակալություն հայտնել»:





Դրանից հետո Սոնան սկսեց չարածիություն անել: Ուտում էր, բայց վերջում անպայման մի պատառ թողնում էր ու խորամանկ ժպտում: Հազա՛ր ասա, թե չի կարելի: Ասում է՝ թռչունների համար է:

**պատշգամբ  
թռչուն  
հրձվանք  
ընտրիակալություն**

Ես գիտեմ մի հատիկ կորեկի գինը, ես գիտեմ մի պատառ հացի գինը: Հացը սրբություն է: Սոնան էլ մի բան է լավ հասկանում, որ մարդ իր ունեցածից բաժին պիտի հանի ուրիշներին: Եվ իր ունեցածից բաժին է հանում թռչուններին: Դե՛, թռչուններն էլ իրեն երկինք են նվիրում, արև են նվիրում, անձրև են նվիրում, փետուր են նվիրում...

Երկինքը տեսնում է, արևը տեսնում է, անձրևը տեսնում է... Իսկ փետուրներ հաճախ են լինում մեր պատշգամբում, որ թռչունները բերում են Սոնայի համար: Վայելում են Սոնայի թողած պատառն ու շարունակում իրենց ճախրը:



*Հավությունն արա. ջու՛րը գցիր. մարդիկ չիմանան, ձուկը ոտ կիմանա:*



**Բառերի գանձատուփ**

1. Տեքստից դու՛րս գրիր **և**-ով վերջացող բառերը: Երկուսն էլ ի՛նքդ ավելացրու:
2. **ա)** Սյունակներից ընտրի՛ր և զույգ-զույգ գրի՛ր հոմանիշ բառերը.

հրձվանք	անմիջապես
խկույն	կտոր
պատառ	ուրախություն
ճախր	լուսամուտ
պատուհան	թռիչք

**բ)** Տրված բառերից ընտրի՛ր երկուսը և գործածի՛ր նախադասությունների մեջ:

3. **Էս** և **են** բառերը ժողովրդական են. տեքստում գտի՛ր նրանց համարժեքները:

4. **ա)** Յուրաքանչյուր շարքից ընտրի՛ր և զույգ-զույգ գրի՛ր հականիշ բառերը.

**հաճախ**   **փոքրիկ**   **շնորհակալ**   **խաղաղ**   **ուրախանալ**  
**մեծ**   **տխրել**   **անհանգիստ**   **ապերախտ**   **հազվադեպ**

**բ)** Հականիշների մեկ զույգ ընտրիր և գործածի՛ր միևնույն նախադասության մեջ:

5. **Համեղ** բառով բառակապակցություննե՛ր կազմիր:

6. Կրկին կարդա՛ պատմվածքը և լրացրո՛ւ աղյուսակը:

<b>-ություն</b> ածանցով բառեր	<b>-իկ</b> ածանցով բառեր

7. **Տան տարբեր մասեր նշանակող բառե՛ր գրիր:**

**Նմուշ՝ պատշգամբ:**



### **Հարցերի և առաջադրանքների արկղիկ**

1. Ո՞վ է պատմում այս պատմությունը:
2. Սոնան քաղաքու՞մ, թե՞ գյուղում է ապրում: Ինչի՞ց իմացար:
3. Սոնան ե՞րբ որոշեց թռչուններին բաժին թողնել:
4. Թռչուններն ինչպե՞ս են շնորհակալություն հայտնում Սոնային:

5. Հացի մասին հեղինակն ի՞նչ կարծիք ունի: Համաձայն էս նրա հետ:

6. Քեզ համար ի՞նչն է սրբություն:

7. Ես գիտեմ մի հատիկ կորեկի գինը, ես գիտեմ մի պատառ հացի գինը նախադասության մեջ հեղինակը ի՞նչ գնի մասին է խոսում:

8. Եթե կարող ես, թռչունների կերակրասեղան պատրաստիր: Պատմի՛ր, թե ինչպե՛ս պատրաստեցիր:



### Պատմությունների զամբյուղ

1. Ի՞նչ ես անում թռչունների համար: Պատմի՛ր:

2. Գրի՛ր այն թռչունների անունները: Դրանցից մեկի մասին տեղեկություններ հավաքիր և պատմի՛ր:



3. Բարեգործության մասին ի՞նչ կարող ես պատմել:



Գտի՛ր այն նախադասությունը, որտեղ գործածվել է **ծաշակել** բառը: Կարդա՛ և որոշի՛ր, թե ի՞նչ է նշանակում:

### Տատիկի խորհուրդները

Վոգրիկս, դու ամեն օր լսում ես թռչունների ծվլոցը, նրանց փեռնում երկնեփում թռչելիս: Իսկ գիրե՞ս, թե մեր կյանքում որքա՞ն կարևոր դեր ունեն թռչունները: Նրանք անվում են վնասատու միզաբներով և աչքպես պաշտպանում ծառերն ու բույսերը:

Սիրի՛ր թռչուններին: Մի՛ վնասիր նրանց, մի՛ փանդիր նրանց բները: Զմուռնը երբ ցուրտ է, և թռչունները կեր դժվար են ձարում, հոգ փար նրանց մասին:



## 7 Գարունը այնքա՛ն ծաղիկ է վառել...



**Ա**րևն ավելի պայծառ ու ջերմ է, ձյունից ազատված հողը թեթևորեն շնչում է, օդի մեջ թարմ բույրեր կան, ականջ է շոյում թռչունների ճուվողյունը, հողից իրենց քնքուշ գլխիկներն են հանել առաջին ձնծաղիկները...

Գարուն է: Իսկ ո՞վ բերեց գարունը...



Հենրիկ Արթեյան

### ԳԱՐՈՒՆՆ Ո՞Վ Է ԲԵՐԵԼ

- Ա՛յ բչբչան առվակ,
- Ո՛ր ես վազում արագ,
- Դու՞ ես բերել, ասա՛,
- Ծաղկած գարունն այս տաք:
- Ես չեմ բերել գարուն,-
- Ձայն տվեց ժիր առուն,-
- Ծիծեռնակն է բերել
- Մեր աշխարհին գարուն:



Ծիծեռնակը ասաց.

- Ո՛չ, սարյակն է բերել...

Սարյակը ծվծվաց.

- Հովն է գարուն բուրում,

Նա է գարուն բերում:

Հովիկը սվսվաց.

- Ծառն է բերել գարուն,

Այգում և անտառում

Կանաչ լույս է վառել,

Կանաչ խարույկ դարձել...

Ծառն էլ մեղմիկ շրշաց.

- Խոտն է բերել գարուն.

Նա է թավշով կանաչ

Աշխարհը զարդարում:

Խոտն էլ կամաց խշշաց.

- Ձևձաղիկն է բերել

Վառ գարունն է, ինձ էլ:

Իսկ վարդենին բացված

Քնքուշ ծայլով ասաց.

-Ա՛յ բքբքան առվակ,

Ա՛յ լրաբեր սարյակ,

Ա՛յ զեփյուռիկ թեթև,

Հովի՛կ մետաքսաթև,

Ա՛յ թուփ, ա՛յ կանաչ ծառ,

Ամեն մեկդ մենակ

Գարուն հո չե՞ք բերի...

Մենք բուրբս ենք մեկտեղ

Բացել գարուն շքեղ.

Մենք բուրբս ենք բերում

Ողջ աշխարհին գարուն:

**սարյակ  
խարույկ  
զարդարել  
զեփյուռ**



Մի ծաղկով գարուն չի գա:

**Հանելուկներ**

Դաշտի գարդն է,

Գույնը՝ ալ,

Ամեն այտին՝

Մի սև խալ:



Հողից վերև

Փոքրիկ արև,

Վրան հազար

Սերմ ու տերև:



Ձյան սպիտակ օրորոցից,

Ինչպես մանուկն իր մոր ծոցից,

Ո՞ր ծաղիկն է մեզ հյուր գալիս,

Գարնան գալը իմաց տալիս:



## Բառերի գանձատուփ

- Գրի՛ր արագ, տաք, բերել, թեթև բառերի հականիշները:
- Բառերի այս շարքի մեջ ո՞րը հոմանիշ չէ ժիր բառին. աշխույժ, կայտառ, պայծառ, առույգ:
- ա) Զեփյուռը քամի է, բայց ինչպիսի՞ քամի:  
բ) Քամի նշանակող ուրիշ ի՞նչ բառ կա բանաստեղծության մեջ:
- Անտառն ու այգին ի՞նչ նմանություն և տարբերություն ունեն:
- Բանաստեղծության մեջ գտի՛ր այն բառը, որից առաջացել է առվակ-ը:
- Ընդգծի՛ր տրված բառերի արմատները.  
ա) հովիկ, բ) վարդենի, գ) ձնծաղիկ, դ) լրաբեր, ե) մետաքսաթև:
- Բանաստեղծության մեջ ինչպիսի՞ն են գարունը, առվակը, կանաչը, սարյակը, ծայնը, զեփյուռը:  
Նմուշ՝ ծառ - կանաչ ծառ:



Արեգի՛ Գիրունիկ, կարգապիս հաճախ վարմանայի բաների եմ հանդիպում: Ահա, ինչքեմ, կանաչ խարույկ:  
Կարծես թե կռահում եմ, նույնիսկ մտույթի փեմնում եմ: Պու ի՞նչ կասես:

Իտրափրփիր բան ասացիր, սիրելի՛ ինչուիկ. «Մտույթի փեմնում եմ»: Գորշի՛ր նկարեղ պարկերայրածր: Մարբեր գույնի ներկեր կօգրագործես, բայց ամենից շար՝ կանաչը, ճի՞շտ է: Նկարիչները պարկերներ արեղծելիս գույներ են օգրագործում, իսկ գրողները՝ բառեր: Նրանք նույնիսկ սովորական բառերն այնպես են կապում իրար, որ ոչ սովորական է արայվում: Այարեղ բանասարեղծը երկու սովորական բառ է գործածեղ կանաչ և խարույկ:



Կարող ես հարցնեղ. «Բայց չէ՞ որ կրակը կանաչ չի լինում»: Այո: Ասկայն գարնանը, երբ շուրջն ամեն ինչ՝ ծառերն ու խարերը, անարտներն ու այգիները, կանաչ են, կարծես հսկայական խարույկ լինի վառված: Բայց ոչ սովորական, այլ կանաչ խարույկ:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ի՞նչն է գարունը բերում: ԹՎարկի՛ր՝ նորից կարդալով բանաստեղծությունը:
2. Քո կարծիքով բանաստեղծության մեջ ինչու՞ են հիշատակվում հատկապես ձնծաղիկը և ծիծեռնակը:
3. Գարնանը ո՞ր գույնն է գերիշխում: Այդ գույնի անունը քանի՞ անգամ է գործածված բանաստեղծության մեջ:



### Պատմությունների զամբյուղ

1. Նկարագրի՛ր գարնան գալը: Նկարագրողի՛ր գրածը:
2. Հետաքրքիր մի տեղեկություն՝ն հաղորդիր սրանցից մեկի մասին. ա) ծիծեռնակ, բ) սարյակ, գ) վարդ, դ) ձնծաղիկ:



Ի՞նչ ընդհանուր բան կա **ծվծվալ** և **խշշալ** բառերի մեջ: Բանաստեղծության մեջ նման մի բառ էլ ի՛նքդ գտիր:



### ՄԱՅՐԻԿԻՍ ՏՈՒՆ

Գոհար Կարդանյան

Արշալույսն է վաղ արթնացել,  
 Պայծառ գույնով, բույրով լցվել:  
 Բույե չանցած՝ պիտի վազեմ,  
 Իմ մայրիկին փարվեմ, գրկեմ:  
 Լավ ու քնքուշ մա՛յր իմ բարի,  
 Ի՛նչ անուշ ես, ի՛նչ սիրելի,  
 Յուրահատուկ, անկրկնելի:  
 Որպես արև շողա՛, փայլի՛ր,  
 Թող քո հոգում գարուն լինի:

բույե  
հոգի

ԱՍՏՆԱՍՏՐ

Բարի խոսքը հարստությունից լավ է:





### Քառերի գանձատուփ

1. Գրի՛ր վաղ, արթնանալ, բույր, անուշ, արև քառերի հոմանիշները:
2. *Բազմերանգ* և *բազմագույն* քառերը համեմատելով՝ գրի՛ր գույն քառի հոմանիշը:
3. Շարունակի՛ր շարքը՝ *վայրկյան, րոպե* .....
4. *Արև, հողի* արմատներով երկուական բա՛ռ կազմիր:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Վերից վար կարդա՛ բանաստեղծության բոլոր տողերի առաջին տառերը: Ի՞նչ է գրված, ի՞նչ տոն է դա:
2. Փորձի՛ր մայրիկիդ անվան տառերով բանաստեղծություն գրել:
3. Մորը նվիրված ուրիշ բանաստեղծություն՝ գտիր և արտագրի՛ր տետրիդ մեջ:
4. Հայաստանում գարնանը նշվող ի՞նչ տոներ գիտես:
5. *Թող* բառով սկսվող երկու նախադասություն՝ գրիր:
6. Ծնորհավորական բացիկնե՛ր պատրաստիր մայրիկիդ, տատիկիդ և ուսուցչուհուդ համար:



### Պատմությունների զամբյուղ

1. Պատմի՛ր, թե ի՞նչ նվեր ես պատրաստել մայրիկի տոնի առթիվ:
2. «Եթե ես հրաշագործ լինեի» վերնագրով փոթրիկ շարադրություն՝ գրիր:



*Արշալույս* նշանակում է «արևածագ, լուսաբաց», իսկ ի՞նչ կնշանակի *վերջալույս*:



### Դադարի պահ

Բառաշղթայից առանձնացրո՛ւ և գրի՛ր քառերը: Այս բոլորը մեկ բառով ինչպե՞ս կանվանես:

*մ ա ր ա ճ ի ր ա ր ա ղ ա ն շ ա ն ա կ ա ն ջ օ ղ վ զ ն օ յ*





## ԲԱՐՂԻ

Երբ հողի տակից Բարդին գլուխը հանեց, գիշեր էր, լուսնյակ գիշեր: Լիալուսինը՝ ծննդանշան: Բարդին հայացքով փարվեց նրան. «Իմ մայրիկն է, արծաթալույս մայրիկը»: Հետո քնեց:

Երբ արթնացավ, նայեց վեր. մայրիկը չկար: Ծուրջը լույս էր, կանաչ: Նրա հետ խոսում էին, ծանոթանում, կանչում, բայց նա շարունակ երկինք էր նայում ու փնտրում մայրիկին:

Օրերն անցնում էին, իսկ Բարդին միայն ձգվում էր՝ իր ճյուղ-ձեռքերը միշտ վեր պարզած՝ դեպի իր մայրիկը:

Մի օր էլ՝ ամռան շոգ կեսօրին, հոգնած քնեց: Արթնացավ կեսգիշերին ու աչքերին չհավատաց. Լուսին մայրիկը շոյում էր իրեն: Նա այնքան մոտ էր իրեն: Ո՛չ, այդ Բարդին էր իր սիրով այդպես հասակ առել ու հասել նրան: Լուսինն իր արծաթը շաղեց նրա տերևներին:

Այդ օրվանից Բարդու տերևները դարձան արծաթափայլ, իսկ ինքը մնաց երկնասլաց:

### Հաներով

Մի մեծ վրձին է,  
Կանգնել է հողին,  
Քարեանը՝ կանաչ,  
Աշնանը՝ դեղին:

լուսնյակ  
հայացք  
արթնանալ  
ձգել  
կեսօր  
կեսգիշեր  
երկնասլաց



## Բառերի գանձատուփ

1. Հեքիաթից դու՛րս գրիր օրվա մասերի անունները և շարունակի՛ր:
2. Հեքիաթի առաջին հատվածում գտի՛ր հետևյալ բառերի հոմանիշները.  
ա) անդադար, անվերջ, բ) որոնել, գ) ձայն տալ, դ) զրուցել:
3. Փորձի՛ր բացատրել լիալուսին, կիսալուսին և նորալուսին բառերը:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Հեքիաթը պատմի՛ր քո բառերով:
2. Բարդու տերևներն ինչպե՞ս արծաթափայլ դարձան:
3. Նկարագրի՛ր բարդի ծառը, ապա նկարի՛ր:



## Պատմությունների և հեքիաթների գամբյուղ

1. Բարդու կամ մեկ այլ ծառի մասին փոքրիկ հեքիա՛թ հորինիր:
2. Նկարագրի՛ր քո տան մոտ աճող ծառը:



Աիրեյի՛ Աիրունիկ, գիրե՛ս գարնանը մեր փողոցը՝ բարդիների ծառային, լի է օդում ճախրող բավբախանա՛ն ափսոսակ բաներով, որ կարծես թիթեռնիկներ լինեն: Չե՛մ հասկանում, թե դրանք ինչե՛ր են:

Պրանգ, իհարկե, թիթեռնիկներ չեն, այլ բարդու սերմերն են, որ ընկնում են հողի մեզ ու ծյարչակում:




## Հանելուկ

Երկարավուն, ձվածն,  
Փայլուն, ինչպես ձվածեղ,  
Միսը փափուկ ու անուշ,  
Կորիզը համեղ, որպես նուշ:  
Իր անունը եթե տան,  
Պիտի հիշես Հայաստան:



**ԱՌ-ԱԶԻՆ ԾԻՐԱՆԵՆԻՆ**



Զրույցն ասում է, որ մեծ ջրհեղեղից հետո, երբ ցամաքն սկսեց ուրվագծվել Մասիսի կատարից, Նոյը տապանի այս անկյունը նայեց, այն անկյունը նայեց, չգտավ հետը վերցրած ծիրանի կորիզը: Տապանի ձեղքից էր ընկել թե ինչպես, ծիրանի կորիզը մնաց Մասիսի վրա, ծիլ տվեց և արմատակալելով դարձավ ծիրանենի: Այդ ժամանակ Նոյն արդեն իջնում էր **լեռան** լանջերով և հետ չէր էլ նայում: Ուշադրություն գրավելու համար ծիրանենին ծաղկեց դեռ չտերևակալած: Նոյը նկատեց, բայց հետ չդարձավ:

- Այս մեկն էլ թող **լեռան** կատարը ծաղկեցնի,- ասաց նա ու շարունակեց ճանապարհը:

Եվ բանի որ Մասիսի **կատարն** ավելի մոտ է **արևին**, ծիրանի պտուղն արևի **ճաճանչի**, ոսկու փայլ առավ:

Այդ ժամանակվանից մինչև Հայկ Նահապետի հայր Թորգոմը Մասիսի վրա ձյուն չէր նստում: Լեռան կատարին խշշացող աշխարհի միակ ծիրանուտից բուրումնավետ զեփյուռ էր փչում լանջերն ի վար: Թորգոմի զավակները հաճույքով վայելում էին ծիրանը:

Բայց մի անգամ հայոց ծառերի նահապետ սոսին Թորգոմի ականջին փսփսաց.

- Շուտով Մասիսի վրա ձյուն կնստի:

**ձեղք**  
**Հայկ Նահապետ**  
**խշշալ**  
**չէ**

- Ձյուն, դա ի՞նչ բան է:
- Ձյունը սպիտակ փաթիլներ դարձած անձրև է, որ ցրտեցնում է չորս կողմը:
- Ի՞նչ անեմ, թող գա էլ, գնա էլ:
- Չէ՛, անձրևի նման չէ, որ գա ու գնա.

ձյունը կարող է ամիսներով նստել իր իջած տեղը: Քանի ուշ չէ, փրկի՛ր քո ծիրանի այգին:

Թորգոմն սկսեց ծիրանի կորիզներ տնկել Արարատյան դաշտում և երկրի մյուս կողմերում: Եվ մինչ լեռան վրայի ծիրանենիները կցրտահարվեին, Մասիսի շուրջը քառասուն ծիրանախոց կար:

Այնուհետև ծիրանենիներն այնքան շատացան, որ Հայոց աշխարհն սկսեցին անվանել Ծիրանի երկիր:



### Իմաստունի օրատետրից

#### ԾԻՐԱՆԵՆԻ

Ծիրանենու հայրենիքը հայաստանն է:

Ծառի բարչրությունը հասնում է մինչև 15 մետրի, փերկները խողոր են, սրբաչև, սուր ծայրով: Չերմասեր է, բայց և դիմապկուն, աճում է նաև փարփարոտ հողերում: Երկարակյաց է: Խանդիպում են մինչև 150 փարեկան բերփարու ծիրանենիներ:

Չորս փարեկան ծառն արդեն պրտող է փայխա: Մեկ հասուն ծառը կարող է փայ 150-200, երբեմն նույնիսկ 800 կիլոգրամ բերք:

Ծիրանը պարունակում է խիստ օգտակար աննիզանյութեր: Ծիրանից պարբաարում են մորաքա, զեմ, հյութեր, չիր:



Աիրելի՛ Գիրունիկ, ի՞նչ դժվար բառ է կենսասիրություն: Բացարդիք ինչդրում եմ:

Ինչուիկ զան, գիրե՛ս, դժվար է թվում միայն առագին հայացքից: Բառը կազմվել է կենսասեր բառից՝ ություն ածանցով: Իմաս կասես՝ իսկ կենսասե՞ր-ը: Աս էլ իր հերթին կազմվել է կյանք և սիրել բաղադրիչներից: Կյանք բառը, իհարկե, որոշ փոփոխությունների է ենթարկվել: Օրինակ՝ մարչան բառի յա-ն աչրպես և է դարչել մարենադարան բառում:

Ներեմն կենսասիրություն նշանակում է «կյանք սիրելը»: Գեղեցիկ բառ է:





## Բառերի գանձատուփ

1. **Ձեփյուռ** նշանակում է «մեղմ, հաճելի քամի», իսկ **ի՞նչ են** նշանակում **փոթորիկ**-ը և **քուք**-ը:

2. Բացատրի՛ր **ծիրանենի** բառի կազմությունը: Ինչպե՞ս ենք անվանում **դեղձի**, **խնձորի**, **թզի**, **թթի**, **ընկույզի**, **սալորի** ծառերը:

3. **Արմատակալել** նշանակում է «արմատներ տալ, արմատ գցել»: Կռահի՛ր **տերևակալել** բառի իմաստը:

4. **Զրույցի մեջ** «ծիրանի այգի» նշանակող երկու բառ կա, գտի՛ր դրանք: Նախադասություններն արտագրի՛ր տետրիդ մեջ:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. **Զրույցը** պատմի՛ր քո բառերով:
2. **Զրույցի մեջ** հիշատակվում է մի ծառ, որն անվանում են **հայոց ծառերի նահապետ**: Ո՞ր ծառն է դա:



## Պատմությունների զամբյուղ

1. Ի՞նչ մեծ ջրհեղեղի մասին է խոսվում, ի՞նչ գիտես Նոյի տապանի մասին: Պատմի՛ր:

2. Ո՞վ է Հայկ Նահապետը: Կարդա՛ «Ոսկեփորիկ» հանրագիտարանը և պատմի՛ր նրա մասին:

## Իմաստունի խորհուրդները

Պարկերայնու՞մ ես, թե որքան անգույն և անհրապույր կլինե՞ր մեր շրջապատը, եթե չլինե՞ին ծառ ու ծաղիկ, թուփ ու խոտ:

Ծառերը ոչ միայն գեղեցկացնում են շրջապատը, այլև փաղարիկ ու հյութալի պտուղներ են պարգևում, ամռան շոգին հովանի են լինում՝ մեզ համար, մաքրում են օդը, որ մենք շնչում ենք:

Ինձամ՞տվ՞ վերաբերվիր ծառերին ու ծաղիկներին, մի՛ մնասիր ու մի՛ կոտրիր նրանց ճյուղերն ու ցողունները: Եթե կարող ես, մեծերի օգնությամբ բաժնու՞մ ծառ կամ ծաղիկներ փնկիր, զրի՛ր ու հոգ՛ Կար նրանց մասին:





## Ծիրանենի



Գարնան արևը պատրաստվում էր ամուսնանալ: Ծառերից մեկը պիտի դառնար նրա հարսնացուն: Արևն իր համն ու հոտը, գույնը պիտի դներ նրա պտուղների մեջ: Բոլոր ծառերը հարսնազգեստով էին ու սրտատրոփ սպասում էին, թե արևն ո՛ւմ կընտրի:

Արևի ոսկեփայլ աչքը սահեց ու կանգ առավ ծիրանենու վրա, իր սիրո նետերը մխրձեց նրա ծաղիկների մեջ: Ծիրանենին, ի պատասխան, ձերմակ թևերը վեր պարզած, սկսեց պարել, քամին էլ նրա հետ:

Հանկարծ քամու հետ մի չար սև ամպ կանգնեց արևի դեմ, իր սև ու նախանձոտ աչքերով նայեց հարսի մերկ թևերին ու ոտքերին: Ծիրանենին վախից սևացավ:

Արևը քշեց սև ամպին, փարվեց իր հարսնացուին, բայց այդպես էլ ծիրանենու բունն ու ձյուղերը սև մնացին:

սրտատրոփ  
մխրձել  
սևանալ  
ձյուղ



### Բառերի գանձատուփ

1. Գրի՛ր **չար** բառի հականիշը: Հականիշների զույգը գործածի՛ր միևնույն նախադասության մեջ:
2. Գրի՛ր **ձերմակ** բառի հոմանիշը: Հոմանիշ բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:
3. **-Ացու** ածանցով մեկ-երկու բա՛ռ գրի՛ր:

4. Գույն արմատով այլ բառեր կազմիր և լրացրո՛ւ աղյուսակը.

գույն-ը բառասկզբում	գույն-ը բառավերջում
գունավոր	ոսկեգույն

5. Ի՞նչ մասերից է կազմված **հարսնազգեստ** բառը: Ուրիշ ի՞նչ զգեստ գիտես:

6. Ծառերը **սրտատրոփ** սպասում էին արևին: ուրիշ ինչպե՞ս կարելի է սպասել:

7. Նորից կարդա՛ հեքիաթի վերջնամասը և ասա՛, թե ի՞նչ է նշանակում **փարվել** բառը:



Արեշի՛ Գիտունիկ, բացարձի՛ր, ինչդրո՞ւմ եմ, այս նախադասությունը. Արևն իր սիրտ նետերը մխրճեց ծիրանենու ծաղիկների մեջ:

Խաղարամյակներ առագ մարդիկ հավարում էին, որ երբ մեկը սիրահարվում է, անբեռանելի ոսկե նետերով խոցվում է նրա սիրտը: Ու, ինչուիկ, ինձդ էլ փեսամ կլինես այդպիսի գծանկար՝ նետով խոցված սիրտ:

Քանաարեղծներն էլ գործածում են այդ արտահայտությունը, որպեսզի ավելի պարկերամյոր դարչնեն իրենց խուճը:



**Հարցերի և առաջադրանքների արկղիկ**

1. Հեքիաթում ի՞նչ գույն ունեն արևի և չար ամպի աչքերը: Բո կարծիքով ինչպիսի՞ն էին ծիրանենու աչքերը:
2. Ի՞նչ ընդհանուր գծեր ունեն արևն ու ծիրանենին:
3. Արևն ինչպիսի՞ն է ձմռանը և գարնանը:
4. Արևը սիրում էր ծիրանենուն. ի՞նչ ես կարծում, իսկ ու՞մ էր սիրում լուսինը: Ինչու՞ ես այդպես մտածում:



**Պատմությունների զամբյուղ**

1. «Այգու ամենահամեստ ծառը» վերնագրով շարադրանք գրիր:
2. Պատմի՛ր, թե մայրիկդ կամ տատիկդ ծիրանից ի՞նչ են պատրաստում:



## Մեր երկրորդ տունը

**Բ**ողորովին չես կասկածում, չէ՞, թե ո՞րն է քո երկրորդ տունը:

Այո՛, դա քո հարազատ դպրոցն է, քո ընկերները, քո բարի խորհրդատու ուսուցիչները:







## ՆԱՐԵԿԸ ՏԻԵԶԵՐ-ՔՈՒՄ 1

Նարեկը ոչնչով չի տարբերվում ուրիշ տասը տարեկան տղաներից. միայն չափազանց երազկոտ է: Հիմա էլ, երբ ընկեր Պետրոսյանն առաջարկել է շարադրության թեման՝ «Աշունը Երևանում», և դասարանում բոլորը գլուխները կախել են տետրակների վրա, նա ընկել է երազանքի գիրկը և պատկերացնում է ֆուտբոլի աշխարհի առաջնության վերջին՝ ամենագլխավոր խաղը:

Մերոնք պարտվում են՝ 1:0, բայց ոչ ոք չի հուսահատվում, որովհետև կա Նարեկը: «Նարե՛կ, Նարե՛կ», - թնդում է մարզադաշտը, բոլորն իրեն են նայում:

Ինքը խաբս է տալիս միանգամից երկու պաշտպանի, դուրս է գալիս դարպասի դեմ դիմաց... Բոլորը շունչները պահում են: Հարված՝ գո՛լ:

Մարզադաշտը դղրդում է, հեռուստատեսության մեկնաբաններն աշխարհով մեկ գոռում են. «Գոլը խփեց Նարեկ Գրիգորյանը»: Իսկ թե ի՛նչ է կատարվում Երևանում, մանավանդ իրենց տանը, դժվար է պատկերացնել:

Ինքը նորից է ստանում գնդակը, դեպի նա են նետվում հակառակորդի հինգ ֆուտբոլիստներ: Նարեկը դուրս է պրծնում նրանց արանքից, բայց իրեն վայր են գցում:

«Վա՛յ,- հեռուստացույցի առաջ նստած՝ հուզվում է տատիկը,- թոռանս ոտքը կոտրեցին»:

Տուգանային հարված: Այն, իհարկե,



**ոչ որ  
հակառակորդ  
Գրիգորյան  
միանգամից  
խփել  
հաղթանակ**

ինքն է խփում: Հարված, և գնդակը արկի պես մխրձվում է ցանցի մեջ: Հաղթանակ: Նարեկին են հանձնում ոսկե գավաթը, ընկերները նրան բարձրացնում են ձեռքերի վրա: Իսկ Պելեն լրագրողներին ասում է. «Ես այլևս չեմ կարող կրել ֆուտբոլի արքա տիտղոսը. արքան այժմ Նարեկ Գրիգորյանն է»:

Երևանում, ինչ խոսք, նրան դիմավորում են հազարավոր մարդիկ՝ ծաղկեփնջեր, պաստառներ, որոնց վրա գրված է. «Կեցցե՛ս, Նարե՛կ»:



**Բառերի գանձատուփ**

1. Տրված բառերից առանձնացրո՛ւ վերջածանցները.

ա) երազկոտ, բ) դասարան, գ) երազանք, դ) գլխավոր, ե) գնդակ, զ) հազարավոր:

2. Մարզածների անուններ թվարկիր:

3. Ի՞նչ են ասում՝

ա) լողով զբաղվողին, բ) դահուկներով սահողին, գ) հեծանիվ բշողին, դ) բռունցքներով կռվող մարզիկին, ե) ծանրություն բարձրացնող մարզիկին:

4. Հեռուստատեսությամբ կամ ռադիոյով ֆուտբոլի խաղի մասին պատմող մարդուն ի՞նչ բառով են կոչում:



մխրձվել բառը հիշում եմ ծիրանե՛նու մասին հե՛վիաթից: Գիրե՛մ, որ նշանակում է «խրվել, մրնել»: Քայց չեմ հասկանում, թե ինչու է գրված «Գնդակն արկի պես մխրձվեց ցանցի մեջ»:

Նարեկի հարվածից գնդակը մեծ արագությամբ թռավ դեպի դարպասը և խփեց ցանցին: Այդ պարճառով հեղինակն այն նմանեցրել է արկին: Ձե՞ որ կրակեղիս արկը թնդանաթից դուրս է թռչում մեծ արագությամբ, հասնում է նշան բռնած առարկային, հարվածում նրան ու պայթում:





## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Նարեկը ո՞ր դասի ժամանակ երազանքի գիրկն ընկավ:
2. Ֆուտբոլի խաղը որտե՞ղ էր տեղի ունենում՝ Երևանում, թե՞ հակառակորդի դաշտում:
3. Նարեկն ինչո՞վ պարզևատրվեց:
4. Նարեկը ի՞նչ պատվավոր կոչման արժանացավ:
5. Երևանում Նարեկին ինչպե՞ս դիմավորեցին:



## Պատմությունների գամբյուղ

1. Նկարագրի՛ր քո սիրած մարզաձևը:
2. «Իմ երազանքը» վերնագրով մի շարադրա՛նք գրիր:



Սամվել Շահմուրադյան

## ՆԱՐԵԿԸ ՏԻԵՂԵՐ-ՔՈՒՄ 2

- Ինչու՞ շարադրությունդ չես գրում,- փսփսում է գերազանցիկ Լուսինեն,- երկու կստանաս:

- Քո գործը չէ,- ավստասանքով հառաչում է Նարեկը՝ նորից հայտնվելով դասարանում:

Չէ՛, ոչ թե դասարանում, այլ տիեզերքում: «Դառնամ տիեզերագնաց»,- երազում է Նարեկը: Թռիչքից առաջ վերջին րոպեներն են: «Բարի երթ և բարի վերադարձ հայրենի երկիր,- ասում է գեներալն ու ավելացնում,- Ձեզ տեսնեմ, պարո՛ն հրամանատար, ամբողջ աշխարհը Ձեզ է հետևելու...»: Իսկ տատը, որ չգիտես ինչպես հայտնվել է տիեզերանավի մոտ, սրբում է թաց աչքերը. «Նարե՛կ ջան, էդ տիեզերքում չմրսես, քեզ տա՛ք պահիր»:

Գեներալը բռնում է տատի ձեռքը և ասում. «Դուք հրաշալի մարդ եք դաստիարակել, մենք հպարտանում ենք Նարեկ Գրիգորյանով»:

**տիեզերք  
երթ  
վերադարձ  
րոպե  
դաստիարակել**



Սեղմում է կոճակը, և հրթիռը, բոց արձակելով, սլանում է դեպի տիեզերք:

«Արծի՛վ, արծի՛վ, ես սարյակն եմ, ինչպե՛ս եք ինձ խում,- հարցնում են Երկրից:- Ընդունե՛ք մեր ջերմ ողջույնը...»: Նայում է տիեզերանավի պատուհանից: ԻՆչ փոքր է երևում Երկիրն այստեղից: Ա՛յ քեզ հրաշք... Սա Սևանա լիճն է, իՆչ կապույտ, իՆչ գեղեցիկ է: Սա էլ Երևանը...

ԶըՆգ: Հնչեց դասամիջոցի զանգը, և Նարեկն ուշքի եկավ: Ընկեր Պետրոսյանը կանգնած էր կողքին:

- Սա իՆչ բան է,- զարմացած ասաց ուսուցչուհին,- Նարե՛կ, դու ոչինչ չես գրել:

- Ո՛նց գրեր, եթե ամբողջ դասին երազում էր,- մեջ ընկավ գերազանցիկ Լուսինեն:

- Նորի՛ց տիեզերքում էիր,- դժգոհ ասաց ուսուցչուհին:

- Այո՛, տիեզերքում էի, գիտե՛ք, թե այնտեղից իՆչ գեղեցիկ են Սևանն ու Երևանը:

Աշակերտները ծիծաղեցին:

- Չե՛ք հավատում,- նեղացավ Նարեկը,- շատ, շա՛տ գեղեցիկ են: Ազնիվ խոսք:

Երեխաները նորից ծիծաղեցին, նույնիսկ ընկեր Պետրոսյանը չդիմացավ ու քթի տակ ժպտաց:

հրթիռ  
արձակել  
ողջույն





## Բառերի գանձատուփ

1. Ի՞նչ արհեստի տեր մարդիկ են պատկերված նկարներում:



2. Բաղադրիչները միացնելով՝ բառե՛ր կազմիր.

- ա) *օդ+չու*, բ) *հաշիվ+պահ*, գ) *հող+գործ*, դ) *մանուկ+բույժ*,  
 ե) *անասուն+բույժ*, զ) *այգի+գործ*:

3. Ի՞նչ են ասում՝

- ա) գրադարանի աշխատողին, բ) ատամ բուժող բժշկին,  
 գ) հաղորդում վարողին, դ) ոսկե զարդեր պատրաստողին:

4. Տրված բառերից առանձնացրո՛ւ զինվորական նշանակող բառերը.

*ըմբշամարտիկ, գյուղապետ, գնդապետ, վիրաբույժ, սպա, որմնադիր, ճարտարապետ, զինվոր, քաղաքապետ, հրամանատար, քանդակագործ, մեքենավար, շարքային, գեներալ, դարբին:*



Արեւի՛ Ահրունիկ, ինչդու՞մ եմ, բացարդի՛ր երթ քառը:

Երթ նշանակում է «որևէ ուղղությամբ գնալը, շարժվելը, անցնելը»: Արանով կապմոված մի փանի բառեր կան, որոնք ծանոթ են քեզ: Օրինակ՝ երթևեկություն, որ նշանակում է «մեզ ենք անելի կամ մարդկանց գնալ-գալը»: Երթուղին մեզ ենք անելի, գնացի համար նախապես որոշված ճանապարհն է՝ հարուկ կանգառներով: Բաղաժում ամեն մի ավտոբուս շարժում է իր երթուղով: Կան նաև երթուղային քաժախներ: Իսկ քոնական օրերին շժերթներ են լինում, հեռուարացույցով երևի քեզ եւ քինվորականների շժերթը երևանի հանրապետության հրապարակում:

Քարի երթ արքահայրությունն էլ օգրագործում են երթ հրաժեղք են քալիս հեռու քեզ մեկնող մարդկանց: Ան հումանիշ է քարի ճանապարհին:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Նարեկն ինչո՞վ թռավ տիեզերք:
2. Թռիչքից առաջ տատիկն ի՞նչ խորհուրդ տվեց Նարեկին:
3. Երկրից տիեզերագնաց Նարեկին ինչպե՞ս են դիմում:
4. Պատմվածքը պատմի՞ր քո բառերով:
5. Պատմվածքի յուրաքանչյուր մասը վերնագրի՞ր:
6. Ամբողջ պատմությանը նոր վերնագի՞ր առաջարկիր: Հիմնավորի՞ր առաջարկը:
7. Նկարագրվող գործողություններին ովքե՞ր են մասնակցում:
8. Մասնագիտություն ցույց տվող բառերով 3 նախադասություն՝ նկարժիր:



### Դադարի պահ

Գրի՛ր հայերենի այբուբենը և տառերը համարակալի՛ր: Միացրու՝ 4, 11, 20, 1, 22, 15, 1, 32 թվերին համապատասխանող տառերը և բա՛ռ ստացիր: Այդ բառով են անվանում մարդու դեմքը պատկերող նկարը:



## Պատմությունների զամբյուղ

1. Պատմի՛ր որևէ մասնագիտության մասին:
2. Ուշադիր նայի՛ր նկարներին: Մի պատմություն հորինե՛ր և վերնագրի՛ր:



Ասա քո շրջանակն է:  
 Դու՞ ինչ ես ուղում դառնալ



## ՓՈՔՐԻԿ ՈՒՍՈՒՅՉՈՒՏԻՆ

Մարոն՝ փոքրիկ ուսուցչուհին,  
 Մի առանձին սենյակում  
 Նստեցրել է իրար կողքի  
 Աշակերտներ տասներկու:  
 Արջուկն ահա՝ գորշ ու բրդոտ,  
 Նստած դասն է մոթմոթում,  
 Նապաստակի՛ն տեսեք վախկոտ.  
 Տեղը խելոք չի նստում:



- Դասդ գիտե՛ս,- ընկեր Մարոն  
 Հարցնում է փիսիկին:

**Լացակումած** ելավ փիսուն.

- Ես... թուղթ ունեմ բժշկից...

- Ճիշտ չես ասում, հենց երեկ քեզ  
 Տեսել են մուկ որսալիս,

Դե, էլ դասի չգա՛ս այդպես,

Ծատ իզուր ես դու լալիս:

- Ծնի՛կ, ի՛նչ ես անվերջ հուշում,  
 Ծատախոս ես, անպիտան,

Քո պատճառով փիղն է տուժում,

Անվերջ հուշում ես նրան:

- Հերթը բոնն է, թութա՛կ, հիմա,

Տեսնենք՝ ի՛նչ ես արել դու:

Եվ թութակն է ելնում **վստահ**,

Ոգնու պատմածն է պատմում:

- Այդպես չգաս մյուս անգամ

Ու կրկնես ուրիշին,

Անգիր ես դու անում միայն,

Իմ այս խոսքը լա՛վ հիշիր:





Հերթը հասավ ծուլ կրիային,

Կրիան ելավ գլխիկոր...

- Անցյալ դասին դու չկայիր,

Սովորե՞լ ես դասն այսօր:

- Ո՞նց սովորեմ, ես գիրք չունեմ,

Աղվեսն էլ գիրք չի տալիս,

Իբր թե մեր հարևանն է,

Երբեք մեր տունն չի գալիս:

- Չեմ ընդունում ոչ մի պատճառ,

Սաստիկ դժգոհ եմ այսօր...

Գլուխները կախում են վար

Խաղալիքները բոլոր:



ընդունել  
լացակամած  
կրիա  
իբր  
երբեք



### Քառերի գանձատուփ

1. Բանաստեղծության հերոսների անունները գրի՛ր համապատասխան սյունակներում:

ընտանի կենդանիներ	վայրի կենդանիներ	թռչուններ

2. ա) Բանաստեղծության կապույտ գրված բառերը համապատասխանեցրու՝ իրենց իմաստներին.

- աչքերը արցունքով լցված, լաց լինելու պատրաստ
- գլուխը կախած, ամաչելով
- առանց կասկածելու, համարձակ:

բ) Այդ բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:

3. Կարդա՛ բանաստեղծության վերջին 4 տողը: Սաստիկ բառը փոխարինի՛ր մոտ իմաստ արտահայտող բառով:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Հեղինակն ի՞նչ բառերով է բնութագրում արջուկին, նապաստակին և կրիային: Յուրաքանչյուրի համար մեկ հատկանիշ էլ դու՛ նշիր:

2. Դասարանում քանի՞ աշակերտ կար: Դրանցից քանիսի՞ է անունն է տալիս հեղինակը: Թվարկի՛ր:

3. Մեկ անգամ էլ ուշադիր կարդա՛ քանաստեղծությունը և ասա՛, թե քո կարծիքով ո՞վ էր դասը սովորել:

4. ա) Լրացրո՛ւ նախադասությունները՝ պատասխանելով **ի՞նչ է անում** հարցին:

Նմուշ՝ Արջը մոթմոթում է:

Կատուն .....: Ծունը.....:

Ոչխարը .....: Այծը.....:

Առյուծը .....: Ճնճողուկը .....

բ) Կազմածդ նախադասությունների մեջ մեկ կամ երկու բա՛ռ ավելացրո՛ւ:

5. Արտագրի՛ր՝ լրացնելով բաց թողնված տառերը (մեկ կամ երկու տառ)։

Կր-աները ոսկ-ային զրահ կամ պատ-ան ունեն, որի շնորհիվ նրանց ոչ մի կեն-անու հետ չեն շփոթի: Կր-աներն ապրում են ինչպես ցամաքում, այնպես էլ ծովում: Ծովա-ին կր-աները լավ լողում են, ջրում արագաշարժ են, իսկ ցամաքում՝ դանդաղկոտ: Կր-աները սնվում են բույսերով, եր-եմն՝ ձկներով, բայց կարող են նա- մի քանի ամիս ոչինչ չուտել: Նրանք ապրում են հար-ր և ավելի տարիներ:



### Պատմությունների զամբյուղ

1. Քո դպրոցական կյանքից զվարճալի մի դե՛պք պատմիր:
2. Ո՞րն է քո սիրած խաղը: Նկարագրի՛ր:



### Դադարի պահ

Կարդա՛ այս բառերը: Դրանք ի՞նչ են ցույց տալիս:

թագավոր

թագուհի

նավակ

գինվոր

ձի

փիղ





## ԱՄԵՆԱՏԻՐԱԼԻՆ ԵՎ ԱՄԵՆԱՌԻՐԱՆՈՒՄ

- Երեխանե՛ր,- երրորդ դասարանցիներին դիմեց ուսուցչուհին,- եկեք որևէ տրամադրություն արտահայտող նախադասություններ կազմենք: Ո՞վ կարող է տխրություն արտահայտող մի նախադասություն կազմել:

- Ե՛ս,- ասաց Աշոտիկը ոտքի ելնելով:- *Իմ ատամը ցավում է:*

- Աշոտիկի ատամը ցավում է,- ասաց ուսուցչուհին:- Այո՛, տխուր բան է, ատամի ցավից երբեմն լաց են լինում: Է՞լ:

- Օրը մթնեց,- ասաց Միհրանը:

- Օրը մթնեց,- կրկնեց ուսուցչուհին,- բակից պետք է տուն գնալ, խաղալ այլևս չի կարելի: Այո՛, Միհրանի նախադասությունը տխրություն արտահայտող նախադասություն է:

- Սեդան ընկավ սառույցին,- ասաց Գոհարիկը:

- Երևի Սեդան ցավ զգաց,- ասաց ուսուցչուհին,- գուցե նաև լաց եղավ: Ուրի՞շ:

- Պատերազմը սկսվեց,- ասաց Հմայակը:

Ուսուցչուհին, որ մինչ այդ ժպտում էր, մռայլվեց:

- Պատերազմը սկսվեց,- ասաց Նա:- Ինքդ էլ չգիտես, թե ի՞նչ ասացիր, Հմայա՛կ: Դա ողջ աշխարհի, ողջ մարդկության ամենամեծ տխրությունն արտահայտող նախադասությունն է: Երբ պատերազմ է, բոլոր մարդիկ են տխրում:

Նա հառաչեց, բայց տեսնելով, թե ինչպես են սսկվել փոքրիկները, առույգ ձայնով ասաց.

- Իսկ այժմ եկեք ուրախություն արտահայտող նախադասություններ կազմենք:

- Ծիտիկը երգում է,- ասաց Գոհարիկը:

- Ծիտիկը երգում է, երևի գարուն է, գարնանը բոլոր թռչուններն են երգում: Այո՛, դա ուրախություն արտահայտող նախադասություն է: Ապրե՛ս, Գոհարի՛կ:

**երբեմն  
որև  
ողջ**

- *Մայրիկն ինձ ձեռնոց նվիրեց,- բացականչեց Կարոն:*  
 - *ԻՆչ ուրախություն, մայրիկը Կարոյին ձեռնոց է նվիրել:*  
 Երեխաները նույնիսկ ծափահարեցին՝ շնորհավորելով Կարոյին:

- *Հմայակ,- ասաց ուսուցչուհին,- դու մեզ շատ տխրեցրիր քո նախադասությամբ: Այժմ ուրախություն արտահայտող մի նախադասությունն ասա:*

Հմայակն իսկույն ոտքի ցատկեց և ուրախ բացականչեց.

- *Պատերազմն ավարտվե՛ց:*

- *Պատերազմն ավարտվե՛ց,- ականա բացականչեց ուսուցչուհին:- ԻՆչ ուրախություն, իՆչ բերկրանք, իՆչ երջանկություն... Լսում եք, երեխանե՛ր, պատերազմն ավարտվե՛ց: Դա ողջ աշխարհի, համայն մարդկության ամենա-ամենամեծ*



*ուրախություն արտահայտող նախադասությունն է: Դրանից ավելի մեծ ուրախություն մարդկությունը չունի:*



### **Բառերի գանձատուփ**

1. Պատմվածքի նախավերջին նախադասության մեջ գտի՛ր *ամբողջ բառի հոմանիշները:*

2. Վերընթերցի՛ր պատմվածքի վերջին հատվածը և փորձի՛ր ինքնուրույն բացատրել *բերկրանք* բառի իմաստը:

3. *Առույգ ձայն* նշանակում է «զվարթ ձայն»: Իսկ ի՞նչ է նշանակում *առույգ երեխա:*

4. *Տխոր* բառի հականիշը *ուրախ*-ն է: *Գրի՛ր տխրություն և տխրել* բառերի հականիշները:

5. «Տխոր» և «ուրախ» 3-ական բա՛ռ գրիր: Դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Պատմի՛ր պատմվածքը՝ ավելացնելով տխրություն և ուրախություն արտահայտող ուրիշ նախադասություններ:

2. Քո կարծիքով ծնողներիդ համար ո՞րը կլինի ամենաուրախ նախադասությունը: Իսկ քե՞զ համար:

3. Ինչու՞ *Պատերազմն սկսվեց* նախադասությունը ուսուցչուհին անվանեց աշխարհի և ամբողջ մարդկության համար ամենատխոր նախադասությունը:

4. ա) Գրի՛ր տրված բառերի համապատասխան ձևերը:

Նմուշ՝ օր – օրվա:

*Ժամ, շաբաթ, տարի, կեսօր, երեկ, առավոտ, գիշեր, ցերեկ:*

բ) Կազմածդ ձևերից երկուսը գործածի՛ր նախադասությունների մեջ:

5. *Ուրախ - ավելի ուրախ - ամենաուրախ*, գրի՛ր բարի, գեղեցիկ, մաքուր, պայծառ բառերի համապատասխան շարքերը:



### Պատմությունների զամբյուղ

1. Որևէ խաղում կամ մրցույթում երբևէ հաղթե՞լ ես: Ի՞նչ ես զգացել, պատմի՛ր:


2. Պատմի՛ր քո պարտություններից մեկի մասին:



### Դադարի պահ

Նկարներից ո՞րն է ավելորդ:

ԽԱՆՈՒՆ ԿՅՈՒՆ





## Աղավնու երգը

Ճերմակ, ճերմակ մի աղավնի  
Սիրուն կոցին՝ ձիթենու շյուղ,  
Սավառնում է, թռչում հեռու,  
Ազատ մտնում պալատ ու հյուղ:

Ու երգում է.- Թող ամեն տեղ  
Ծաղիկ բացվի, ծառ կանաչի:  
Խաղաղություն, խաղաղություն,  
Պատերազմը կորչի՛, կորչի՛:



շյուղ  
հյուղ



Խաղաղություն ն ամենքին:

Պայծառ արև, անամպ երկինք աշխարհի բոլոր մանուկներին:

Թող երկնքում միշտ թևածի խաղաղության աղավնին:



## Բառերի գանձատուփ

1. *Սիրուն* բառի մեկ կամ երկու հոմանիշ ասա:
  2. Բանաստեղծն աղավնուն բնութագրում է *ճերմակ* բառով: *Ինչպիսի՞* հարցին պատասխանող ուրիշ ի՞նչ բառեր կղենս *աղավնի* բառի կողքին:
  3. Փոքր, անշուք, տունը կոչվում է *խրճիթ*: Բանաստեղծության մեջ գտի՛ր այդ բառի հոմանիշը:
  4. ա) Բացատրի՛ր *սավառնել* բառը:  
բ) *Արծիվ, բզեզ, թռչուն, ինքնաթիռ, մոծակ, մեղու* բառերն օգտագործի՛ր *սավառնել* կամ *թչել* բառերի հետ և կազմի՛ր պարզ նախադասություններ:
- Նմուշ՝ Բազեն սավառնում է: Ճանձր թռչում է:

Քարև, գիրունիկ զան: Աշտօր բակում փղաներով հեղնում էին՝ հարևան շենքի փանիքի աղափնիներին: Շնկերներիցս մեկն աաս, որ աղափնիները մի արքայատուր հարկություն ունեն. նրանք հեղրությամբ գրնում են ձիշր ձանապարհը և առանց դժվարության կարող են վերադառնալ նույնիսկ հեռավոր վայրերից: Չարմայանք ու մի քիչ կաակածեցինք, թե ձիշր է: Ինչ կատես, արդշոք աշրպե՞ս է:



Աշո՛, հենց աշրպես է: Վրոպային աղափնիների մասին չե՞ս յեղ: Բանի որ աղափնիները կարողանում են ձիշր գրնել ձանապարհը,

հնում լուրերը րեղ հասցնելու համար մարդիկ վարժեցնում էին նրանց և օգրագործում իբրև «փոպրապարների»:

Կան նաև աշկախի աղափնիներ, որոնք կարողանում են թռչել գիշերով և ձանապարհը գրնել մթության մեղ: Արանք էլ խիար օգրակար էին լինում պարերապմների ժամանակ. անհրաժեշտ րեղեկությունները կարող էին րեղ հասցնել թշնամու համար աննկարելի չևով:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ծիծեռնակին գարնան ավետաբեր թռչուն են անվանում: Ի՞նչ ես կարծում, ինչու՞:
2. Բանաստեղծությունից կոահի՛ր, թե աղավնուն ի՞նչ են անվանում:
3. Ինչպե՞ս կպատկերեիր խաղաղությունը: Փորձի՛ր նկարել:
4. Բանաստեղծն ինչու՞ է ցանկանում, որ պատերազմ չլինի:



### Պատմությունների գամբյուղ

1. Նկարագրի՛ր, թե երեխաներն ինչպե՞ս են ապրում խաղաղ ժամանակ:
2. Աղավնու մասին որևէ պատմություն գիտե՞ս: Պատմի՛ր կամ ի՛նքդ հորինի՛ր:



## Իմաստունի օրատեսրից

### ԱՂԱՎՆԻ



Անում են՝ աղափնին լեզու չունի և կարողանում է միայն «դու՛ն, դու՛ն» կամ «վու՛, վու՛» անել: մի գեղեցիկ ավանդապարույց կա, որ պարմում է, թե ե՛րբ և ինչու՞ այրալես եղավ:

Երբ Նոյի փապանը կանգ է ստել Արարար լեռան վրա, Նոյը մի ագռավ է բաց թողել, որ աշխարհից լուր բերի իրեն: Ագռավը թռել ու չի վերադարձել: Ինչո՞ւ Նոյը մի աղափնի է բաց թողել, բայց աղափնույ ստագ արչակված ագռավը հարչակվել է նրա վրա և կծել աղափնու լեզուն: Չսայած դրան՝ աղափնին գրել է Նոյին լուր փալու հնարը՝ ծառից մի ճյուղ է կտրել և կրուցով բռնած՝ փարել է Նոյին: Սեանելով կանաչ Ղյուղը՝ Նոյը հասկացել է, որ երկրի վրա զուրն արդեն չամափել է:



## Դադարի պահ



Մաթեմատիկայի դասին ուսուցչուհին հարցնում է աշակերտին.

- 20 մարդ 8 ժամում հնձեցին մի ամբողջ արտ: Այդ նույն արտը քանի՞ ժամում կհնձեն 50 մարդ: Լավ մտածի՛ր, հետո պատասխանի՛ր:

Աշակերտը մտածում է և պատասխանում.

- Եթե քսան մարդ արդեն հնձել են արտը, ապա հիսուն հոգին այլևս չեն կարող հնձել այդ արտը:



Ուսուցչուհին աշակերտներին հանձնարարեց շարադրություն գրել «Եթե ես տնօրեն լինեի» թեմայով: Բոլոր աշակերտները սկսեցին գրել: Միայն Վահանն էր ձեռքերը ծալած նստել:

- Ի՞նչ է պատահել, Վահան՝, ինչու՞ չես գրում,- հարցրեց ուսուցչուհին:

- Ես քարտուղարուհու եմ սպասում,- պատասխանեց Վահանը:





## Մեր հայրենիքի հերոս պաշտպանները



9

Հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուր մարդու սրբազան պարտականությունն է. չէ՞ որ հայրենիքը մայրդ է, հարազատներդ, քո տունը, գյուղը կամ քաղաքը, քո երկրի սուրբ եկեղեցիները, այն բոլորը, որ միասին կոչում ենք հայրենի հող:

Հայրենիքը պաշտպանելիս են ծնվում իսկական հերոսները:





Հին Հայաստանում Արամ անունով մի արքա է եղել: Կովի ժամանակ նա գերի է ընկնում ասորիների թագավոր Նոսորին: Հաղթողն այսպիսի պայման է դնում.

- Դու տասն օր սոված կմնաս: Տասնմեկերորդ օրը նետաձգությամբ կմրցես ինձ հետ: Եթե հաղթես, ես քեզ կարձակեմ, և դու քո երկիր կգնաս արքային վայել ընծաներով:

Հաջորդ օրը Արամը պահանջեց, որ ասորիների սահմանի մոտ կանգնած հայկական բանակից բերեն իր ամենագեղեցիկ լանջապանակը:

Ասորի բանբերները շտապեցին հայկական բանակատեղի: Հայերը գլխի ընկան, որ իրենց արքան ինչ-որ բան է ակնարկում: Ամբողջ գիշեր նրանք բանբերներին պահեցին իրենց մոտ: Լուսադեմին ասորիները վերադարձան՝ բերելով արքայի լանջապանակը: Նրանք չգիտեին, որ լանջապանակի մեջ նրբաթերթ հաց է դրված:

Այն ժամանակ ոչ ոք չգիտեր լավաշի մասին, իսկ հակառակորդի մտքով չէր էլ անցնի, թե հայերը կարող են զրահի մեջ հաց թաքցնել:

Արամ արքան ստացավ իր զրահը, բայց ասաց, որ դա չէ իր ամենագեղեցիկ լանջապանակը: Հետո մեկ ուրիշը բերեցին. Արամն ասաց, որ դա էլ չէ: Եվ բանբերները ինն օր շարունակ գնում-գալիս էին՝ առանց իմանալու, որ ամեն օր հայկական նրբաթերթ մի հաց են հասցնում Արամ արքային:

**հաղթել  
մրցել  
բանբեր  
նրբաթերթ  
կորցնել  
թաքցնել**

Տասնմեկերորդ օրը թագավորները մենամարտեցին: Նոսորին թվում էր, թե տասն օր սոված մնալով՝ Արամը ուժասպառ եղած կլինի:

Սակայն Արամն իրեն կայտառ էր զգում: Հայկական հացը նրան ուժ էր տվել: Նա հաղթեց մրցության մեջ և պատվով տուն վերադարձավ:

Վերադարձավ ու հրաման արձակեց, որ այսուհետև Հայաստանում հաստ ու բազմաձև հացերից բացի միշտ նաև լավաշ թխեն:



**Հանելուկ**

Ծածկոցի պես փովում բարձին:  
Կաշում վառվող թոնրի պատին:  
Կարմրում է ու դուրս բերվում,  
Մեր սեղանի զարդն է դառնում:



Աիրելի՛ր **Գիրունիկ**  
**լանգապանակ** բառը ոչ մի  
անգամ չէի լսել, ոչ էլ կարդայել  
էի:

Խնդրում՝ եմ, բացատրի՛ր:  
**Խնչուիկ**



Աիրելի՛ր **Խնչուիկ**  
խոսարարանում՝ եմ, որ ինձն էլ այդ բառը  
չգիրելի: Բացատրությունը գրառ բառարանում:  
Գրված էր **լանգապանակ** - հնում պինձորների կուրծքի  
պաշարպանող մեղրադե հարմարանք, ցրահ:

Այժմ **լանգապանակ** չեն կրում: Նրան փոխարինելու է  
եկել ցրահարանկոնը՝ «մեղրադյա բանկոնը»:

**Բն ընկեր Գիրունիկ**



**Բառերի գանձատուփ**

1. Կարդա՛ր բառերի բացատրությունը: Դրանցից մեկը գործածի՛ր նախադասության մեջ.

**նետաձգություն** - նետերով կոպելը

**բանակատեղի** - զորքի դիրքավորվելու տեղը

**բանբեր** - լուր բերող, լրագրեր:

2. Ավանդազրույցի մեջ գտի՛ր այն բառերը, որոնք իմաստով համապատասխանում են կապույտ գրվածներին:

ա) Պատերազմի ժամանակ Արամ թագավորը գերի է ընկնում:

բ) Ասորի թագավորը խոստացավ, որ եթե Արամը հաղթի, նրան ազատ կթողնի և տուն կուղարկի թագավորին վայել նվերներով:

գ) Հայերը կռահեցին, որ իրենց թագավորն ինչ-որ բան է հասկացնում:

դ) Սակայն Արամն իրեն առույգ էր զգում:

3. ա) Բազմաձև նշանակում է «շատ ձևեր ունեցող»: Մեկ բառով ինչպե՞ս կասես՝ շատ հարկեր ունեցող, շատ տեսակներ ունեցող, շատ գույներ ունեցող:

բ) Գտածո բառերը գործածի՛ր առարկա ցույց տվող բառերի հետ: Նմուշ՝ բազմաձև հացեր:

4. Ո՞րն է հակառակորդ, լողորդ, վարորդ բառերի ընդհանուր ածանցը: Այդ ածանցով 3 բա՛ռ գրիր:

5. ա) Հակառակորդ նշանակում է «թշնամի», «խաղում կամ որևէ մարզաձևում մրցակից»: Բառը ավանդազրույցում ո՞ր իմաստով է գործածվել:

բ) Հակառակորդ բառը զույգ իմաստներով գործածի՛ր նախադասությունների մեջ:



## Իմաստունի օրատեսրից

### ԼԱՎԱԾ

Շավաղը մեր ազգային հացն է: Մյուս հացատեսակներից փարբերվում է նրանով, որ խմորե միզուկ չունի: Պրա համար էլ դյուրամարս է: Նաև հնարավոր է լինում շար երկար պահել: Խաչափանի որոշ վաչրերում լավաշն աշնանը թխում, չորացնում և պահում են ամբողջ չմեռվա համար: Ուրեղույ առագ բավական է լավաշի վրա զուր ցողել, մի փանի բույս պահել կտորի մեջ, և թարմացած հացը փարբարում է սեղանը:

Շավաշի այդ հարկությունը նրան անտիոխարինելի է դարչրել երկարարև ճամփորդությունների ժամանակ, բերդերում և փաղափներում թշնամուց փաշարվածների համար:





## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Այս պատմության մեջ քեզ ամենից շատ ի՞նչը դուր եկավ:
2. Ի՞նչ ես կարծում, Արամն ինչո՞վ հաղթեց Նոստրին: Պատասխանն ընտրի՛ր տրվածներից.

ա) զենքով, բ) հնարամտությամբ, գ) խարդախությամբ:

3. Ինչպե՞ս կվարվեիր, եթե Արամ արքայի փոխարեն դու լինեիր:
4. **Ամենագեղեցիկ** նշանակում է «բոլորից գեղեցիկ»: Նույն ձևով ինչպե՞ս կասես՝

ա) **ամենից խոր**, բ) **բոլորից ուշադիր**, գ) **բոլորից թեթև**:



## Պատմությունների զամբյուղ

1. Ուրիշ օրինակ գիտե՞ս, երբ մեկն իրենից ուժեղին հաղթել է խելքով: Պատմի՛ր:
2. Հայոց թագավորներից մեկի մասին փոքրիկ տեղեկություն պատրաստի՛ր:

## Տատիկի խորհուրդները



Աիրեչի՛ս, երբևէ մտածե՛լ ես թե որքա՛ն դժվար է արեղծվում հացը: Որքա՛ն աշխատանք համբերություն, սեր է պահանջվում մարդկանցից, մինչև որ ցորենի հարիկը բուրավեր ու համեղ հաց է դառնում:

Աիրով ու հարգանքով վերաբերվիր հացին, մի՛ փչացրու, մի՛ թափիր: Եթե գեղնին ընկած հաց ես րեանում, ուրփի րակ մի՛ թող, բարչրացրու՝ ու մի հարմար րեղում՝ դիր. թոչունները կուրեն այն:



## Դադարի պահ

Կարդա՛ և որոշի՛ր, թե յուրաքանչյուր շարքում ո՞ր բառն է ավելորդ և ինչու՛:

մատնաքաշ

բոքոն

ալյուր

լավաշ

ցորեն

բլիթ

գարի

ձավար

թոնիր

փուռ

ջեռոց

սառնարան



## ՏԻԳՐԱՆՆ ԱՎԱՐԱՅՐՈՒՄ

Հրաշք երագ տեսա.  
Իմ դեմ դաշտ էր մի լայն,  
Եվ դաշտից ինձ հասավ  
Կովի աղմուկ ու ծայն:

Ես մի քարի ելա,  
Որ շուրջս լավ տեսնեմ  
Եվ եթե պետք լինի,  
Ծուտ օգնության հասնեմ:

Ելա, և քիչ մնաց  
Հուզմունքը ինձ այրի,  
Դաշտն ինձ ծանոթ թվաց.  
Դա՛շտն էր Ավարայրի:

Քաջ Վարդանը, առած  
Հերոսների մի բուռ,  
Խոյանում էր առաջ  
Ըմբոստ, ահասարսուռ:

Բայց սպասե՛ք...կարծես  
**Օղակում են** նրան.  
Մի ավտոմատ առած՝  
Հասնեմ ես օգնության:

... Հասա և ի՞նչ տեսնեմ.  
Արյուն, արյան հեղե՛ղ...  
Եվ մեր զորքը, ավա՛ղ,  
**Ցան ու ցիր է եղել:**



Եվ Վարդանն էր խոցված  
Դեռ **մարտնչում** համառ...  
Վառվող մի ջահ էր նա  
Գիշերվա մեջ խավար:

... Էլ հապաղել պետք չէր.  
Ավտոմատս առած,  
Միրոսս վրեժով լի՝  
Ես խոյացա առաջ:



- Դարձե՛ք,- ձջում էի,-  
Հայե՛ր, ուշքի՛ եկեք,  
Քսաներորդ դարից  
Օգնության եմ եկել:

Ես ձեր թոռն եմ հպարտ,  
Թոռն եմ քաջ Վարդանի,  
Ես զավակն եմ անկարտ  
Մեր կոր Հայաստանի:

Հետո ես լռեցի,  
Ավտոմատս խոսեց...  
Եվ թշնամու վրա  
Կրակ ու բոց հոսեց:

Եվ ընկրկեց մեկեն  
Գոռ ոսոխը ահով,  
Խելակորույս փախավ  
Եկած ճանապարհով:

Եվ հիշեցի Դավթին  
Ու պատգամը նրա...  
Կանչեցի՝ էլ չգա՛ք  
Սրով դուք մեզ վրա:

Զու՛ր են ձեր ջանքերը,  
Խո՛րն է արմատը մեր,  
Ո՛չ դուք պիտի շահեք,  
Ո՛չ հաջորդները ձեր:

Ճշմարի՛տ եմ ասում,  
Հավատացե՛ք դուք ինձ,  
Զեզ հետո խոսում եմ ես  
Հեռու ապագայից:

Մե՛կ անգամ էլ լսեք,  
Աշխա՛րհն էլ թող լսի՛  
Հայը միշտ հայաբար  
Պիտի ապրի, խոսի:

Մինչ ես խրատ էի  
Կարդում որոտալից,  
Ցրված գորքը հայոց  
Շրջապատել էր ինձ:

Վարդանն առաջ եկավ  
- Ապրե՛ս,- ասաց,- տղա...  
Քո այդ զենքից էլ շատ  
Խո՛սքդ ազդեց վրաս:


Ապրի՛ր խաղաղությամբ  
Ու շատացրո՛ւ քարին,  
Եվ քո ոտքը երբեք  
Թող որ չառնի քարին:

... Ժպիտ փովեց դաշտին  
Ու ծովացավ ծալ-ծալ...  
Ես **արթնացա** քնից.  
Առավո՛տ էր պայծառ:

**ըմբոստ  
ընկրկել  
սարսուռ**

### ԱՍՏՁՎԱԾՔՆԵՐ

Խոսքը սրից գորեղ է:  
Լավ խոսքը հանգցնում է կրակը:





Արեւի՛ ինչուիկ  
 հիշու՛մ ես, «հայոց լեզու» բանասարտաբան  
 առիթով խոսեց ենթ վահան բառի և վահան անվան  
 մասին: Աշարեղ էլ գոռ բառը կա, որ նշանակում է  
 «ահեղ, ահավոր» և «հպարտ»: միաժամանակ տղայի  
 անուն էլ ունենի՞ Վոռ:

Ուրիշ անուններ էլ կան, որոնք առաջացել են ինչպիսի՞ հար-  
 ցին պարասխանող բառերից: Օրինակ՝ Պայծառ, համեար,  
 Այնիվ:

Գիրունիկ



### Բառերի գանձատուփ

1. Գոռ բառը ո՞ր իմաստով է գործածվել հետևյալ տողերում.  
 Եվ ընկրկեց մեկեն  
 Գոռ ոտխը ահով...
2. Ծովանալ, խոյանալ, խոցել, խելակորույս, ընկրկել բառերի  
 իմաստները գտի՛ր տրվածներից: Հարկ եղած դեպքում վերընթերցի՛ր  
 համապատասխան հատվածները:
  - ա) խելքը կորցրած, կատաղի
  - բ) ծովի պես մեծանալ, տարածվել
  - գ) խոյի նման վազել, առաջ սլանալ
  - դ) զենքով խոցել, վիրավորել
  - ե) ետ-ետ գնալ, նահանջել
3. ա) Հապաղել նշանակում է «դանդաղել»: Ի՞նչ է նշանակում  
 անհապաղ:  
 բ) Պարտվել նշանակում է «պարտություն կրել»: Ի՞նչ է  
 նշանակում անպարտ (կամ անպարտելի):
4. Բանաստեղծը արմատ բառը օգտագործել է «տոհմի, ազգի  
 հիմք» իմաստով: Արմատ բառի ուրիշ ի՞նչ իմաստ գիտես:
5. Երջապատել, ցրվել, կռվել, զարթնել բառերի հոմանիշները  
 ստեղծագործության մեջ կապույտ են գրված: Հոմանիշ բառերը գրի՛ր  
 զույգ-զույգ:
6. Հայաբար նշանակում է «հայի պես, հայի նման»: Այս բառի  
 ածանցով 3 բա՛ռ կազմիր:





Բանաստեղծության 11-րդ և 12-րդ քառատողերում հեղինակը **հակառակորդ** բառի երկու հոմանիշ է գործածել: Գտի՛ր դրանք և բացատրի՛ր, թե **հակառակորդ** բառն իմաստային ի՛նչ տարբերություն ունի:

### Աիրեյի՝ Գիրունիկ

Նավ է, որ աշօր էլեկտրոնային փոստ գոյություն ունի, և մենք կարող ենք նամակներ ուղարկել և սրանց բույները ընթացում: Ու չնայած հիմա դու հեռու ես բայց էլի կարող ես ինչ օգնել...

Կարգացի «Միգրանն Սփարայրում» արեղծագործությունը և մի հարց մութ մնաց:

Գրված է, որ Վարդանը մի բուռ հերոսների հետ եղավ կովի: Մարիկս էլ երբեմն ասում է. «Մի բուռ հայ ենք, համերաշխ սպրեմք»: Աիրեյին չպետք է մարդկանց բռով չափել:

Ինչդրո՞ւմ եմ, ժամանակ գրիր ու բացատրիր:

Ապաստում եմ քո պարասխանին: Նախապես շնորհակալ եմ:

Աիրով՝ քո ընկեր ինչուիկ



### Բարև, իմ սիրելի՝ բարեկամ

Իհարկե մարդկանց բռով չեն չափում: Բռով կարելի է չափել հողը, գուրը, ցորենը և այլն: Կորչի՛ր մի բուռ բրինձ կամ չափար լցնել ափսեի մեջ: Ի՞նչ ես կարծում՝ շա՛ր կլինի թե՞ փչ: Իհարկե՞ շար փչ: **Մի բուռ** արտահայտությունն էլ հենց «փչ» է նշանակում: Ուրեմն մի բուռ հերոսներ կամ մի բուռ հայեր ասելով հասկանում ենք «փչ, փոփրաթիվ հերոսներ կամ հայեր»: Նսած կլինես նաև մի մար արտահայտությունը, որը նշանակում է «փոփր»: Օրինակ՝ մի մար երեխա:

Իսկայ՞ եմ, որ պարասխանս փեղ բախարարեց: Եթե ուրիշ հարցեր ունենաս, գրի՛ր:

Գիրունիկ



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Լրացրո՛ւ աղյուսակը:

Բանաստեղծությունը կարդալիս			
ի՞նչ էի տեսնում	ի՞նչ ձայներ էի լսում	ի՞նչ էի զգում	ի՞նչ մտքեր էին ծնվում

2. Բանաստեղծությունը պատմի՛ր քո բառերով:

3. Տիգրանը ե՞րբ և ինչու՞ որոշեց մասնակցել կռվին:

4. Տիգրանը հիշեց Դավթի պատգամը և հետևեց նրա խորհրդին: Ո՞ր Դավթի մասին է խոսքը:

5. Ի՞նչ ես կարծում, ձի՞շտ էր թշնամու դեմ ոչ թե զենքով, այլ խոսքով դուրս գալու որոշումը: Ինչու՞:

6. Վարդան Մամիկոնյանը ինչու՞ գովեց Տիգրանին, ի՞նչը դուր եկավ նրան: Իսկ քե՞զ:

7. Ի՞նչ կանեիր, եթե Տիգրանի փոխարեն դու լինեիր:



## Իմաստունի օրատետրից

### ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Ծառ դարեր առաջ թղնամին ցանկանում էր հայերին արիպել, որ հրաժարվեն հայոց լեզվից և փոխեն իրենց կրոնը: Բայց հայ ժողովուրդը չենթարկվեց այդ պահանջին և պայծառի ելավ: Պայծառը գլխավորում էր հայոց սպարապետ վարդան մամիկոնյանը: Ամենակարևոր ճակատամարտը Կեղի ունեցավ Ավարայրի դաշտում: Գույամ թղնամին մեծաթիվ զորք ուներ, նույնիսկ կովոդ փղեր, բայց հայերը չվախեցան: Մեծ զորավար վարդան մամիկոնյանը ինձն էլ փազաբար կռվում էր և իր օրինակով ոգևորում պիկոններին: Ասկայն մարտի ժամանակ նա խոցվեց թղնամու նիպակներից և զոհվեց: Թղնամին էլ շատ պիկոններ ու զորավարներ կորցրեց: Անունելով, որ հայերը պարտասր են նույնիսկ մեռնելու, թղնամին հրաժարվեց իր չար մտադրությունից:

Հայ ժողովուրդը կարևոր հաղթանակ ցուցաբերեց և պահեց իր լեզուն ու հավատը, որոնց շնորհիվ սպրում է մինչև այսօր:





## Պատմությունների զամբյուղ

1. Պատկերացրո՛ւ, որ դու էլ այդպիսի մի երազ ես տեսնում: Նշանավոր մարդկանցից ու՞մ կուզեիր տեսնել, ի՞նչ կանեիր նրա համար կամ ի՞նչ կխնդրեիր նրանից: Գրի՛ր այդ մասին:

2. Ազգային ի՞նչ հերոսների գիտես: Նրանցից մեկի մասին տեղեկություններ հավաքիր և պատմի՛ր ընկերներիդ:



## Իմաստունի խորհուրդները

ժողովրդական առասպալի առած կա՝ *Ուժով բացված վարդը հուր չի ունենա*: փորձիր ուժով բացել վարդի թերթիկները ու կրեանես, որ վարդը կթռչի և իր անուշ հոտով փեղ հաճույժ չի պարճառի: Նյդպես էլ կյանքում է. ուժով միշտ չէ, որ կարելի է հազարության հասնել:

Քոնի ուժը չարիժ է ծնում: Իայ ժողովուրդը բռնություն չի սիրել: Եթե վեճ է վերցրել չեռփը, ապա իր հայրենիքը պաշտպանելու համար:

Ինչպես յուրաքանչյուր մարդ, այնպես էլ ժողովուրդները պետք է սովորեն հարգել իրար, հարցերը լուծել խաղաղ ճանապարհով: Նյդ դեպքում աշխարհում խաղաղություն կլինի, մարդիկ երգանիկ կապրեն:

Պու էլ, իմ փոքրիկ բարեկամ, հիշիր, ծիշր կլինի, որ նախփան բռունցփների դիմելը նախ խոսես դիմացինիդ հետ: Ինարավոր է, որ այդպես պարզեժ չեր անհաղրության պարճառները, հասկանաժ իրար ու հաղրվեժ:



Երվանդ Քոչար, *Վարդան Մամիկոնյանի արճանը Երևանում*:



### ՄԱՍՈՒՆՅՈՒ ԴԱՎԻԹ

Մռնչալով ելավ տեղից  
 Էն առյուծի առյուծ որդին,  
 Իր ձին հեծավ ու փոթորկեց,  
 Խաղաց, շողաց Թուր Կեծակին:

առյուծ  
 կենդանի  
 քաղցած

Անցավ քառսուն գոմշի կաշին,  
 Անցավ քառսուն քարերը ցած,  
 Միջից կտրեց ժանտ հրեշին,  
 Օխտը գազ էլ դենը գնաց:

- Կենդանի եմ, մին էլ արի՛,  
 Գոռաց Մելիք հորի տակից:  
 Դավիթ լսեց, շատ զարմացավ  
 Իրեն զարկից, Թուր Կեծակից...

- Մելի՛ք,- ասավ,- թա՛փ տուր մի քեզ:  
 Ու թափ տվավ Մելիքն իրեն,  
 Միջից եղավ ձիշտ երկու կես,  
 Մեկն ընկավ դեսն ու մյուսը դեն:

Էս որ տեսավ Մարա բանակ,  
 Ջուր կտրվեց ահ ու վախից:  
 Դավիթ կանչեց.- Մի՛ վախենաք,  
 Ականջ արեք հալա դեռ ինձ:

Դուք ռանչպար մարդիկ,- ասավ,-  
 Ջուրկ ու խավար, քաղցած ու մերկ:  
 Հազար ու մի կրակ ու ցավ,  
 Հազար ու մի հոգսեր ունեք:

Ի՛նչ եք առել նետ ու աղեղ,  
 Եկել թափել օտար դաշտեր:



Չէ՞ որ մենք էլ ունենք տուն-տեղ,  
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր ...

Դարձե՛ք եկած ճանապարհով,  
Ձեր հայրենի հողը Մարա,  
Բայց թե մին էլ զենք ու զոռով  
Վեր եք կացել դուք մեզ վրա,

Հորում լինեն քառսուն գազ խոր,  
Թե ջաղացի քարի տակին,  
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր,  
Սասմա Դավիթ, Թուր Կեծակին:

Էն ժամանակ աստված գիտի,  
Ով մեզանից կըլնի փոշման,  
Մե՛նք, որ կելնենք ահեղ մարտի,  
Թե՞ դուք, որ մեզ արիք դուշման...



### ԿԱՆՑՎԱԾՔՆԵՐ

Լավ է մեռնել կանգնած, քան ապրել ծնկաչոք:

Քաջը մեկ անգամ է մեռնում, վախկոտը՝ հազար:



Արեղի՝ Գիրունիկ, մաթեմատիկայի դասին միշտ  
փառասուն ենք ասում, իսկ այսրեղ փառսուն է, յոթ բառի  
փոխարեն՝ օխար: Ինչու՞ է այսպես:

Ինչուի՞կ զան աչս արեղծագործությունը մեր սպասին  
վիպերգի հիման վրա է գրվել: Որս համար էլ վարմանալի չէ,  
որ ժողովրդական բառեր կան: Այո, մենք դաս պարմելիս կամ  
շարագրություն գրելիս դրանք չենք օգտագործում: Ասկայն  
փողոցում, առկուր անելիս, ընկերների հետ խոսելիս երբեմն  
նման բառեր գործածում ենք:

Իովհաննես Թումանյանն այդպես է գրել, որ ժողովրդական  
խոսքը բնական հնչի և կեղծ չթվա: Նկարած կլինես, որ  
ժողովրդական հեգիարթներում էլ է այդպես:





## Բառերի գանձատուփ

1. Առաջին շարքում ժողովրդական բառերն են, իսկ երկրորդում՝ նրանց գրական համարժեքները: Հնտրի՛ր և դեմ դիմա՛ց գրիր:

ա) քառսուն, օխտը, մին, դես, դեն, էս, հալա, էսօր, փոշման ըլնել, էն.

բ) այսօր, դեռ, այս, յոթ, այն, մեկ, այս կողմ, քառասուն, այն կողմ, զոջայ:

2. Ժանտ բառի հոմանիշներն են դաժան, անգութ, անխիղճ: Այս բառերից երկուսը գործածի՛ր նախադասությունների մեջ:

3. Հոր նշանակում է «գետնի մեջ փորված նեղ և խոր փոս»: Ինչի՞ հոր գիտես:

4. Հետևյալ տողերում գտի՛ր հոմանիշ բառերը.

Էս որ տեսավ Մսրա բանակ,

Ջուր կտրվեց ահ ու վախից:

5. Վեր կենայ նշանակում է «ոտքի կանգնել», ինչպես նաև «արթնանալ» և «կռվի ելնել»: Այս տողերում բառը ո՞ր իմաստով է գործածվել.

Դարձե՛ք եկած ճանապարհով,

Ձեր հայրենի հողը Մսրա.

Բայց թե մին էլ զենք ու զոռով

Վեր եք կացել դուք մեզ վրա....

6. Առաջին շարքի բառերի և բառակապակցությունների իմաստները խառը տրված են երկրորդ շարքում: Դասավորի՛ր:

ականջ անել

մարտի ելնել

ահ ու վախ

հազար ու մի

տուն-տեղ

ջուր կտրել

կրակ ու ցավ

1. ընտանիք, 2. ունեցվածք

սարսափ

կռվի դուրս գալ, կռվել

սաստիկ վախենալ, սարսափել

փորձանք

լսել, ունկնդրել

բազմաթիվ, անչափ շատ

7. Ի՞նչ բառերով են բնութագրվում **ռանչպար** «հողագործ, գյուղացի» մարդիկ:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Լրացրո՛ւ աղյուսակը:

Վիպերգը կարդալիս			
Ի՞նչ էի տեսնում	Ի՞նչ ձայներ էի լսում	Ի՞նչ էի զգում	Ի՞նչ մտքեր էին ծնվում

2. Այս հատվածի սկզբնամասում Դավիթն ինչպե՞ս է կոչվում:

3. Ի՞նչ է ցույց տալիս կարդացածդ հատվածը: Ճիշտ պատասխանն ընտրի՛ր տրվածներից.

ա) Սասունցի Դավթի հնարամտությունը

բ) Դավթի խաղաղասիրությունը

գ) Դավթի ծարպկությունը

4. Ի՞նչ է կոչվում Սասունցի Դավթի թուրը:

5. Համեմատի՛ր Սասունցի Դավթին և Մելիքին:

6. Ի՞նչ նմանություններ կան Վարդան Մամիկոնյանի և Սասունցի Դավթի միջև:

7. Դավթի խոսքը պատմի՛ր քո բառերով: Ո՞րն էր նրա հիմնական ասելիքը:

8. Նկարագրի՛ր Սասունցի Դավթի արձանը: Ի՞նչ գիտես այդ արձանի մասին:



Երվանդ Բոչար, Սասունցի Դավթի արձանը Երևանում







Լանսեն Միքայելյան

### ԼՍԻՐ ԶԻՆՎՈՐԻՆ

Քայլում են նորից  
 Վեհ դրոշի տակ  
 Մեր զինվորների  
 Ծարքերը շիտակ:  
 Ծողում է սուրը  
 Ջինվորի ձեռքում,  
 Ջենքը լուում է,  
 Ջինվորն է երգում:  
 Լսի՛ր զինվորին,  
 Իմ փոքրի՛կ տղա,

Խաղաղ աշխարհում  
 Դու զվարթ խաղա՛:  
 Այս ուրախ օրը  
 Ջենքով է եկել,  
 Քաջ զինվորների  
 Երգով է եկել:  
 Երբ ծիծաղում ես  
 Դու, մանկի՛կ իմ ժիր,  
 Ծիծաղը փրկող  
 Ջինվորի՛ն հիշիր:

զինվոր  
զվարթ



### Բառերի գանձատուփ

1. **Քաջ** բառին մեկական հոմանիշ և հականի՛շ գրիր:
2. **Զվարթ** և **վեհ** բառերին մեկական հոմանի՛շ գրիր և գործածի՛ր նախադասությունների մեջ:
3. Բանաստեղծության մեջ գտի՛ր **փոքրիկ** բառի «զույգը». նրանք իրար ինչո՞վ են նման:
4. Բանաստեղծությունից դու՛րս գրիր **դրոշ**, **աշխարհ**, **օր**, **զինվոր**, **մանկիկ** բառերը՝ հատկանիշ ցույց տվող բառերի հետ:  
 Նմուշ՝ տղա - **փոքրիկ տղա**:
5. Ջենք նշանակող ի՞նչ բառ կա բանաստեղծության մեջ: Նման ուրիշ բառե՛ր ավելացրու:
6. Միքային երգը կոչվում է **սիրերգ**, խմբով կատարվող երգը՝ **խմբերգ**: Ի՞նչ է կոչվում այն **երգը**, որ կատարում են զինվորները շարքերով խրոխտ **քայլելիս**:
7. **Ժիրայր** անվան ո՞ր արմատը կա այս բանաստեղծության մեջ: Այն ի՞նչ է նշանակում:
8. Հայկական անուններ՝ ասա, որոնք կարող ես բացատրել:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Քո կարծիքով ո՞րն է մեր երկրի բանակի նպատակը:
2. Ի՞նչ ես հասկանում բանաստեղծության վերջին չորս տողը կարդալով:
3. Ե՞րբ և ինչպե՞ս են նշում Հայկական բանակի օրը:
4. Բանաստեղծությունից դու՞րս գրիր գործողությունն ցույց տվող բառերը և լրացրու՝ աղյուսակը:

-ել վերջավորությամբ	-ալ վերջավորությամբ



## Պատմությունների զամբյուղ

1. Տեղեկություններ հավաքիր և պատմի՛ր հայոց բանակի հաղթանակներից մեկի մասին:
2. Ի՞նչ գիտես հայկական բանակի մասին:



Մեր գինվորների շարքերը շիտակ արտահայտության մեջ ի՞նչ է նշանակում շիտակ բառը:



Պատվական Խաչատրյան

## ՆԱՄԱԿ

Նստեմ հիմա, միտքս լարեմ  
Եվ եղբորս նամակ գրեմ,  
Որ բանակում պապիս նման  
Բարձր պահի պատիվը տան,  
Պաշտպանի մեր հայրենիքը,  
Մեր արևը, մեր երկինքը,  
Որ տատիկս չապրի ահով,  
Զվշտանա մի նոր մահով.

եղբայր  
բարձր  
պաշտպանել  
օրորոց



Որ հայրիկս ուրախ-ուրախ  
 Հնձի գլա առավոտ վաղ,  
 Որ մայրիկս առանց ախի  
 Համով-հոտով լավաշ թխի,  
 Որ քույրիկս անուշ-անուշ  
 Օրորոցում քնի մուշ-մուշ,  
 Ես էլ սիրով թեքվեմ դասին  
 Ու մտածեմ «հիևգի» մասին:



### ԱՍՈՒՅԹ

Եթե ուզում ես խաղաղ ապրել,  
 պատրաստվի՛ր պատերազմի:



### Բառերի գանձատուփ

1. Պաշտպանում են հայրենիքը, իսկ ի՞նչն են պահպանում:
2. Բանաստեղծությունից դու՛րս գրիր ազգակցական կապ ցույց տվող բառերը:
3. Բանաստեղծությունից դու՛րս գրիր գծիկով գրվող բառերը: Դրանք ինչպե՞ս են կազմվել: Այդպիսի երկու բառ էլ դու՛ ավելացրու:
4. Զինվորական կոչում նշանակող ի՞նչ բառեր գիտես, թվարկի՛ր: Դրանցից մեկը գործածի՛ր նախադասության մեջ:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բանակում զինվորի լավ ծառայությունից ի՞նչն է կախված: Պատասխանի՛ր ըստ բանաստեղծության:
2. Քո կարծիքով ինչպիսի՞ն պիտի լինի հայ զինվորը:
3. Նամակ գրիր հայկական բանակում ծառայող զինվորին (ծանոթ կամ անծանոթ), նրան պատմի՛ր քո մասին:  
 Նամակիդ մի գեղեցիկ բանաստեղծություն՝ կցիր:

4. *եղբայր, եղբոր, եղբորը, եղբորից, եղբորով* շարքի օրինակով գրի՛ր *հայր* և *մայր* բառերի համապատասխան շարքերը:

5. *եղբայր* բառի բոլոր ձևերը գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ:



### Պատմությունների զամբյուղ

- 1. Պապիկդ կամ հայրիկդ ի՞նչ են պատմում բանակի մասին:
- 2. Հարազատներիցդ ո՞վ է ծառայում հայկական բանակում: Երան ինչպե՞ս ճանապարհեցիք:




1. Կրկին կարդա՛ բանաստեղծությունը և փորձի՛ր ասել, թե *վշտանալ* և *տխրել* բառերի մեջ իմաստային ի՞նչ տարբերություն ես տեսնում:

2. Որ *մայրիկս* առանց ախի *համով-հոտով լավաշ* թխի նախադասության մեջ *առանց ախի* կապակցությունն ի՞նչ է նշանակում:



### Դադարի պահ



ա) Ըստ ծաղկաթերթերի գույների դո՛ւրս գրիր տառերը և դրանցով բառե՛ր կազմիր:

բ) Քո կարծիքով ինչու՞ են հենց այս բառերն ընտրվել:

գ) Այս գույները քեզ ի՞նչ են հիշեցնում:





## Ամռան հմայքները



Շուտով այս ուսումնական տարին էլ կավարտվի, ու կգա ամառը՝ հանգստի, խաղի, արշավների, բնության գրկում լինելու երկար սպասված ժամանակը:



Անտանը շատերին ձգում է երկնագույն Սևանը:  
Սևանա լիճն անվանում են Հայաստանի մարգարիտ:



## ՍԵՎԱՆ

Պատվական Խաչատրյան

Հույսից ծնված դու լույս-աղբյուր՝  
Վանա լճի հարազատ քույր,  
Դու սարերում մեր երկնահաս  
Կապույտով լի հսկա մի թաս:  
Քեզ արծվաբույն լեռները մեր  
Ձեռքերի մեջ պահել են վեր,  
Պահել են քեզ արևի մոտ,  
Որ դու լինես միշտ արևոտ,  
Որ երկինքը հնամենի  
Քո կապույտից կապույտ առնի,  
Որ լույս դառնաս օջախներիս,  
Որ դառնաս մայր՝ աղբյուրներիս,  
Որոնց համար հոսու՛մ, հոսու՛մ  
Ու մոր պես քեզ չես ավստում,  
Քիչն առնում ես, շատը տալիս:  
Ա՛խ, այնպե՛ս է սիրտս լալիս.  
Պակասում ես, ախր, քիչ-քիչ,  
Կապուտաչյա իմ հրա՛շք լիճ:



արծվաբույն  
աղբյուր  
կապուտաչյա



### Քառերի գանձատուփ

1. Գրի՛ր *հսկա*, *լալ*, *հնամենի* բառերի հոմանիշները:
2. Գրի՛ր *հարազատ* և *պակասել* բառերի հականիշները: Դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:
3. Գրի՛ր *արծվաբույն* և *կապուտաչյա* բառերի արմատները:
4. *Լույս* և *սիրտ* արմատներով բառե՛ր կազմիր:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Բանաստեղծության մեջ ինչի՞ հետ է համեմատվում լիժը:
2. Մեկնաբանի՛ր «Վանա լճի հարազատ քույր արտահայտությունը»:
3. Բանաստեղծի սիրտն ինչու՞ է լալիս լճի համար:
4. Նկարագրի՛ր Սևանա լիժը՝ օգտագործելով բանաստեղծության բառերը՝ լույս, աղբյուր, լեռներ, երկինք, արև, կապուտաչյա, հրաշք:



## Պատմությունների գամբյուղ

1. Սևանա լճի մասին տեղեկություններ՝ հավաքիր և պատմի՛ր ընկերներին:
2. «Քեզ որևէ բան հայտնի՞ է Սևանա լճի փրկության ծրագրից»:



Արեգակը ոսկեշող  
 Մաղմղում է ոսկե շոգ,  
 Հողի մաշկը ձաքձքող  
 Երագում է ջուր ու ցող:  
 Փշատենին հարսնացած  
 Խոնարհում է վարսն արծաթ,  
 Ծաղիկները իր դեղին  
 Վերածվում են գինեղբի:  
 Ծոզն է շաչում կատաղի,  
 Եվ շոգասեր խաղողի  
 Կանաչ գույնն է չքանում,  
 Աչիկներն են շիկանում...

Փաթեթներով ամենուր  
 Ձմեռիկները պուճուր  
 Ծոգին խուժում են քաղաք,  
 Որպես անուշ պաղպաղակ...  
 Հրազդանն է նիհարում,  
 Ջրում ձուկն էլ չի խաղում,  
 Արարատն էլ մարմարյա  
 Կապտագույն է համարյա...

համարյա  
 մարմարյա  
 թանկանալ  
 խոնարհել  
 շոգ



Աիրելի՛ Գիրունիկ, բանասարեղծն իմ՝ սիրելի պաղպաղակի համար արգասավոր, բայց գեղեցիկ բառ է գործածել՝ **զմեռիկ**: մի՞ թե այդպիսի բառ կա:

Քարեկամն, բանասարեղծները արքահայրիչ խոսք արեղծելու նարարակով երբեմն բառեր են հորինում: Այսպես էլ պաղպաղակը **զմեռիկ** է դարձել, որովհետև ամառվա տապին նա չմեռավ ասոր, բայց հաճելի շունչն է բերում մեզ:

Գիրե՛ս, պաղպաղակի համար հայերեն մի բառ էլ կա **առնանուշ**, այսինքն՝ առն է և փաղցր:



### Բառերի գանձատուփ

1. **Վարս** նշանակում է «կնոջ երկար, չիյուսած մազ»: Ի՞նչ կնշանակի **ոսկեվարս** բառը:

2. **Չքանալ** և **անուշ** բառերին մեկական հոմանի՛շ գրիր: Դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:

3. **ա) Համեմատի՛ր ձաքել և ձաքթել** բառերը: Իմաստային ի՞նչ տարբերություն ունեն:

**բ) Բանաստեղծությունից նման մի բառ էլ ի՛նքդ գտիր և բացատրի՛ր:**

4. Որո՞նք են **փշատենի** և **մարմարյա** բառերի ածանցները: Այդ ածանցներով 3-ական բա՛ռ կազմիր:

5. **Պուճուր** բառը ժողովրդական խոսքում է գործածվում: Ո՞րն է նրա գրական համարժեքը:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ինչու՞ են արեգակի շողերը ոսկե համարվում, իսկ փշատենու ձյուղերը՝ արծաթյա:

2. Բացատրի՛ր **Հրազդանն է նիհարում** արտահայտությունը:

3. Ամռանը պաղպաղակից բացի ի՞նչ ես սիրում ուտել:



### Պատմությունների գամբյուղ

1. Նկարագրի՛ր ամառվա քո մեկ օրը:

2. «Գետափին» կամ «Լճի ափին» վերնագրով շարադրություն՝ գրիր:





Կառնոս եղիագարյան  
**ԼՎԱՑՎԵԼ ԶՅԱՆԿԱՅՈՂ ԾԱՂԻԿ**

Մարգագետնում բազմերանգ, գեղեցիկ ու բուրավետ ծաղիկների հետ ապրում էր լվացվել չցանկացող մի ծաղիկ:

Մի օր՝ ուշ գիշերին, նա զայրացած դիմում է իր թերթերում գիշերող Յողիկին.

- Ներկայությունդ տհաճություն է պատճառում ինձ. հեռացի՛ր:

- Ես առանց մայր Արևի չեմ կարող հեռանալ: Սպասի՛ր մինչև լուսաբաց,- աղաչում է Յողիկը:

- Ո՛չ, իսկույն հեռացի՛ր,- պնդում է լվացվել չսիրող ծաղիկը և ուժեղ թափահարում գլուխը: Յողիկը ցած է ընկնում:

Դժվար է կռահել, թե ի՛նչ կպատահեր խեղճ Յողիկի հետ, եթե այդ պահին հարևան Սիզախոտը ամուր չգրկեր նրան:

- Ինչպիսի՛ անմտություն,- հանդիմանում է Սիզախոտը,- քեզ թիթե՞ն ես երևակայում:

- Թռչելու մտադրություն երբեք չեմ ունեցել,- բացատրում է Յողիկը,- լվացվել չցանկացող ծաղիկն իրենից վանեց...

- Հա՛, որ այդպես է, այսուհետև ինձ մոտ կգիշերես, և թող փոշին մի լավ ծածկի նրա ակվա թերթերը:

Այդ օրվանից Յողիկը գիշերեց Սիզախոտի մոտ: Իսկ լվացվել չսիրող ծաղկի թերթերին

փոշու մի այնպիսի հաստ շերտ գոյացավ, որ նա հագիվ էր կարողանում աչքերը բացել: Մեղուները նրա մոտով անցնելիս երեսներն արհամարհանքով շրջում էին:

Զարմանալին այն է, որ լվացվել չցանկացող ծաղկի մտքով բոլորովին չէր անցնում, թե ինչու՛ են մեղուներն այդպես վարվում:

Մի անգամ էլ, երբ ժրաջան Մեղուն նրա մոտով թռչելիս երեսը

**թախանձել  
 երևակայել  
 արհամարհանք  
 սրբել**

կրկին շրջեց, լվացվել չսիրող ծաղիկը քնքշածայն դիմեց նրան.

- Համեցե՛ք, հյուրասիրվե՛ք ծաղկափոշով:

- Ծնորհակալ եմ,- քմծիծաղեց Մեղուն,- նախ վրադ կուտակված փոշու շերտը սրբի՛ր, որ տեսնեմ փու՛շ ես, թե՞ ծաղիկ...

Կարծես միանգամից ցրտաշունչ ձմեռ իջավ լվացվել չցանկացող ծաղկի վրա: Նա հոնգուր-հոնգուր լաց եղավ:

Բայց հարևան ծաղիկներն անգամ չնկատեցին, քանի որ նրա փոշեծածկ դեմքը գրեթե չէր երևում:

Հաջորդ օրը՝ վաղ այգաբացին, լվացվել չցանկացող ծաղիկը թախանձագին խնդրեց Սիզախոտի մոտ գիշերող Յողիկին, որ վերադառնա: Նա խոտացավ Յողիկին, որ ամեն առավոտ կլվացվի և կդառնա մարգագետնի գեղեցիկ ու բուրավետ ծաղիկներից մեկը:



### Բառերի գանձատուփ

1. Հեքիաթի սկզբում և վերջում **առավոտ** նշանակող երկու բառ կա: Գտի՛ր և դրանցից մեկը գործածի՛ր նախադասության մեջ:

2. Գտի՛ր **սրբել**, **զարմանալ**, **խնդրել**, **զայրանալ** բառերի հոմանիշները և գործածի՛ր նախադասությունների մեջ:

3. Այունակներից ընտրի՛ր և զույգերով գրի՛ր հոմանիշ բառերը.

բազմերանգ

ջանասեր

գեղեցիկ

բուրավետ

հոտավետ

պինդ

ժրաջան

չքնաղ

ամուր

գունագեղ

4. Գտի՛ր գիշեր, **հաստ**, **աշխատանք**, **ուժեղ** բառերի հականիշները:

5. Տրված բառերի ածանցներով 1-ական բա՛ն կազմիր.

ա) տհաճ, բ) անմիտ, գ) բուրավետ, դ) ուժեղ:

6. Որո՞նք են տրված բառերի արմատները.

ա) բազմերանգ, բ) ծաղկավոռչի, գ) ցրտաշունչ, դ) լուսաբաց:



### Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Ինչպիսի՞ն էին մարգագետնի ծաղիկները:

2. Յողիկը որտե՞ղ էր գիշերում:

3. Յողիկն ինչու՞ է ասում, թե ինքն առանց մայր Արևի չի կարող հեռանալ:

4. Մեղուներն ինչու՞ էին շրջանցում լվացվել չսիրող ծաղկին:

5. Լվացվել չսիրող ծաղիկը ե՞րբ խելքի եկավ:

6. Քո բառերով ամբողջացրո՞ւ նախադասությունները.

ա) Մի օր՝ ուշ գիշերին, ... բ) Հաջորդ օրը՝ այգաբացին, ...




Փորձի՛ր բացատրել *Կարծես միանգամից ցրտաշունչ ձմեռ հիշավ լվացվել չցանկացող ծաղկի վրա նախադասությունը:*



### Դադարի պահ

Կծիկներից դուրս եկող թելերին հետևելով՝ կարդա՛ լավ և վատ հատկանիշներ ցույց տվող բառերը:



### Պատմությունների զամբյուղ

1. Պատմի՛ր, թե ինչպե՛ս է սկսվում քո օրը:

2. Մեղրի օգտակար հատկությունների մասին ի՞նչ գիտես: Պատմի՛ր:

### 3. Կարդա՛ և փորձիր նկարագրել քո՛ տեսած ցողը:

#### Ինչպիսի՞ն է ցողը

Ամռանը, երբ արևի առաջին շողերի հետ անտառ ես մտնում, խոտերի ու թփերի վրա աղամանդներ են երևում: Այդ աղամանդները պսպղում են և արևի շողերի տակ տարբեր գույներ ստանում՝ դեղին, կարմիր, կապույտ... Երբ մոտենում ես և ուշադիր գննում, տեսնում ես, որ դրանք փոքրիկ շաղիկներն են, որ խոտի եռանկյունաձև տերևների մեջ հավաքված՝ շողշողում են արևից:



Այդ խոտի տերևը ներսից «բրդոտ» է ու ու թավիշի նման փափուկ: Եվ ցողի կաթիլները սահում են տերևի վրայով ու չեն թրջում այն:

Եթե անզգուշաբար պոկես տերևը՝ շաղը վրան, ապա փոքրիկ կաթիլը, թափանցիկ գնդիկի պես կգլորվի, ու չես էլ նկատի, թե ինչպես կանհետանա ցողունի վրայով:

Լև Տոլստոյ

#### Հանելուկներ

Լուսինն ուղարկեց արծաթյա թասով,  
Արևը խմեց առավոտ լուսով:

Թե՛ ցերմություն և թե՛ լույս է մեզ տալիս,  
Մի օր մեզնից վարձ ուզելու չի գալիս:



#### Տատիկի խորհուրդները



Իհիշի՛ր, որ փողոցից քոնն գալուց անմիջապես հեկոտ և ուրելուց առաջ միշտ պետք է լվանալ շեղքերը: Խարկավոր է նաև մափուր պահեղ սկանզները, ժամանակին կտրել եղունգները, առավորյան և երեկոյան արսամի խոզանակով և մածուկով մափրել արսամները, լվանալ դեմքը, աչքին՝ հոգ քանեղ մարմնի մափրության մասին: Ասկաչն մի մոռուցիր մափուր պահեղ նաև քո շրգապարը՝ քո սենյակը, դասարանը, բակը, փողոցը...



### ՎԱՐԴԱՎԱՆ

Վարդավառ էր.  
 Ով դուրս եկավ՝  
 Ջրեցի:  
 Չնայեցի փոքր ու մեծ.  
 Վերից վար  
 Ջուր արեցի:

Է՛լ շուն, կատու,  
 Է՛լ հավ ու ծիփ,  
 Է՛լ բլոճներ,  
 Նաև մարդ...

Մեծ տակառից  
 Փոքրիկ դուլով  
 Ջուր կրեցի  
 Անընդհատ:

Պապս ասաց.  
 - Ամո՛թ, ամո՛թ,  
 Ջուր չեմ ձարում ես հաճախ.  
 Ծառերն այնտեղ  
 Չորանում են,  
 Դու ջրում ես աջ ու ձախ:



- Պա՛պ,-ասացի,-  
 Մի՛ մոռացիր,  
 Բո ասածն եմ քեզ ասում.  
 «Վարդավառին  
 Թափված ջուրը  
 Երբեք իզուր  
 Չի հոսում.  
 Բերքն է հասնում,  
 Երգն է հասնում,  
 Եվ ծարավն է պակասում»:

Տե՛ս, ժպտո՞ւմ ես...  
 Գուցե, պապի՛կ,  
 Դու՛ էլ  
 Ջրվել ես ուզում:

անընդհատ  
 ծարավ  
 տակառ





## Բառերի գանձատուփ

1. Բանաստեղծությունից դու՛րս գրիր ընտանի կենդանիների, թռչունների և միջատների անունները: Շարունակի՛ր շարքերը:

ընտանի կենդանիներ	ընտանի թռչուններ	միջատներ

2. **Ջուր անել** նշանակում է «ջրել, թրջել»: Իսկ ի՞նչ է նշանակում **խաղ անել**, **դաս անել**, **գործ անել**, **աղոթք անել**:

3. Բանաստեղծության մեջ գտի՛ր՝

ա) **անդադար** և **երևի** բառերի հոմանիշները,

բ) **հիշել**, **միշտ** և **ավելանալ** բառերի հականիշները:

Քարև, Գիյունիկ, ես մի հարց ունեմ: Ինչդրու՞մ եմ, օգնի՛ր ինչ:



Վարդավառ բառը բանաստեղծության մեջ որպես նախադասության, ինչպես նաև փոշի առագին բառ մեծարարտով է գրված: Իսկ նախադասության մեջ այն ինչպե՞ս պիտի գրենք:

Ինչու՞իկ, Վարդավառ բառը որպես փոշի անուն գրվում է մեծարարտով: Իհի՛ր մարդկանց, գեպերի ու ծովերի, լեռների ու գաղտնավայրերի, գյուղերի ու փաղաֆների անունների նման փոշի անունները ևս միշտ գրվում են մեծարարտով:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Զո կարծիքով պապիկի դիտողությունը տեղի՞ն էր: Ճի՞շտ է արդյոք Վարդավառի օրը բոլորին և ամեն ինչ ջրելը:

2. Ուրիշ ի՞նչ տոներ գիտես: Մի քանի տոների անուննե՛ր գրիր:

3. Տակառի մեջ ջուր են պահում: Ինչի՞ մեջ են պահում՝

- ա) ցորենը կամ ալյուրը, բ) աշնանը այգիներում հավաքված միրգը,
- գ) խանութներում վաճառվող կոնֆետներն ու թխվածքաբլիթները,
- դ) մեծ քանակությամբ գինին:

Պատասխաններն ընտրի՛ր տրվածներից՝ **տուփ**, **արկղ**, **կարաս**, **պարկ**: Այդ բառերով նախադասություննե՛ր կազմիր:

Նմուշ՝ **Ցորենը պահում են պարկի մեջ:**

## Իմաստունի օրատեսրից

### ՎԱՐԴԱՎԱՌ

Վարդավառը շար հին ժամանակներից մեկ հասած փոն է: Մարդիկ այն փոնում են շոգ ամռանը:

Անցյալում փոնակապարտությունը հիմնականում փետի էր ունենում սարերում, գրերի ակունքների մոտ: Մարդիկ այդ օրն իրենց փետերը վարդափրոս էին վարդերով և ծառերի դալար ճյուղերով, միմյանց ծաղիկներ էին նվիրում, աղամկներ էին թույնում, զրախաղեր կալմակերպում և իրար վրա զուր ցողում: Այդպես կարծես անչրե էին ինքրում, փորչում կանխել հնարավոր երաչրը, որպեսի աշնանը առսար բերժ ու բարիժ ունենային:



### Պատմությունների զամբյուղ

1. Պատմիր, թե դու և ընկերներդ ի՞նչ եք անում Վարդավառին:
2. Նկարագրիր, թե ինչպե՛ս է նշվում քո ամենասիրած տոնը:



**Հավ ու ծիվ** նշանակում է «ընտանի թռչուններ»: Քո կարծիքով ի՞նչ են նշանակում՝ ա) **ծառ ու ծաղիկ**, բ) **հայր ու մայր**:



### Իմաստունի խորհուրդները

Իմ սիրելի փոքրիկ բարեկամ, Վարդավառը մեր ժողովրդի ամենասիրած փոներից է: Ու կարգապիր, որ մարդիկ զուրը ցողում էին միմյանց վրա: Կուսեցի՛ր, թե ինչու են այս բառերը գունավոր գրվել: Արանժ հուշում են այն պայմանների մասին, որոնց ամեն ով պետք է հետևի:

Մի փորչիր ուրժից գլուխ թրգել ում պարսախի. զուր ցողիր միայն նրանց վրա, ուժեր պարսասար են մասնակցելու խաղին և զրով ցողելու ուրիշներին: Վրանգավոր է հարկապես ընթացող մեժեմանների վարդրդներին զրելը. դա կարող է վթարի պարճատ դառնալ:

Իհի՛ր նաև, որ նույնիսկ Վարդավառի օրը զուրը չպետք է վարնել. այն ինսյողաբար պետք է օգրագործել ամեն օր:

Քո այս գիրքը սկսվում և ավարտվում է բանաստեղծություններով՝ «Հայրենիք» և «Հայաստան»:

Եթե միացնենք այդ վերնագրերը, կստանանք մի գեղեցիկ նախադասություն՝ **Իմ հայրենիքը Հայաստանն է:**



Էդվարդ Միլիտոնյան

## ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ՝ անուն,  
Ութ քաղցր հեցյուն,  
Ութ եղբայրների  
Համաստեղություն:

Մեկը լեռ է վեհ,  
Մեկը լիճ է լուրթ,  
Մեկը գետ է խենթ,  
Մեկը ձոր է մութ:

Մեկը երկինք է,  
Մեկը՝ վառ արեգ,  
Մեկը երգիչ է,  
Մեկը՝ արահետ:

Եվ բոլորն այնպես  
Ձուլված իրար հետ,  
Որ ոչ մի քամի,  
Ոչ մի թշնամի  
Չի կարողացել  
Այդ շղթան քանդել:

ՀԱՅԱՍՏԱՆ՝ անուն,  
Դու լույս ես անհուն,  
Որն սկիզբ չունի,  
Ու չի վերջանում:

շղթա  
վերջ





## Քառերի գանձատուփ

1. **Լեռ, գետ, .....** Շարունակի՛ր շարքը՝ գրելով անկենդան բնությունն անվանող բառեր: Մի քանիսը կարող ես գտնել բանաստեղծության մեջ:

2. Բանաստեղծության մեջ գտի՛ր բնության երևույթ անվանող բառ: Գրի՛ր բնության այլ երևույթների անուններ ևս:

3. Կարդա՛ բանաստեղծության վերջին երկու տողը: Այլ կերպ ինչպե՞ս կասես՝

ա) որն սկիզբ չունի, բ) չի վերջանում:

4. Գրի՛ր **անխելք, անվախ, անհամ, անբախտ, անփայլ, անօգուտ** բառերի հականիշները:

5. Վերընթերցի՛ր բանաստեղծությունը. գտի՛ր այն բառերը, որոնք նշանակում են՝

ա) բարձր, **հպարտ**, բ) բաց կապույտ, գ) **անհատակ**, շատ խորը:



## Հարցերի և առաջադրանքների արկղիկ

1. Թվարկի՛ր այն ութ «եղբայրներին», որոնք հեղինակի կարծիքով Հայաստանն են կազմում:

2. Հայաստանը բնութագրելու համար դու ութ ի՞նչ «եղբայրներ» կնշես: Նկարագրի՛ր քո Հայաստանը:

3. Մեր հայրենիքին նվիրված ուրիշ բանաստեղծություն՝ ընտրիր: Համեմատի՛ր քո սովորած բանաստեղծության հետ:



## Պատմությունների գամբյուղ

1. Ներկայացրու՛ մեր ժողովրդի պատմության մեջ հայտնի որևէ դեպք:

2. Մի նամա՛կ գրիր արտասահմանի քո հասակակիցներից մեկին և նրան պատմի՛ր Հայաստանի մասին:



**Արահեստ** նշանակում է «ոտքի բացած նեղ ճանապարհ»: **Ճանապարհ** նշանակող ուրիշ ի՞նչ բառեր կարող ես ասել:



## Իմաստունի օրատեսրից


### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրի պաշտոնական անունն է **հայասրանի հանրապետություն**: Այն գրելում է հարավային կովկասում: հայասրանի հարևաններն են Վրասրանը, Ադրբեզայնը, Իրանը, Թուրքիան: Մի ծանապարհով հայասրանին է միացած շեռնային Ղարաբաղը:

հայասրանի հանրապետությունն արեղծվել է 1991 թվականին: Մայրաքաղաքը **երևանն** է: Պետական լեզուն **հայերենն** է: Իռգևոր կենտրոնը **Աուրբ Էզմիաժինն** է:

հայասրանն ունի 10 մարզ՝ **Ճիրակ, շոտի, Մուսուղ, Արագածոտն, Կուրաշի, Աերարժունիի, Արմավիր, Արարաթ, Վայոց շոր, Այունիի**:

հայասրանի հանրապետության ամենաբարձր լեռը **Արագածն** է: Ամենամեծ լիճը **Աևանն** է: հայասրանի և Թուրքիայի սահմանով հոսում է **Արափս** գետը, որը մայր գետ, մայր **Արափս** են անվանում:



Աիրելի՛ Աիրունիկ  
Ճուրով սկսելու է արչակուրդը:  
Կարժում եմ, որ իմ հարցերով որոշ  
ժամանակ փեղ չեմ անհանգստացնի:



Այս նամակով ուզում եմ  
հարուկ շնորհակալություն  
հայրնել փեղ, դու ամբողջ  
քարվա ընթացքում ինչ շար  
օգնեցիր: Որու իսկական  
ընկեր ես:

Ինչուիկ

Ինչուիկ զան, շնորհա-  
կալ եմ նամակիդ համար:



Աիրեմ, որ արչակուր-  
դի ժամանակ էլ պիրի կարդաս:  
Իսկ այդ դեպքում հարցեր ան-  
պայման կառազանան: Արի՛ր, ես  
սիրով կպարասիանեմ:

Միշտ քո բարեկամ  
Աիրունիկ

## **Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ**

1. Ի՞նչ նոր բառեր սովորեցիր այս տարի: Դրանցից հինգը գրի՛ր և բացատրի՛ր:
2. Ի՞նչ հոմանիշներ սովորեցիր: Մի քանի զույգ գրի՛ր և բացատրի՛ր հոմանիշների իմաստային տարբերությունը:
3. Ո՞ր բանաստեղծությունը քեզ ամենից շատ դուր եկավ: Ինչու՞: Եթե անգիր գիտես, արտասանի՛ր:
4. Հեքիաթը պատմվածքից ինչպե՞ս ես տարբերում: Ո՞ր պատմվածքը կամ հեքիաթը քեզ ամենից շատ դուր եկավ: Ինչու՞:
5. Ի՞նչ է առակը: Ո՞ր առակը քեզ դուր եկավ: Ինչու՞: Հիմնավորի՛ր ասելիքդ, լսի՛ր նաև ընկերներիդ կարծիքը:
6. Ի՞նչ է ավանդությունը: Քո դասագրքի որևէ ավանդություն՝ պատմիր:
7. Ի՞նչ նոր բան սովորեցիր Իմաստունի օրատեստից:
8. Տատիկի և Իմաստունի ո՞ր խորհուրդներին ես հետևել այս տարվա ընթացքում:
9. Գիտունիկի պատասխաններից ո՞րն էր ամենահետաքրքիրը և օգտակարը քեզ համար:
10. Ի՞նչ հարցով կդիմեիր Գիտունիկին: Մի նամա՛կ գրիր նրան:
11. Ինչի՞ մասին կուզեիր լսել Իմաստունից:
12. Երկու առած-ասացվածք ասա: Մեկնաբանի՛ր դրանք:
13. Դասագրքիդ նյութերից բացի ի՞նչ ես կարդացել այս ուսումնական տարվա ընթացքում: Համառոտ պատմի՛ր այդ ստեղծագործություններից մեկը:
14. Ինչպե՞ս ես գնահատում քո աշխատանքը տարվա ընթացքում. որո՞նք են քո հաջողությունները և թերացումները:
15. Ի՞նչ ես որոշել կարդալ ամառային արձակուրդի ժամանակ:

## Իմ տեղեկատուն

**Մենիմաստ** են կոչվում այն բառերը, որոնք մեկ իմաստ են արտահայտում:

**ընթերցատեր** «ընթերցել՝ կարդալ սիրող»

**Բազմիմաստ** են կոչվում այն բառերը, որոնք մեկից ավելի իմաստներ են արտահայտում:

**մեծ**

1. «խոշոր» (մեծ բար),
2. «նշանավոր, անվանի» (մեծ գրող)

**Հոմանիշ** են կոչվում մոտ իմաստ արտահայտող բառերը:

**փայլել – շողալ**

**Հականիշ** են կոչվում հակառակ իմաստ արտահայտող բառերը:

**թեթև – ծանր**

**Բառի բաղադրիչներ** են կոչվում բառը կազմող մասերը՝ արմատը և ածանցը:

**համաշխարհային համ / աշխարհ / ային**

**Արմատ** է կոչվում բառի հիմնական իմաստն արտահայտող մասը:

**հյուր, հյուրանոց, հյուրասեր**

**Ածանց** է կոչվում այն մասնիկը, որը միանում է բառի սկզբից կամ վերջից և նոր իմաստ է տալիս բառին:

**դժգույն, գունավոր**

**Նախածանցը** բառի սկզբից ավելացող ածանցն է:

**անօգուտ**

**Վերջածանցը** բառի վերջից ավելացող ածանցն է:

**դասարան**

**Հոդակապը** բառի տարբեր մասերն իրար միացնող **ա** ձայնավորն է:

**գարդատուսի**

**Պարզ** են կոչվում այն բառերը, որոնք կազմված են միայն մեկ արմատից:

մարդ, օր, արև, ծառ, լույս

**Բարդ** են կոչվում այն բառերը, որոնք կազմված են մեկից ավելի արմատներից:

ծովափ (ծով+ափ)  
խաղաղաշտ  
(խաղ+ղաշտ)

**Ածանցավոր** են կոչվում այն բառերը, որոնք կազմված են արմատից և մեկ կամ ավելի ածանցներից:

անվախ (ան+վախ),  
քույրիկ (քույր+կ),  
դժգոհություն  
(դժ+գոհ+ություն)

**Գոյական** են կոչվում առարկա՝ անձ և իր ցույց տվող բառերը:

մարդ, Տիգրան, գիրք

**Ածական** են կոչվում առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը:

կարմիր, բարև

**Բայ** են կոչվում գործողություն ցույց տվող բառերը:

երագել, խաղալ

**Բառակապակցությունը** առարկա և հատկանիշ կամ գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերի կապակցություն է:

կապույտ երկինք  
ուշադիր կարդալ

**Նախադասությունը** ցույց է տալիս առարկան և նրա կատարած գործողությունը:

Ճանդուկը ծվում է:  
Պապիկը թերթ է  
կարդում:

**Պարզ համառոտ նախադասությունը** կազմված է միայն առարկա և գործողություն ցույց տվող բառերից:

Թռչունները երգում են:  
Տատիկը ժպտում է:

**Պարզ ընդարձակ նախադասությունը** կազմված է առարկա, գործողություն ցույց տվող բառերից և որևէ այլ բառից:

Թռչուններն ուրախ  
երգում են:  
Տատիկը մեղմ ժպտում է:  
Իմ տատիկը մեղմ  
ժպտում է:

## Ուղղագրական բառարան

աղբյուր	զաղտնիք	ընդհանուր
աղջիկ	զգվել	ընդունել
աղքատ	զդպլ	ընթերցել
Ամանոր	զոգ	ընկուզենի
ամբողջ	զոռզոռալ	ընձուղտ
այդպես	զորշ	
այսօր	զունավոր	թագավոր
անգամ		թանկանալ
անընդհատ	դադար	թաքցնել
անձրև	դառնալ, դարձել	թեթև
անվերջ	դաստիարակել	թերթ
աշխարհ	դարպաս	թոշուն
աշխույժ	դդում	թուղթ
առաջ	դեղձ	թունավոր
առաջին		
առյուծ	եղբայր	իբր
առջև	եղջերու	իջնել
ասացվածք	եղջյուր	
արդար	եղևնի	լվացք
արդեն	երբեմն	լուսավոր
արդյոք	երբեք	լուցկի
արթնանալ	երգ	
արծիվ	երդում	խախտել
արհամարհանք	երեսուն	խարույկ
արձակել	երթ	խեղդել
արձակուրդ	երջանիկ	խեղձ
արյուն	երրորդ	խեցգետին
արջ		խշշալ
արտասանել	զայրույթ	խոնարհ
արցունք	զարդարել	խրոխտ
արև	զարթնել	խցկել
	զգույշ	խփել
բախտ	զգուշություն	
բանալի	զեփյուռ	ծախսել
բարձ		ծածկել
բարձր	էակ	ծաղկել
բաց կապույտ		ծաղկեփունջ
բերք	ընդամենը	ծարավ
բոյն	ընդարձակ	ծոծրակ

կապուտաչա  
կարգ  
կարդալ  
կենդանի  
կեսգիշեր  
կեսօր  
կնձիթ  
կողք  
կորցնել  
կրիա  
կրծել  
կուրծք

հագնել  
հագուստ  
հակառակորդ  
հաղթանակ  
հաղթել  
հաղորդել  
համարյա  
համբոյր  
հայացք  
հանկարծակի  
հարձակում  
հարյուր  
հարևան  
հերթ  
հեքիաթ  
հիանալ  
հոգի  
հոգնել  
հոգս  
հպարտ  
հրթիռ  
հրձվանք

ձագ  
ձգել  
ձյուն

ձամփորդ  
ձանապարհ

ճեղք  
ճյուղ

մարգարիտ  
մարմարյա  
մեջ  
միանգամից  
մինչև  
միջև  
միրգ  
մրցել  
մուգ կարմիր

յուրաքանչյուր

նախշուն  
նրբաթերթ  
նուրբ

շաբաթ  
շագանակագույն  
շղթա  
շյուղ  
շնորհակալություն  
շնորհք  
շոգ

ողկոյց  
ողջ  
ողջույն  
ոչ ոք  
որդի  
որջ  
որսորդ  
որևէ

չէ  
չորրորդ

պաշտպանել  
պատշգամբ  
պարապմունք  
պողպատ

սաղարթ  
սարյակ  
ստեղծել  
սրբել  
սուրբ  
սևանալ

վագր  
վախկոտ  
վայրէջք  
վարդ  
վերադարձ  
վերելք  
վերջ  
վերք

տախտակ  
տարերք  
տարեցտարի  
տիեզերք  
տնօրեն

րոպե

ուղիղ  
ուղղել  
ուղևոր  
ուրբաթ

փախչել  
փարթամ  
փորձ  
փրփուր

քաղցած  
քաղցր  
քառասուն

օգնել  
օգուտ  
օդ  
օրորել  
օրորոց

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ԻՄ ԲԱՐՉՐԱՆՈՒՆ, ԻՄ ԲԱՂՅՐԱՆՈՒՆ</b> .....	3
Սուրեն Մուրադյան, <b>ՀԱՅՐԵՆԻԲ</b> .....	4
Անահիտ Պարսամյան, <b>ՄԻԶԱՆՈՏԻ ԵՐԱԶԸ</b> .....	7
Պատվական Խաչատրյան, <b>ՀԱՅՐԵՆԻԲ</b> .....	11
Լիպարիտ Սարգսյան, <b>ԲՈ ՏՈՒՆԸ</b> .....	13
<b>ԻՄ ԸՆՏԱՆԻԸ</b> .....	17
Մկրտիչ Կորյուն, <b>ՀԱՅՐԵՆԻԲՆ ՈՒ ՄԱՅՐԻԿԸ</b> .....	18
Վարդգես Բարսայան, <b>ԱՍՏՂԵՐ</b> .....	20
Էդմոնդո դե Ամիչիս, <b>ՀՈՐ ՆԱՄԱԿԸ</b> .....	22
<b>ԱՇՆԱՆ ԳՈՒՅՆԵՐԸ</b> .....	25
Հայրապետ Հայրապետյան, <b>ԵՍ ԱԵՌՈՒՆՆ ԵՄ ՍԻՐՈՒՄ</b> .....	26
Սիլվա Կապուտիկյան, <b>ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՅՏ</b> .....	29
Հայկ Խաչատրյան, <b>ՎԱԶ-ԽԱՂՈՂՆԵՆԻ</b> .....	31
Սիրանուշ Բովաթյան, <b>ՆՈՆԵՆԻ</b> .....	34
Գուրգեն Գաբրիելյան, <b>ՆՈՒՒ</b> .....	36
<b>ԼԵԶՈՒՆ ԶԵՆՔ Է, ԳԻՏԵԼԻԹԸ՝ ՈՒԺ</b> .....	39
Պատվական Խաչատրյան, <b>ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ</b> .....	40
<b>ՈՎ ՈՒՄ Է ՆՄԱՆ</b> (փոխադրությունը՝ Յուրի Սահակյանի).....	42
Ալեքսանդր Ծատուրյան, <b>ԿԱՐԴԱ՛</b> .....	47
Հենրիկ Սևան, <b>ԱՂՎԵՍՆ ՈՒ ՎԱԳՐԸ</b> .....	50
<b>ԱՐԾԱԹԵ ԹԻԹԵՈՒՆԻԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ</b> .....	54
Վահագն Դավթյան, <b>ՓԱԹՈՒՆԵՐԸ</b> .....	55
Վասիլի Բիրյուկով, <b>ԻՆՉ ԳՈՒՅՆ ՈՒՆԻ ՁՅՈՒՆԸ</b> .....	57
Նանսեն Միքայելյան, <b>ԵՂԵՎՆԻՆ</b> .....	60
<b>ՄԱՐԴՆ ԻՐ ԳՈՐԾՈՎ Է ՃԱՆԱԶՎՈՒՄ</b> .....	65
<b>ՅՈԹ ՓԱՅԼՈՒՆ ԱՍՏՂԵՐԸ</b> (հեղյակյան ժողովրդական հեքիաթ).....	66
Գուրգեն Գաբրիելյան, <b>ՈՒԺԻ ԱԿՈՒՆՔԸ</b> .....	69
Լեոնարդո դա Վինչի, <b>ՄԱՅՐԻՆ</b> .....	71
Իվան Կոչիլով, <b>ԿԱՐԱՊԸ, ԽԵՑԳԵՏԻՆԸ ԵՎ ԳԱՅԼԱՁՈՒԿԸ</b> .....	74
Եզոպոս, <b>ՃԱՄՓՈՐԴՆԵՐԸ</b> .....	77
Վարդան Այգեկցի, <b>ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՄՈՒԿԸ</b> .....	78
Յուրի Սահակյան, <b>ՇՎԱՆԴ ԴԴՄԻ, ԿԱՂԱՄԹԻ ԵՎ ԲԹԵԿԻ ՄԱՍԻՆ</b> .....	80

### Իմաստունի գրույցը

հանելուկ (7)
հեքիաթ (10)
առած-ասացվածքներ (14)
բանաստեղծություն (19)
նամակ (24)
ավանդություն (32)
առակ (51)
պատմվածք (84)
վիպերգ (134)

### Իմաստունի օրատեսրից

թոնիր (6)
Արարատյան դաշտ (31)
խաղող (33)
նուռ (36)
հայոց լեզու (42)
Ամանոր (61)
Հիսուսի ծնունդը (64)
ծիրանենի (98)
աղավնի (118)
լավաշ (122)
Ավարայրի ծակատամարտը (128)
Վարդավառ (149)
Հայաստանի Հանրապետություն (152)

### Իմաստունի խորհուրդները

մայրենի լեզու (49)
բնապահպանություն (64, 99)
բարեկրթություն (68, 149)



Վախթանգ Անանյան, <b>ՈՐՍՈՐԴԻ ՍԻՐՏԸ</b> .....	83
Հրաչյա Մաթևոսյան, <b>ԷՍ ՄԻ ԲՈՒՌ ԷԼ ԹՈՉՈՒՆՆԵՐԻՆ</b> .....	86
<b>ԳԱՐՈՒՆԸ ԱՅԼԶԱՆ ԾԱՂԻԿ Է ՎԱՌԵԼ</b> .....	90
Հենրիկ Արթենյան, <b>ԳԱՐՈՒՆՆ ՈՐ Է ԲԵՐԵԼ</b> .....	90
Գոհար Վարդանյան, <b>ՄԱՅՐԻԿԻՍ ՏՈՆԸ</b> .....	93
Սիրանուշ Բուլաթյան, <b>ԲԱՐԴԻ</b> .....	95
Հայկ Խաչատրյան, <b>ԱՌԱՑԻՆ ԾԻՐԱՆՆԵՐԻՆ</b> .....	97
Սիրանուշ Բուլաթյան, <b>ԾԻՐԱՆՆԵՐ</b> .....	100
<b>ՄԵՐ ԵՐԿՐՈՐԴ ՏՈՒՆԸ</b> .....	102
Սամվել Շահմուրադյան, <b>ՆԱՐԵԿԸ ՏԻԵԶԵՐ-ԶՈՒՄ</b>	
1 .....	103
2 .....	105
Սուրեն Մուրադյան, <b>ՓՈՒԲՐԻԿ ՌԵՍՈՒՑՉՈՒՎՈՒՄ</b> .....	110
Զորայր Խալափյան, <b>ԱՄԵՆԱՏԵՐԱՄԼԻՆ ԵՎ</b>	
<b>ԱՄԵՆԱՌԻՐԱՆՁԱՐԻՆ</b> .....	113
Արշավիր Դարբնի, <b>ԱՂԱՎՆՈՒ ԵՐԳԸ</b> .....	116
<b>ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՐՈՍ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ</b> .....	119
Հայկ Խաչատրյան, <b>ԱՍՔ ԼԱՎԱՑԻ ՄԱՍԻՆ</b> .....	120
Երվանդ Պետրոսյան, <b>ՏԻԳՐԱՆՆ ԱՎԱՐԱՅՐՈՒՄ</b> ...	124
Հովհաննես Թումանյան, <b>ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ</b> .....	130
Նանսեն Միքայելյան, <b>ԼՍԻՐ ԶԻՆՎՈՐԻՆ</b> .....	135
Պատվական Խաչատրյան, <b>ՆԱՄԱԿ</b> .....	136
<b>ԱՄՈՒՆ ՀՄԱՅՔՆԵՐԸ</b> .....	139
Պատվական Խաչատրյան, <b>ՍԵՎԱՆ</b> .....	140
Հենրիկ Արթենյան, <b>ԱՄԱՌ</b> .....	141
Կառլոս Եղիազարյան, <b>ԼՎԱՑՎԵԼ ԶՅԱՆԿԱՑՈՂ</b>	
<b>ԾԱՂԻԿԸ</b> .....	143
Լև Տոլստոյ, <b>Ինչպիսի՞ն է ցողը</b> .....	146
Երվանդ Պետրոսյան, <b>ՎԱՐԴԱՎԱՌ</b> .....	147
Էդվարդ Միլիտոնյան, <b>ՀԱՅԱՍՏԱՆ</b> .....	150
<b>Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ</b> .....	153
<b>ԻՄ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ</b> .....	154
<b>ՌԻՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ</b> .....	156

Կենդանիների պաշտպանություն (85)  
 խաղաղասիրություն, հանդուրժողականություն (129)

**Տասրկի խորհուրդները**

շրջակա միջավայրի պահպանություն (16)  
 թռչունների խնամք (89)  
 վերաբերմունք հացի նկատմամբ (123)  
 մաքրասիրություն (146)

**Ինչպիսիք և Գիտունիկի գրույցներն ու նամակները**

բառիմաստ և բառակազմություն (5, 8, 9, 21, 30, 48, 82, 98, 108, 121, 126)  
 ուղղագրություն (8, 35, 41, 126, 148)  
 պատկերավոր և արտահայտիչ խոսք (30, 37, 48, 92, 101, 104, 127, 142)  
 խոսակցական և գրական բառեր (131)  
 ծանաչողական (56, 96, 117)

**Հանելուկ, բառախաղ, սուտասելուկ**

Հեղինակներ՝ Մ. Կորյուն, Հ. Հայրապետյան, Ս. Մուրադյան, Ա. Ներսիսյան, Յու. Սահակյան, Յու. Ա. Սահակյան, Ռ. Սահակյան, Կ. Վարդունի:

**Դավիթ Մևանի Գյուրջիյան  
Նարինե Հակոբի Հեքեքյան**

**ՄԱՅՐԵՆԻ 3**

**Հանրակրթական դպրոցի  
3-րդ դասարանի դասագիրք**

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության  
նախարարության կողմից

Խմբագիր՝

Նկարիչ՝

Հանակարգչային ձևավորումը՝

Դ. Գյուրջիյան

Ս. Այվազյան

Ա. Օհանջանյանի

Ստորագրված է տպագրության՝ 15.07.2008:

Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպագրական 10 մանուլ:

Տպաքանակը՝ 5700:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում:

**ԷԴԻԹ ՊՐԻՆՏ**

Յրևան, Բումսոյանի 12  
հեռ.՝ (374 10) 520 848  
www.editprint.am  
info@editprint.am



**EDIT PRINT**

12 Bumsanyan str., Yerevan  
Tel.: (374 10) 520 848  
www.editprint.am  
info@editprint.am



## ԷԴԻՏ ՊՐԻՆՏ

Երևան, Թումանյան 12

հեռ.՝ (374 10) 520 848

[www.editprint.am](http://www.editprint.am)

[info@editprint.am](mailto:info@editprint.am)

